ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954

Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ

(77-րդ տարի) Թիվ-9 (1679) Սեպտեմբեր 2023

Բովանդակություն

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության
պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան
հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhtps://www.droshak.am
Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1- Առաջնորդող

Այլընտրանքը դավաճանված Հայաստանի կործանումն է (էջ 1-2)

2- Պատմաքաղաքական

Անի Մելքոնյան
Արցախի Հանրապետություն. անկախության և գոյատևման 32-ամյա ճանապարհ (էջ 3-7)

3- Աշխարհաքաղաքական

Սարգիս Սարգսյան
Նոր և հին խաղացողները Հարավային Կովկասում (էջ 8-18)

Լուսինե Մխիթարյան
Կենտրոնական Ասիան աշխարհաքաղաքական զարգացումների տիրույթում: Թյուրքական աշխարհի միավորման հնարավորությունները (էջ 19-22)

Նարե Գևորգյան
Իրանի՝ ԲՐԻՔՍ-ի դաշինքին անդամակցության հնարավոր ազդեցությունը (էջ 23-24)

4- Տարածաշրջանային

Լիանա Պետրոսյան
Տարածաշրջանային նոր զարգացումների պայմաններում ռուս-իրանական փոխգործակցության հեռանկարները. ընդհանուր ակնարկ (էջ 25-26)

5- Բնապահպանական

Արմեն Վարդանյան
Ջրային ռեսուրսները Հայաստանի և Արցախի անվտանգային համակարգում (էջ 27-28)

6 - Դեմքեր և դեպքեր

Աւօ Գաթրճեան
Հայ «Նեմեսիս»-ը, հետախոյզ առասպելն ու ազգային-պետական գործիչը - Հրաչ Փափազեան (մաս -2) (էջ 29-37)

7- Սփյուռք

Յակոբ Ճանպազեան
Մուսա լեռան պարպումը, Այնճար հայավանի ծնունդը (էջ 38-43)

8- Ընկերական Զրույցներ

Վրէժ-Արմէն
Ղեկավարը երկինքէն չ'իջներ (էջ 44)

Այլընտրանքը դավաճանված Հայաստանի կործանումն է

2023 թ. սեպտեմբերի 19-ին՝ ցերեկվա ժամը 1-ին, ադրբեջանական զինուժը լայնամասշտաբ ագրեսիա սկսեց Արցախի դեմ՝ կիրառելով մեծաթիվ ծանր տեխնիկա, հրետանի և օդուժ: Հերթական պատերազմը Ադրբեջանի իշխանությունները պաշտոնապես ներկայացրին որպես հակաահաբեկչական գործողություն: Նույն օրվա երեկոյան, մոտավորապես նույն ժամանակ, երբ ռազմական գործողությունները խիստ նվազել էին, իսկ թշնամուն չէր հաջողվել, բացի մի քանի պահակակետերի գրավումից, լուրջ առաջխաղացում արձանագրել, ադրբեջանական կողմը հայտարարեց, թե հնարավոր է դարձել հասնելու հակաահաբեկչական գործողությամբ սահմանված նպատակների իրականացմանը: Տպավորությունն այն էր, թե սրանով հերթական ագրեսիան կդադարեցվի, սակայն, ադրբեջանական զինուժին հաջողվեց տարբեր ուղղություններով ճեղքել հայկական պաշտպանությունը և առաջ ընթանալ: Հայտնի է, թե հաջորդ օրվա ճիշտ ցերեկվա ժամը 1-ին ինչ պայմաններով հնարավոր դարձավ հաստատել զինադադար:

Կարելի՞ է արդյոք ենթադրել, որ Ադրբեջանի իշխանություններն իրենց առջև առավելագույնին հասնելու նպատակը չէին դրել, այլ ցանկանում էին նախ՝ ոչնչացնել սահմանային գծով շարված հայկական կողմի ռադիոլոկացիոն սարքերը՝ հասնելու դիրքային նոր առավելությունների և հընթացս շոշափելու, ի դեմս խաղաղապահների, առաջին հերթին Ռուսաստանի և ապա արտաքին այլ ուժերի արձագանքը: Իհարկե, սա էլ չի նշանակում, թե թուրք-ադրբեջանական ուժը նախապես չէր հաշվել, թե ինչպիսին կլինի միջազգային հնարավոր արձագանքը: Իրավամբ էլ, նույն օրը ՄԱԿ-ից սկսած մինչև գերտերություններն ու այլ պետություններ և առանձին քաղաքական գործիչներ դատապարտող խոսքեր ասացին, պահանջեցին դադարեցնել ագրեսիան, սակայն Ադրբեջանը շարունակեց և ավարտին հասցրեց իր բարբարոսական ծրագիրը: Սա նշանակում է, որ նա համարժեքորեն էր գնահատում այդ բոլոր հայտարարությունները՝ լավ հասկանալով, որ ինչպես մինչև այժմ դատարկ դատապարտումներին ու զգուշացումներին ոչինչ չի հետևել, նույնն էլ լինելու է այս անգամ: Նույն այդ տերությունները բազմիցս բացահայտորեն հայտարարել են, որ Ադրբեջանից լուրջ ակնկալիքներ ունեն, մասնավորապես խոսքը վերաբերում է ռուսական էներգակիրներից հրաժարվելու պայմաններում դրանց մեկ մասը Ադրբեջանի հաշվին և Ադրբեջանի տարանցիկ ուղիներով լրացնելուն:

Հայաստանի և Ադրբեջանի միջև միջնորդի մենաշնորհին հավակնող Ռուսաստանը, հանուն Արցախի կամ Հայաստանի որևէ ցանկություն չի դրսևորում հարաբերությունները փչացնելու Ադրբեջանի, ինչպես նաև Թուրքիայի հետ, երբ վերջիններիս հետ շաղկապված է ճանապարհային, լոգիստիկ, իհարկե՝

Ռմբակոծվում է Ստեփանակերտը

քաղաքական զանազան կարևոր գործոններով: Սրանով հանդերձ, օրեր անց եղավ տեղեկատվական արտահոսք, փաստող, որ շահագրգիռ դաշնակից երկու տերությունները ձեռքերը լվացած և մի կողմ քաշված չեն եղել: Ինչպես հայտնեց ռուսաստանաբնակ արևելագետ Կարինե Գևորգյանը. «Փաշինյանը ստել է՝ ասելով, որ ռուսական խաղաղապահ զորախումբը չի միջամտում իրավիճակին: Ես կարող եմ կիսվել ներքին տեղեկություններով: Շոյգուն այցելել է Թեհրան, որտեղ ռուսական և իրանական կողմերն առաջարկել են լուծում, որը կարող է իրականացվել իրավիճակը փրկելու՝ անարյուն լուծման համար: Լուծումը շատ խոստումնալից էր, բայց դրա համար անհրաժեշտ էր Փաշինյանի համաձայնությունը՝ օգտագործելու Հայաստանի տարածքը որպես հենարան: Սակայն Փաշինյանը վախկոտորեն հրաժարվեց՝ ամբողջ աշխարհին հայտարարելով, որ Ռուսաստանը ոչինչ չի անում»: Ըստ Կարինե Գևորգյանի՝ Շոյգուի և Իրանի ՊՆ նախարարի հանդիպմանը երեք անգամ հրավիրվել է Հայաստանի ՊՆ նախարար Սուրեն Պապիկյանը, սակայն նա մերժել է: Այսպիսով՝ ևս մեկ անգամ ակնհայտ է դառնում, որ ամբողջովին Արևմուտքի ու թուրք-ադրբեջանական տանդեմի խամաճիկը դարձած Նիկոլ Փաշինյանը պատրաստ է փաստացի մասնակիցը դառնալ Արցախի վերջնական կործանմանն ու արցախահայության ցեղասպանությանը, բայց ունակ չէ կամ չի ցանկանում հրաժարվել Արևմուտքի ու ադրբեջանաթուրքական տանդեմի առջև ունեցած ծառայությունից:

Այս օրերին բացահայտվող տեղեկատվությունից հայտնի դարձավ նշանավոր ստախոսի ևս մեկ կեղծիքը. պարզվում է, որ Ռուսաստանը չի հրաժարվել Հայաստանին զենք վաճառելուց, հրաժարվողը եղել է Հայաստանը, որի իշխանությունը նույնիսկ գնված զենքը չի ներկրել Հայաստան: Հայաստանի ղեկավա-

ությունը նույն կերպ հրաժարվել ու հրաժարվում է ռազմական համագործակցությունից այն միակ երկրի հետ, որի շահերից է օբյեկտիվորեն բխում Հայաստանի տարածքային ամբողջականությունն ու սահմանների անձեռնմխելիությունը: Նիկոլ Փաշինյանը անգամ 44-օրյա ճակատագրական պատերազմի օրերին հրաժարվեց օգտվել իր դաշնակիցների օժանդակությունից, որովհետև դա լավ չէին ընդունելու վերջիններիս, ինչպես և Հայաստանի թշնամիները: Իսկ արդեն վերջին ժամանակներում Հայաստանի իշխանությունը մերժեց Ռուսաստանի հետ ռազմական համագործակցությունը, անցել է հարաբերությունների բացահայտ սրման, միևնույն ժամանակ Հայաստանում կազմակերպում է հայ-ամերիկյան զորավարժություններ: Բոլորովին ավելորդ չէ շաղկապելը Ռուսաստանին անհանգստացնող այս զորավարժությունների փաստը ճիշտ հաշվարկով Արցախի վրա ադրբեջանական հարձակման փաստի հետ: Ակնհայտորեն Հայաստանի բախտախնդիր ու ազգադավ ղեկավարին գայթակղում է Ձելենսկու «փառքը»:

Արցախը խորտակելու իր ծրագիրը կատարելուց հետո Նիկոլ Փաշինյանի ձեռքերն ազատ կլինեն իրականացնելու արտաքին պատվիրատուների հաջորդ և ավելի կարևոր հանձնարարությունները՝ դադարեցնելու Ռուսաստանի հետ բոլոր տեսակի ռազմական համագործակցություններն ու երկրի տարածքից դուրս բերելու դաշնակից երկրի ողջ ռազմուժը, այդ թվում՝ հայ-թուրքական սահմանը պահող ռուսական սահմանապահ զորքերին և Զանգեզուրից, որպես միջանցք, տարածք տալու թուրք-ադրբեջանցիներին: Այժմ, երբ ըստ արևմտաթուրքական դաշինքի՝ ամբողջովին լուծվել է Արցախի հարցը, առավել ևս հրատապ է դառնում հնարավորինս կարճ ժամանակահատվածում լուծելու այն խնդիրները, առանց որոնց առաջինի լուծումը մեծ արժեք չունի: Եթե գլխավոր խնդիրը տարածաշրջանային և աշխարհաքաղաքական ուղիների հարթումն է, ապա առանց այս հարցերի լուծման վերջինս ևս անհնարին է: Իսկ ժամանակը չի սպասում, աշխարհաքաղաքական և աշխարհակարգային փոփոխությունները իրականություն են դառնում շոշափելի արագությամբ և դժվար է կանխագուշակել, թե տեսանելի հեռանկարում ինչպիսի տեսք կստանա աշխարհաքաղաքական քարտեզը: Մյուս կողմից՝ Նիկոլ Փաշինյանի և նրա անհայրենիք խառնախմբի հայտնվելը Հայաստանի կառավարման ղեկի մոտ չսպասված նվեր էր, որն այլևս կարող է չկրկնվել երբևէ: Հայ ժողովրդի սերունդները դժվար թե երբևէ այնքան ապուշ գտնվեն, որ ևս մեկ անգամ կրակեն սեփական սրտին:

Բազմաչարչար ու մայր հայրենիքի կողմից լքված Արցախի ստացած նոր, ծանր հարվածը կարծես թե Հայաստանում շատերի համար ունեցավ սթափեցնող նշանակություն և ակնհայտ դարձրեց ոչ միայն կատարվածի ողջ ողբերգականությունը, այլև հեռանկարի ահավորությունը: Հայ ժողովուրդը կարծես թե ոտքի է ելել դավաճան ու հայրենակործան իշխանությանը անպայմանորեն հեռացնելու վճռականությամբ: Ունակ և գիտակից կլինի՞ ժողովուրդը՝ չսահանջելու, պայքարը շարունակելու մինչև նպատակի վերջնական իրագործումը: Իրականությունը փաստվում և վճռվում է հենց հիմա, իսկ այլընտրանքը դավաճանված Հայաստանի կործանումն է: ■

Ի պաշտպանություն Արցախի հանրահավաքներ աշխարհի տարբեր քաղաքներում

Արցախի Հանրապետություն. անկախության և գոյատևման 32-ամյա ճանապարհ

Անի Մելքոնյան
Պատմաբան

32 տարի առաջ, սեպտեմբերին, մեկը մյուսին հաջորդելով՝ ծնունդ առան նորագույն շրջանի հայկական երկու անկախ հանրապետությունները:

1991 թ. սեպտեմբերի 2-ին հռչակվեց Լեռնային Ղարաբաղի կամ Արցախի Հանրապետությունը, իսկ օրեր անց՝ սեպտեմբերի 21-ին, Հայաստանի Հանրապետությունը հռչակեց իր անկախությունը:

Նշելի է, որ Հայաստանի Հանրապետության վերանկախացման հիմնաքարը դարձան Արցախյան շարժումն ու պատերազմը, և Արցախն ինքը՝ իր հայկականությամբ:

Արցախը, ինչպես բազմիցս նշվել է, Հայաստանի գոյության երաշխիքն է, այդ իսկ պատճառով հարկ ենք համարում խոսել հայկական երկրորդ հանրապետության՝ Արցախի ազատագրական պայքարի ու անկախության գործընթացի մասին:

Բայց մինչ այդ մի փոքրիկ պատմական ակնարկ Արցախի վերաբերյալ:

Արցախը Մեծ Հայքի 15 նահանգներից մեկն է և «Աշխարհացույցում» համարվում է պատմական Հայաստանի 10-րդ նահանգը, որը մշտապես բնակեցված է եղել հայերով:

Լեռնային Արցախը (Մեծ Հայքի Արցախ նահանգի մի հատվածը) լինելով պատմական Հայաստանի անբաժանելի մասը՝ խորհրդային կարգերի հաստատումից հետո, Ստալինի 1921 թ. հուլիսի 5-ի ապօրինի որոշումով բռնակցվեց Խորհրդային Ադրբեջանին (Ադրբեջանական ԽՍՀ): Այնուհետև՝ 1923 թ. հուլիսի 7-ին, Ադրբեջանի կենտգործկոմը ընդունեց հռչակագիր «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի կազմավորման մասին»: Սակայն նորաստեղծ մարզի սահմանների մեջ չընդգրկվեցին հարթավայրային (դաշտային) Արցախի մեծ մասն ու արևմտյան լեռնային շրջանները (ԼՂՀ պաշտպանության բանակի կողմից ազատագրված տարածքները, որոնք նոյեմբերի 9-ի դավաճանական կապիտուլյացիայի համաձայնագրով կրկին հանձնվեցին Ադրբեջանին): Ադրբեջանը փորձված և խորամանկ միջոցներով, դիվանագիտորեն վարում էր ԼՂԻՄ-ը հայաթափելու, այն թուրքացնելու հետևողական քաղաքականություն, որի պատճառով բնակչության ընդհանուր թվաքանակում արագորեն իջնում էր հայության բաժինը: Այդ ամենը չէր կարող առաջ չբերել հայ ժողովրդի, մտավորականության բացահայտ դժգոհությունը:

Եթե 1920-1950-ական թթ. արցախյան ընդվզումները դրսևորվում էին առանձին անհատների դժգոհության ձևով, ապա 1960-1970-ական թթ. սկսվեց զանգվածային ըմբոստացման շրջանը:

Արցախի հարցում ճակատագրական էր հատկապես 1988 թ., երբ տարիներ շարունակ կուտակված դժգոհությունն ու արցախցիների տասնամյակների ընդվզումներն ի վերջո համազգային պայքարի բնույթ ստացան:



««Վերակառուցման» շրջանում ԽՍՀՄ բոլոր հանրապետություններում գաղտնի ու բացահայտ պայքար ծավալվեց ազգային ինքնուրույնության, տեղական մարմինների իրավունքների ընդլայնման համար: Սակայն իշխանությունները բավարարվեցին համընդհանուր խոստումներ տալով, և չձեռնարկվեց որևէ միջոցառում ազգամիջյան հարաբերությունները կարգավորելու, տեղական առանձնահատկությունները հաշվի առնելու, բացահայտված, ցավոտ հարցերին ինչ-որ ձևով լուծում տալու համար» [1]:

Եթե «1986 թ. հունիսից մինչև 1987 թ. մայիսն ընկած ժամանակահատվածում, ժամանակակիցների վկայությամբ, Ղարաբաղյան շարժումը դրսևորվում էր ոչ մեծ հավաքներով, որոնց շատ քիչ մարդ էր մասնակցում»[2], ապա 1988 թ. սկզբներից իրավիճակը կտրուկ պետք է փոխվեր:

Ոգևորված գորբաչովյան «Վերակառուցման» քաղաքականությամբ՝ արցախցիները դուրս եկան իրենց իրավունքների համար բացահայտ պայքարի: Այդ պայքարը, որն աստիճանաբար Արցախյան շարժման էր վերածվում, կրում էր տարերային բնույթ և սկզբնապես չէր ղեկավարվում որևէ կազմակերպության կամ անձի կողմից:

Ստեղծվել էր մի իրավիճակ, երբ արցախցիները կամ պետք է հեռանային իրենց հայրենի բնօրրանից, կամ պայքարեին իրենց հայրենիքի ու իրավունքների համար:

Արցախցիներն ընտրեցին պայքարի ուղին:

«Ոտքի ելած մարզի բովանդակ հայության ազատագրական շարժումն աստիճանաբար առաջ քաշեց մի ոչ պաշտոնական կոլեկտիվ ղեկավարություն, որի մեջ էին Արկադի Մանուչարյանը, Համլետ Գրիգորյանը, Վարդան Հակոբյանը, Ռոբերտ Քոչարյանը, Գուրգեն Գաբրիելյանը, Հրաչյա Բեգլարյանը, Մաքսիմ Միրզոյանը, Վասիլի Աթաջանյանը, Մուրադ Պետրոսյանը, Ռոլես Աղաջանյանը, Արկադի Կարապետյանը, Բորիս Առուշանյանը և ուրիշներ»[3]: Ադրբեջանի ՊԱԿ-ը և ներ-

Հանրահավաք Երևանի Հանրապետության հրապարակում

քին գործերի նախարարությունը հանձնարարություն ունեին ամեն կերպ կանխելու սկսված ժողովրդական պայքարը, չեզոքացնելու շարժման առաջնորդներին և ակտիվիստներին: Սակայն արցախցիները անկոտրում էին, իսկ նպատակը ԼՂԻՄ-ի միացումն էր Հայաստանին:

Մոսկվան և Բաքուն օր օրի սաստկացնում էին ճնշումը արցախցիների դեմ: Փետրվարի 14-ին Ստեփանակերտ տեղափոխվեց 12 միավորից բաղկացած տանկային մի շարասյուն: Հաջորդ 2-3 օրերին մեծաթիվ զինվորներ կուտակվեցին քաղաքում: «Փետրվարի 15-ին ԼՂԻՄ կուսմարզկոմի 1-ին քարտուղար Բորիս Կևորկովը, հանդիպելով շարժման ակտիվիստների հետ, ընթերցում է Մոսկվայից ստացված մի փաստաթուղթ, ըստ որի «ղարաբաղյան շարժման առաջնորդները ճանաչվում են որպես էքստրեմիստներ»[4] և խստագույնս պատժվելու էին: Շարժումը գլխատելու համար կազմվում է «էքստրեմիստների» (ծայրահեղականների) ցուցակ, որի մեջ ներառված էր 27 անուն: Նրանց նկատմամբ կիրառվում են տարաբնույթ պատիժներ:

«Փետրվարի 19-20-ը անց են կացվում ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների շրջանային խորհուրդների նստաշրջաններ, որտեղ պահանջվում է հրավիրել մարզխորհրդի արտահերթ նստաշրջան և որոշում ընդունել Լեռնային Ղարաբաղը Հայաստանի հետ միավորելու մասին»[5]: Փետրվարի 20-ի առավոտյան հրավիրվեց Ստեփանակերտի քաղխորհրդի 20-րդ գումարման չորրորդ արտահերթ նստաշրջանը, որին մասնակցում էր 98 մարդ: Նստաշրջանում որոշվեց. «Խնդրել ԼՂԻՄ-ի մարզխորհրդի գործկոմին նստաշրջանում քննարկել ԼՂԻՄ-ը Ադրբեջանի կազմից հանելու և Հայաստանին միավորելու հարցը» [6]:

ԼՂԻՄ մարզխորհրդի արտահերթ նստաշրջանը սկսվեց երեկոյան ժամը 20 անց 20 րոպեին, երբ հայտնի դարձավ, որ մարզխորհրդի 149 պատգամավորներից ներկայացել են 110-ը: Մարզխորհրդի արտահերթ նստաշրջանին հրաժարվեցին մասնակցել ադրբեջանցի պատգամավորները: Նստաշրջանի գումարումը խափանելու իշխանությունների բոլոր փորձերը ձախողվում են:

1988 թ. փետրվարի 20-ի օրվա վերջին Ստեփանակերտի Լենինի անվան հրապարակում և նրան հարակից փողոցներում հավաքված արցախցիների թիվը հասել էր ավելի քան 50 հազարի: Նստաշրջանում ելույթ են ունենում 44 պատգամավորներ, որոնք բոլորն էլ արտահայտվում են ԼՂԻՄ-ը Հայաստանին վերամիավորելու անհրաժեշտության մասին:

Մարզխորհրդի շենքի դիմաց հավաքված 50.000-ից ավելի արցախցիներն ի վերջո լսեցին մարզխորհրդի այդքան սպասված որոշումը, որում ասվում էր. «Ընդառաջելով ԼՂԻՄ-ի աշխատավորների ցանկություններին՝ խնդրել Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդին ու Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդին խոր ըմբռնման զգացում դրսևորել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության իղձերին և լուծել ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմից Հայկական ԽՍՀ-ի կազմ հանձնելու հարցը, միաժամանակ միջնորդել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի առջև ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմից Հայկական ԽՍՀ-ի կազմ հանձնելու հարցի դրական լուծմանը»[7]: Արցախցիների արդարություն պահանջող ձայնը հուժկու արձագանք գտավ մայր Հայաստանում: Երևանի Թատերական հրապարակում, Մատենադարանի առջև տեղի ունեցող հանրահավաքներում ու ցույցերում ելույթներ էին ունենում գիտության ու արվեստի նշանավոր գործիչներ, բանվորներ, ծառայողներ, պատերազմի ու աշխատանքի վետերաններ:

Մ. Գորբաչովը փետրվարի 26-ին դիմում է հղում Ադրբեջանի և Հայաստանի աշխատավոր ժողովուրդներին և կոչ է անում «Ժողովուրդների իսկական եղբայրության և միասնության»[8]: Նույն օրը տեղի է ունենում Հայկոմկուսի կենտկոմի պլենումը, որտեղ Կարեն Դեմիրճյանը պաշտպանելով Մ. Գորբաչովի կոչը՝ հորդորեց կարգ հաստատել և իրագործել «Գորբաչովի առաջ քաշած պահանջները»[9]:

Սակայն Խորհրդային Հայաստանի ղեկավարությունը չկարողացավ որևէ կերպ ազդել իրադարձությունների ընթացքի վրա: Շարժումը ընդարձակվում ու ծավալվում էր: «Ղարաբաղյան շարժումը Հայաստանում և Արցախում կոորդինացնելու նպատակով Իգոր Մուրադյանի նախաձեռնությամբ մարտի սկզբներին ստեղծվեց «Ղարաբաղ» անվանումով կոմիտեն: Հանրապետության գրեթե բոլոր հիմնարկ-ձեռնարկություններում, շրջաններում և քաղաքներում սկսեցին ստեղծվել «Ղարաբաղ» կոմիտեներ, ինչը շարժմանը կազմակերպչական նոր ձև տվեց» [10]:

Հայության խաղաղ պայքարին Ադրբեջանը Սումգայիթում, հետագայում նաև Կիրովաբադում, Բաքվում ու այլ վայրերում պատասխանեց իրեն բնորոշ վայրենի մեթոդներով՝ ահաբեկչություն իրականացնելով տեղի հայազգի խաղաղ բնակիչների դեմ:

«1988 թ. գարնանը Հայկոմկուսի կենտկոմում ստացված մի փաստաթղթում նշված է, որ Սումգայիթում սպանվել է ոչ թե 26 հայ, այլ ավելի քան 400, և խեղվել ու տուժվել է մոտ 1000 հոգի, այդ թվում՝ մեծ թվով կանայք, ծերունիներ և երեխաներ: Հայերը երեք օր բացարձակ անպաշտպան էին: Սումգայիթի մոտ տեղակայված խորհրդային բանակի ստորաբաժանումները ուշացան ճիշտ այնքան, որքան անհրաժեշտ էր հայերի նկատմամբ ծայր առած վանդալիզմն ավարտելու համար» [11]:

Սումգայիթյան ոճրագործությունը ոչ միայն չընկճեց հայ ժողովրդին, այլև, ընդհակառակը, նրան ավելի հա-

Արցախ, վիրավոր երեխաներ

մախմբեց համազգային նպատակների իրագործման գաղափարի շուրջ:

1988 թ. մարտին Արցախում ձևավորվեց «Կոռնկ» կոմիտեն. «Հիմնադիր ժողովում ընտրվեց խորհուրդ հետևյալ կազմով՝ Արկադի Մանուչարով (նախագահ), Ռոբերտ Քոչարյան, Վարդան Հակոբյան, Մաքսիմ Միրզոյան (տեղակալներ), Գուրգեն Գաբրիելյան, Հրաչյա Բեգլարյան, Ժաննա Գալստյան, Համլետ Գրիգորյան, Արկադի Կարապետյան, Վալերի Մարության, Համլետ Մովսիսյան, Յուրի Ներսիսյան, Բենիկ Օվչյան» [12]:

Արդեն 1988 թ. հուլիսի 12-ին ԼՂԻՄ մարզային խորհուրդը «....արտահայտելով Լեռնային Ղարաբաղի բնակչության ճնշող մեծամասնության պետական կամքը և ելնելով մեր միասնական միութենական բազմազգ պետության ազգային պետական կառուցվածքի հիմքում ընկած ազատ ինքնորոշման ազգերի իրավունքի մասին լենինյան սկզբունքը հետևողականորեն իրականացնելու անհրաժեշտությունից՝ հռչակել Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմից Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի դուրս գալը»[13]: Այս որոշումը, փաստորեն, ազդարարում էր Ադրբեջանի կազմից Արցախի դուրս գալը: Այս հանգամանքի վրա ուշադրություն դարձնելը չափազանց կարևոր է, քանի որ Ադրբեջանի «տարածքային ամբողջականության» մասին հորջորջող Ալիևն ու Նիկոլ Փաշինյանը հաշվի չեն առնում, որ 1988 թ. հուլիսի 12-ի այս որոշմամբ Արցախը դուրս եկավ Ադրբեջանի կազմից և 1991 թ. օգոստոսին անկախացած Ադրբեջանի կազմում Արցախը չի եղել, այնպես, ինչպես չէր եղել 1918-ի մայիսի 27-ին ստեղծված Ադրբեջանի կազմում:

Ավելի՛ն, եթե խոսում ենք տարածքային ամբողջականության մասին, ապա Ադրբեջանի շահերը սպասարկող Փաշինյանին հիշեցնում ենք, որ «1989 թ. դեկտեմբերի 1-ին Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և ԼՂԻՄ ազգային խորհրդի համատեղ նիստում պատմական որոշում է ընդունվում Լեռնային Ղարաբաղի և Հայկական ԽՍՀ վերամիավորման մասին»[14]: Թե՛ իրեն Հայաստանի Հանրապետության վարչապետ համարող անձի համար առավել կարևոր է այն, որ մեկ ամիս անց ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը չեղյալ հայտարարեց այդ որոշումը՝ այն որակելով հակասահմանադրական, քան Արցախի և Հայաստանի ժողովուրդների միահամուռ կամքը:

Որքան ծավալվում էր հայության ազատագրական պայքարը, այնքան Մոսկվան ու Խորհրդային Ադրբեջանը սաստկացնում էին ճնշումները թե՛ Արցախի, թե՛ Հայաստանի վրա (բայց նյութը չծանրաբեռնելու համար այս անգամ չենք խոսի Արցախի ու Հայաստանի դեմ իրականացված բռնաճնշումների, Երևանում պարեկային ժամ մտցնելու և այլնի մասին), այնքան ավելի մեծ թափ էր հավաքում Արցախյան շարժումը և որքան թափ էր հավաքում շարժումը, այնքան մոտենում էր խորհրդային բռնապետության քայքայումը, որի հետ մեկտեղ փլուզվում էր ադրբեջանական գաղութատիրությունը:

1991 թ. սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտում տեղի ունեցավ ժողովրդական պատգամավորների Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանը, որի կողմից ընդունվեց «Հռչակագիր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման մասին» որոշումը: Նախկին ԼՂԻՄ և Շահումյանի շրջանի տարածքում հռչակվեց անկախ հայկական պետություն՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը (ԼՂՀ)» [15]:

Այսպիսով՝ տարիների համառ պայքարի գնով պատմական Հայաստանի Արցախ նահանգի լեռնային հատվածում հռչակվեց Արցախի Հանրապետությունը, որը, փաստորեն, անկախ ապրելու իր իրավունքի հայտը ներկայացրեց աշխարհին: «Եվ այդ հայտի գլխավոր իրավական փաստարկն այն էր, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը հռչակվում է այնպիսի տարածքներում, որոնց հետ Ադրբեջանի Հանրապետությունը իրավական որևէ առնչություն չունի և չի պատկանել անկախ Ադրբեջանին»[16]: Անկախության այդ հայտը, իհարկե, փոքրիկ Արցախը պետք է արժանապատվորեն պաշտպաներ Ադրբեջանի կողմից իրեն պարտադրված պատերազմում:

«Մ. Գորբաչովի նախագահությամբ սեպտեմբերի 16-ին տեղի ունեցած ԽՍՀՄ պետական խորհրդի նիստը որոշում ընդունեց ԼՂԻՄ-ում վերականգնել մարզային և տեղական իշխանությունները, մարզի տարածքից դուրս բերել բանակը և բոլոր ռազմական միավորումները:

Ի պատասխան դրան՝ Ադրբեջանի ժողճակատի պարագլուխ Ա. Ալիևը հանրապետության հեռուստատեսությամբ կոչ արեց Լեռնային Ղարաբաղ ուղարկել 200 հազարանոց զինյալ ուժեր՝ «այնտեղ կարգ հաստատելու համար»: Նա բոլոր ադրբեջանցիներից պահանջեց զինվել և պատերազմ սկսել Հայաստանի դեմ: Հենց ժողճակատի ճնշման տակ Ադրբեջանի Գերագույն խորհրդի նստաշրջանը նոյեմբերի 26-ին որոշում ընդունեց լուծարել ԼՂԻՄ-ը և Ստեփանակերտը վերանվանել Խանքենդի: Սեպտեմբերի 8-ին Ադրբեջանի նախագահ ընտրված Այազ Մութալիբովը դրանով փորձում էր հիմնավորել, որ չկա Ղարաբաղի մարզ, հետևապես չկա և Ղարաբաղի հիմնախնդիր: Լեռնային Ղարաբաղում և Հայաստանում Ադրբեջանի այդ որոշումը գնահատվեց որպես սադրանք հայ ժողովրդի նկատմամբ»[17]: 1991 թ. սեպտեմբերի 22-ին Ստեփանակերտ ժամանեցին Ռուսաստանի Դաշնության (ՌԴ) և Ղազախստանի Հանրապետության նախագահներ Բ. Ելցինը և Ն. Նազարբաևը: Սեպտեմբերի 23-ին Ժելեզնովոդսկում նրանց հովանու ներքո կայացան բանակցություններ Ադրբեջանի և Հայաստանի ղեկավարների միջև, որտեղ ձեռք բերվեց պայմանավորվածություն. «կայունացնել իրավիճակը տարածաշրջանում, տեղա-

հանված բնակչությանը վերադարձնել իրենց բնակության վայրերը, ազատ արձակել պատանդներին: Այդ նպատակով հակամարտության գոտում տեղակայել Ռուսաստանի և Ղազախստանի ներկայացուցիչների տեղեկատվական խմբեր և իրավիճակի մասին ապահովել օբյեկտիվ տեղեկատվություն»[18]: Օգտվելով առիթից՝ Ադրբեջանը սաստկացրեց հայկական բնակավայրերի հրետակոծությունները և հայկական բնակավայրերի վրա կատարվող հարձակումները, որոնք բազմաթիվ զոհերի և ավերածությունների պատճառ դարձան:

1991 թ. սեպտեմբերի 21-ին Հայաստանի Հանրապետությունում անցկացված հանրաքվեի հիման վրա սեպտեմբերի 23-ին Հայաստանի Գերագույն խորհուրդը հռչակեց Հայաստանի Հանրապետության անկախությունը:

Հայաստանի և Ադրբեջանի անկախությունների հռչակումը Արցախյան հակամարտությունը բարձրացրեց նոր՝ միջպետական հարթության վրա:

«1991 թ. օգոստոսի 24-ից դադարել էին ինքնաթիռային թռիչքները Ստեփանակերտ, սեպտեմբերից մուտք չէր գործում ոչ մի գնացք, վառելիքի բացակայության պատճառով սեպտեմբերի 19-ից չէր աշխատում Ստեփանակերտի ավտոձեռնարկությունը, հաճախակի անջատվում էր էլեկտրականությունը, վտանգված էր գազի մատակարարումը»[19], իսկ նոյեմբերի վերջերից ամեն օր ռմբակոծվում էին ԼՂՀ բնակավայրերը, հատկապես՝ մայրաքաղաք Ստեփանակերտը:

Ուստի Արցախի ղեկավարների առջև հրատապ խնդիր էր դրված ստեղծել պատերազմական իրավիճակին համապատասխան իշխանական մարմիններ և առաջին հերթին՝ կանոնավոր բանակ: Թշնամու հարձակումներին դիմակայելու նպատակով դեռևս նոր կազմավորվող ինքնապաշտպանական ուժերը, չունենալով բավարար միջոցներ, այս ու այնտեղ պատասխան գործողությունների էին դիմում՝ վնասազերծելով ադրբեջանական ռազմական հենակետերը:

Տող գյուղի փրկությունը դարձել էր հրատապ խնդիր: 1991 թ. հոկտեմբերին Մարտակերտից Տող եկավ Վլադիմիր Բալայանի ինքնապաշտպանական ջոկատը, Հադրութից՝ Արթուր Աղաբեկյանի, Ստեփանակերտից՝ Կարո Բաբայանի և Աշոտ Ղուլյանի խմբերը, Հայաստանից՝ Մանվել Գրիգորյանի, ինչպես և ուրիշ խմբեր, ընդամենը 100 մարդ: «Հոկտեմբերի 31-ին հայ ազատամարտիկները ՀՀ պաշտպանության կոմիտեից Արցախ գործուղված Ա. Տեր-Թադևոսյանի՝ (Կոմանդոսի) գլխավորությամբ հանկարծակի և շեշտակի գրոհով ազատագրեցին Տող գյուղի ադրբեջանական մասը, ինչը մեծ ոգևորություն առաջացրեց հայկական ուժերի մոտ: Գործողությունների նմանօրինակ արագաթափ զարգացումը հուշեց, որ մոտալուտ արհավիրքներին դիմակայելու համար նորընծա հանրապետությանն անհրաժեշտ է առանձին-առանձին գործող ֆիդայական ջոկատներից ստեղծել մարտունակ բանակ»[20]:

Տողի ազատագրմանը հաջորդեց Հադրութի շրջանի Սարիշեն գյուղի ազատագրումը. այսպիսով՝ սկսվել էր հայկական Արցախի ազատագրումը թուրք զավթիչներից:

Նոյեմբերից Ադրբեջանի կողմից լայնածավալ զինված ագրեսիա սկսվեց ԼՂՀ-ի դեմ: Նոյեմբերի 29-ին ռմբակոծվեցին Ստեփանակերտ և Ասկերան քաղաքները, Խնածախ, Հարավ, Շոշ, Ավդուռ և Մյուրիշեն գյուղերը:

1991 թ. դեկտեմբերի 10-ի ԼՂՀ անկախության հանրաքվեին ներկա գտնվելու նպատակով աշխարհի մի շարք երկրներից եկան 40 անկախ դիտորդներ: Քվեարկության իրավունք ունեցող 132.328 արցախցիներից քվեարկության ներկայացան 108.736-ը (82,2%), որոնցից 108.615-ը (99,89%) քվեարկեցին Արցախի անկախության օգտին: Հանրապետության տարածքում ապրող ադրբեջանցիները հանրաքվեին չմասնակցեցին: Հանրաքվեին Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող ԼՂՀ քաղաքացիների մասնակցության կազմակերպումն իր վրա վերցրեց «Արցախ» հայրենակցական միությունը[21] :

Լեոնարդ Պետրոսյանը դեկտեմբերի 23-ին ԱՊՀ-ի անդամ երկրների նախագահներին ու խորհրդարաններին դիմեց հայտարարությամբ, որում շեշտում էր. «Ադրբեջանի կողմից իրագործվող խոշորամասշտաբ հարձակման անուղղելի հետևանքների համար պատասխանատվությունն ընկնում է ոչ միայն նրա ղեկավարության, այլև բոլոր նրանց վրա, ովքեր անտարբեր մնացին ավելի քան երեք տարի տառապող Լեռնային Ղարաբաղի ժողովրդի բազմաթիվ դիմումների նկատմամբ ու ժամանակին գործուն միջոցներ չձեռնարկեցին հարձակվողներին կանգնեցնելու համար» [22]:

Դեկտեմբերի 28-ին տեղի ունեցան Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհրդի (հետագայում՝ Ազգային ժողով) պատգամավորների ընտրություններ: Նույն օրը Ադրբեջանի կողմից ռմբակոծության ենթարկվեցին ավելի քան 40 հայկական բնակավայրեր, ավերվեցին Ստեփանակերտի մարզային ու մանկական հիվանդանոցները և այլ շինություններ, զոհվեց 18 մարդ, տասնյակները վիրավորվեցին:

Դեկտեմբերի 30-ին ԱՊՀ երկրների ղեկավարները, դիմելով Ադրբեջանի և Հայաստանի ղեկավարներին, կոչ արեցին Ղարաբաղյան հիմնախնդիրը լուծելու համար ակտիվացնել բանակցությունները, սակայն Ա. Մութալիբովը ոչ միայն չընդունեց այդ կոչը, այլև պահանջեց չմիջամտել անկախ Ադրբեջանի Հանրապետության ներքին գործերին:

Արցախում չկար հաց ու վառելիք, Ստեփանակերտը զրկվել էր ջրից: Երևանից թռչող ուղղաթիռները, հաղթահարելով բոլոր դժվարությունները, վայրէջք էին կատարում Քոլատակում, Կարմիր շուկայում, Ճարտարում, Գիշիում, Տումիում, Ստեփանակերտի մարզադաշտում և որտեղ հնարավոր էր: Նրանք Արցախ էին հասցնում պաշտպանության միջոցներ, սննդամթերք, դեղորայք, վառելիք, կամավորների, իսկ Արցախից Երևան տեղափոխում հիվանդներին, վիրավորներին, երեխաներին, ծերերին:

Ահա այս պայմաններում գոյատևում և պատերազմում էր նորաստեղծ Արցախի փոքրիկ հանրապետությունը մինչև 1992 թ. մայիսի 18-ը՝ Բերձորի ազատագրումն ու «կյանքի ճանապարհի» բացումը, որով Արցախը միացավ մայր Հայաստանին և աստիճանաբար սկսեց հաղթահարել հումանիտար ճգնաժամը:

1994 թ. մայիսի 12-ին Հայաստանի Հանրապետության, Ադրբեջանի և Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարները Ռուսաստանի միջնորդությամբ կնքեցին անժամկետ զինադադար, և Արցախյան հիմնախնդիրը թևակոխեց բանակցային փուլ, որտեղ Հայաստանը (Արցախի հետ) ուներ ակնհայտ առավելություն՝ որպես հաղթող կողմ: Արցախը Հայաստանի հետ լծվեց պետականաշինության գործընթացին՝ չլինելով միջազգայնորեն ճանաչված պետություն, այնուամենայնիվ իր զարգացման մակարդակով, ժողովրդավարությամբ, ինքնաբավ տնտեսությամբ, պաշտպանվելու ու հարկ եղած դեպքում թշնամուն արժանի հակահարված տալու կարողությամբ Արցախի փոքրիկ հանրապետությունը գրեթե ոչնչով չէր զիջում միջազգայնորեն ճանաչված պետություններին.... Բայց ամեն ինչ գլխիվայր շրջվեց 2018 թ.-ին Հայաստանը պատուհասած «թավշյա հեղափոխության» հետևանքով, որի դիմաց հայ ժողովուրդը չափազանց բարձր գին է վճարում՝ դավաճանական պատերազմ, որի հետևանքով հայ ժողովրդի վզին փաթաթվեց ծրագրված պարտություն, հազարավոր զոհեր, շրջափակում, հացի, վառելիքի, էլեկտրականության, կապի բացակայություն, ի վերջո Արցախի պայմանավորված հանձնում, սովի մատնված և ցեղասպանվող արցախցիներ. գրեթե նույն իրավիճակը, ինչ 1990-ականներին էր:

Եվ այս ամենի հետ մեկտեղ վտանգված է Հայաստանի Հանրապետության գոյությունը որպես պետություն. հայ ժողովրդի մի ստվար հատվածը դեռ ուշքի չի եկել կատարված ակնհայտ դավաճանությունից և կրած ու սպասվող կորուստների մեծության գիտակցումից: Գտնվելով պետական դավաճանի կառավարման ներքո՝ ազգային գիտակցությամբ օժտված հայությունը զրկվեց Արցախին որևէ կերպ օգնելու հնարավորությունից: Կարճ ժամանակահատվածում քաղաքական ինչպիսի՞ փոփոխություններ տեղի կունենան Հայաստանում և արտաքին քաղաքական ի՞նչ ուղեգիծ կորդեգրի Հայաստանի գալիք իշխանությունը: Իսկ ներկա իշխանության հետ ամեն ինչ պարզ է՝ նա հրաժարվել է Արցախից, հրաժարվում է նաև Հայաստանից:

Թե՛ Հայաստանում, թե՛ Սփյուռքում լավ հասկանում են, որ Արցախի հայկականությամբ է պայմանավորված Հայաստանի Հանրապետության և հայ ժողովրդի գոյությունը այս տարածաշրջանում, հետևաբար պետք է արագ և վճռական գործողությամբ Հայաստանի իշխանության ղեկից հեռացնել արցախատյաց դավաճանին, որի լուռ համաձայնությամբ են իրականացվում Ադրբեջանի ցեղասպանական գործողությունները: Այնուհետև անհրաժեշտ է իրավիճակից բխող ճիշտ լուծումներ գտնել: Կարծում ենք աշխարհաքաղաքական զարգացումները ճիշտ գնահատող ղեկավարությունը կկարողանա կողմնորոշվել, ի՞նչ և ինչպե՞ս, անել: Միայն թե չպետք է հապաղել քանի որ ժամանակը աշխատում է ի վնաս մեզ…

Ծանոթագրություններ

1. Արշակյան Ա., Արցախյան գոյապայքարը (1985-1992)., Եր., 2004, էջ 14:
2. Աբրահամյան Հ., Մարտնչող Արցախը, գիրք 3., Ստեփանակերտ., 2007., էջ 17-18:
3. Հայոց պատմություն., ԲՈՒՀ-ական դասագիրք., խմբ., Հր., Ռ., Սիմոնյան., Եր., 2012., էջ 711:
4. Նույնը էջ 711-712:
5. Արշակյան Ա., նշվ., աշխ., էջ 19-20:
6. Աբրահամյան Հ., նշվ., աշխ., էջ 37:
7. Խաչատրյան Կ., Աբրահամյան Հ., Հայության պայքարը ԼՂԻՄ-ը խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար., Եր., 2001., էջ 132-133
8. Աբրահամյան Հ., նշվ., աշխ., էջ 50:
9. Նույնը., էջ 60:
10. Ազիզբեկյան Ռ., Հայաստանը վերակառուցումից մինչև անկախություն., Եր., 1992., էջ 21-22:
11. Մանասյան Ա., Լեռնային Ղարաբաղ: Ինչպես է դա եղել...., Եր., 2011., էջ 73:
12. Բաղրյան Վ., Տեսադաշտ 1988-1994., Ստեփանակերտ., 2013., էջ 19-20:
13. http://www.hayzinvor.am/6022.html:
14. Թովմասյան Վ., Ղարաբաղյան հարց: Ակունքներն ու էությունը՝ ըստ փաստաթղթերի ու փաստերի., Ստեփանակերտ., 1991., էջ 15:
15. Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն (1991թ. օգոստոս-1992 թ. հունվար), Փաստաթղթեր., Եր., 2011., էջ 95:
16. Մանասյան Ա., նշվ., աշխ., էջ 110:
17. Արշակյան Ա., նշվ., աշխ., էջ 202:
18. Բաղրյան Վ., նշվ., աշխ., էջ 94-95:
19. Արշակյան Ա., նշվ., աշխ., էջ 203:
20. Հակոբյան Տ., ԼՂՀ հոչակման և պետական շինարարության գործընթացը., Եր., 2011., էջ 30:
21. Արշակյան Ա., նշվ., աշխ., էջ 205:
22. Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն (1991թ. օգոստոս-1992 թ. հունվար), Փաստաթղթեր., էջ 160-161:

Օգտագործված Գրականության Ցանկ

ա) Գրականություն

1. Աբրահամյան Հ., Մարտնչող Արցախը, գիրք 3., Ստեփանակերտ., 2007
2. Արշակյան Ա., Արցախյան գոյապայքարը (1985-1992)., Եր., 2004
3. Ազիզբեկյան Ռ., Հայաստանը վերակառուցումից մինչև անկախություն., Եր., 1992
4. Բաղրյան Վ., Տեսադաշտ 1988-1994., Ստեփանակերտ., 2013
5. Թովմասյան Վ., Ղարաբաղյան հարց: Ակունքներն ու էությունը՝ ըստ փաստաթղթերի ու փաստերի., Ստեփանակերտ., 1991
6. Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն (1991թ. օգոստոս-1992թ. հունվար), Փաստաթղթեր., Եր., 2011
7. Խաչատրյան Կ., Աբրահամյան Հ., Հայության պայքարը ԼՂԻՄ-ը խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար., Եր., 2001
8. Հակոբյան Տ., ԼՂՀ հոչակման և պետական շինարարության գործընթացը., Եր., 2011
9. Հայոց պատմություն., ԲՈՒՀ-ական դասագիրք., խմբ., Հր., Ռ., Սիմոնյան., Եր., 2012
10. Մանասյան Ա., Լեռնային Ղարաբաղ: Ինչպես է դա եղել...., Եր., 2011

բ) Համացանցային նյութեր

1. http://www.hayzinvor.am/6022.html

Նոր և հին խաղացողները Հարավային Կովկասում

Սարգիս Սարգսյան
Մոսկվայի Սևծովյան-կասպիական տարածաշրջանի ինստիտուտի ավագ գիտաշխատող

ՆԱՏՕ-ի ընդլայնման եվրոպական կոմիտեի նախագահ Գյունթեր Ֆեհլինգերը կոչ է արել Հայաստանին միանալ դաշինքին: Իմաստը պարզ էր՝ արևմտյան ռազմական դաշինքը, ի տարբերություն Ռուսաստանի Դաշնության, կկարողանա պաշտպանել Հայաստանին: Այս, շատ վիճելի տեսակետը հայ-ռուսական առանց այդ էլ լարվող հարաբերությունների մի նոր ազդակ էր: Բայց խոսքը միայն դրա մասին չէ: Շատ բարձրաստիճան և շատ լավատեղյակ աղբյուրին հղումով ռուսական լրատվամիջոցներում տեղեկություններ եղան, որ Կրեմլում դժգոհ են Փաշինյանի ելույթից: Միշտ զարմացել ենք, երբ բազմաթիվ անվանի մարդիկ ունեցող պետությունում կարևորագույն խնդիրներին արձագանքում է անանուն մեկը: Սակայն չուշացավ նաև պաշտոնական պատասխանը. «Հայ ժողովուրդը բավական խելամիտ է, որպեսզի «կուլ չգնա» հանրապետությունը դաշինքի ազդեցության գոտի ներքաշելու ՆԱՏՕ-ի փորձերին: Այս մասին ՏԱՍՍ լրատվական ծառայությանը հայտնեց ԱՊՀ երկրների պատասխանատու ՌԴ փոխարտգործնախարար Միխայիլ Գալուզինը: Պատասխանելով ՆԱՏՕ-ի եվրոպական զարգացման կոմիտեի նախագահ Գյունթեր Ֆեհլինգերի հայտարարություններին այն մասին, որ Հայաստանը պետք է անդամակցի Հյուսիսատլանտյան դաշինքին՝ Մերձավոր և Միջին Արևելքի ուղղությունների պատասխանատու, ՌԴ փոխարտգործնախարար Ալեքսանդր Գալուշկոն հայտարարեց, որ «Հայաստանը ՀԱՊԿ անդամ է, և մենք շարունակում ենք ելնել այս իրողությունից»՝ հավելելով, որ «սրանք մեծ ֆանտազիաներ են»:

Մոսկվայում բազմաթիվ շփումների ընթացքում փորձում ենք ռուսական կողմի ուշադրությունը հրավիրել այն անվիճելի իրողության վրա, որ իրավիճակ է փոխվել: Եվ դա պայմանավորված է Փաշինյան երևույթով, սակայն ավելի շատ աշխարհաքաղաքական նոր իրողություններով, որոնք Ռուսաստանում փորձում են չնկատել: Ռուս վերլուծաբան Գրիգորի Տրոֆիչուկը գտնում է, որ Ռուսաստանը փորձում է բարեկամ լինել բոլորի հետ՝ Հայաստանի, Ադրբեջանի, Իրանի, Թուրքիայի, Իրաքի և այլն: Բայց քաղաքականության մեջ այդպես չի լինում: Առանց հստակեցված առաջնահերթությունների՝ կորչում են և՛ առաջինը, և՛ երկրորդը, և՛ երրորդը: Տողերիս հեղինակը ստիպված է լինելու շարադրել պարզ ճշմարտություններ, որոնք լսելի դարձնելու խնդիր ունենք Ռուսաստան գերտերությունում: Մոսկվայում միշտ համոզված են եղել, թե Երևանի արտաքին քաղաքական նախագծերի համար մրցակցություն չկա և չի էլ սպասվում:

2020-ի սեպտեմբերի վերջին Լեռնային Ղարաբաղում ռազմական գործողությունների վերսկսումից ի վեր տարաձայնությունների հիմնական թեմաներից մեկն այն էր, թե Ռուսաստանը ինչպես կարձագանքի տեղի ունեցողին: Շատերիս համար զարմանալի էր, թե որքան զուսպ էր Մոսկվան բռնկված պատերազմի հարցում, հատկապես ի տարբերություն ուկրաինական ճգնաժամի կամ Վրաստանի հետ պատերազմի ժամանակ նրա պահվածքի: Կոիվների հինգերորդ օրը բրիտանացի հայտնի կովկասագետ, «The Caucasus Survey» ամսագրի գլխավոր խմբագիր Լոուրենս Բրոերսը թվիթերյան իր էջում գրեց. «Որտեղ է Ռուսաստանը»: Մի քանի օր անց արտաքին հարաբերությունների Եվրոպական խորհրդի «Մեծ Եվրոպա» ծրագրի տնօրեն Նիկու Պոպեսկուն նույնպես զարմացավ, թե ինչու Ռուսաստանը, որն այդքան ջանք էր գործադրել մեծ տերության և վստահելի դաշնակցի իմիջի կերտման վրա, չշտապեց աջակցել Հայաստանին: Ղարաբաղյան երկրորդ պատերազմն ավարտվեց Ռուսաստանի, Ադրբեջանի և Հայաստանի ղեկավարների համատեղ հայտարարության հրապարակումից հետո: Մոսկվան կրկին առաջին պլան մղվեց որպես միջնորդ և դուրս եկավ ինքնուրույն, այլ ոչ թե որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի կամ ինչոր նոր տանդեմի կամ եռյակի մաս՝ Թուրքիայի կամ Իրանի մասնակցությամբ: Խաղաղապահ գործողությունը նույնպես տեղի ունեցավ Ռուսաստանի կողմից, այլ ոչ թե բազմակողմ ձևաչափով: Թուրքական մասնակցությունը սահմանափակվեց Անկարայի մի քանի ներկայացուցիչներով Ադրբեջանի մոնիտորինգի կենտրոնում: Սակայն հաշվի չառնվեց մի կարևոր հանգամանք, որ ընդհանրապես, հայկական կողմը միշտ հակված է եղել իր ազգային անվտանգությունը պատկերացնելու՝ ոչ միայն Հայաստանի Հանրապետությունը նկատի ունենալով, այլև չճանաչված Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը և նույնիսկ նրա շրջակայքը: Մյուս կողմից՝ Մոսկվան այս հարցում միշտ ունեցել է տարբերակված մոտեցում, ինչի մասին բազմիցս ուղղակիորեն հայտարարել է: Ռու-

սական կողմի ներկայացուցիչները մեզ մեղադրում են, որ մտածողության իներցիան և հաղթողի բարդույթը 1991-1994 թվականների քարոզարշավում բազմապատկված, երկար տարիներ պահպանվող ստատուս-քվոյով թույլ չտվեցին Հայաստանին (և ոչ միայն նրան) նկատել այդ նրբությունները, թեև Ռուսաստանը չթաքցրեց դրանք որևէ մեկից: Այս հանգամանքից փայլուն օգտվում են մնացած խաղացողները: Մի պարզ պատճառով. հետևյալ հարցերը, թե որքա՞ն կտևի Բաքվի և ռուս խաղաղապահների փոխըմբռնումը, արդյո՞ք Ադրբեջանը կգայթակղվի արագացնելու հակամարտության կարգավորումը՝ առանց Մոսկվայի շահերը հաշվի առնելու, ինչպե՞ս կանդրադառնա խաղաղապահ գործունեության վրա Թուրքիայի աճող ազդեցությունը և նրա ներկայացուցիչների մասնակցությունը հրադադարի պայմանների պահպանման վերահսկողության գործընթացում, ի՞նչ է լինելու Մինսկի խմբի հետ, Ռուսաստանի, Թուրքիայի և Իրանի միջև կլինի՞ հակամարտության կարգավորման նոր «եվրասիական» մեխանիզմ, մինչև օրս պատասխան չունեն: Նոր համաձայնագիրն արագ ընդունվեց, սակայն այժմ պարզ է, որ նման սցենար վաղուց էր նախատեսված: Ռուսաստանը վերջին տարիներին հակամարտող կողմերին առաջարկում էր, այսպես կոչված, Լավրովի պլանը, թեև պաշտոնապես հերքել է դրա գոյությունը: Ծրագրի էությունն այն էր, որ հայերն աստիճանաբար դուրս բերեին իրենց ուժերը Լեռնային Ղարաբաղի շուրջ նախկինում ազատագրված շրջաններից, իսկ Ռուսաստանը խաղաղապահներ ուղարկեր այնտեղ՝ ապահովելու Արցախի հայերի անվտանգությունը: Այս որոշումը չէր կարող դուր գալ ԱՄՆ-ին, Ֆրանսիային և եվրոպական այլ երկրներին, որոնք պնդում էին հակամարտության կարգավորման բազմակողմ ձևաչափի և միջազգային խաղաղության պայմանագրի կնքման հարցում: Ռուսական ծրագրի հրապարակումը կարծես թե անակնկալի է բերել Փարիզին ու Վաշինգտոնին, սակայն միայն սկզբնական փուլում: Հետագա քայլերը ցույց տվեցին, որ ոչ ոք չի պատրաստվում թույլ տալ Ռուսաստանին հեշտ ու հանգիստ իրականություն դարձնել իր ծրագրերը, թեկուզև «Ղարաբաղյան հակամարտություն» կոչվող թնջուկը հայկական կողմին ոչ ձեռնտու պայմաններով «գլխից ռադ անելու» ճանապարհով:

Պատմական փորձը ցույց է տվել, որ «հայկական հարցի» իր մասնաբաժինը Ռուսաստանը (կարևոր չէ, ցարական, բոլշևիկյան, թե ժողովրդավարական) միշտ էլ փորձել է թանկ վաճառել հանուն իր ազգային շահերի: Այս պահին դա հարթ չի ստացվում, և դրա համար կան առարկայական պատճառներ: Խորհրդային Միության փլուզումից երեսուն տարի անց ժամանակին ԽՍՀՄ-ի կազմում գտնվող նախկին հանրապետությունների աշխարհաքաղաքական առաջնահերթությունները փոխվել են: Այսօր այս տարածքն այլևս հնարավոր չէ դիտարկել միայն որպես հետխորհրդային տարածք: Իհարկե, Ռուսաստանը չի վարանում ճնշում գործադրելու նախկինում ԽՍՀՄ-ին մաս կազմած երկրների վրա: Սակայն վերջիններս դժվարին գնով են սովորել, որ Մոսկվայի հետ հարաբերությունները պահանջում են ուշադրություն և զգուշություն: Այսօր ընկալել նույն Այսրկովկասը միայն որպես ռուսական ազդեցության գոտի, նշանակում է սխալ մեկնաբանել նրա հիմնական տարբերակիչ հատկանիշները: Ռուսաստանի ազդեցությունը ամբողջ հետխորհրդային տարածքում, անկասկած, թուլանում է: Կենտրոնախույս ուժերը, որոնք գործում են նույն Ղազախստանում, Մոլդովայում կամ Տաջիկ-ստանում, Ռուսաստանի հարևան երկրները վերածել են ոչ միանշանակ ռուսական ազդեցության գոտիների: Այս միտումը հատկապես նկատելի է Հարավային Կովկասում: Այսօր երեք պետությունների՝ Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի և Արևելյան Միջերկրական ծովի ու Մեծ Մերձավոր Արևելքի երկրների միջև աշխարհաքաղաքական սահմանները փոխվում են: Իհարկե, Ռուսաստանը ձգտում է վերահաստատել իր դերը տարածաշրջանում և մանևրում է Թուրքիայի ու Իրանի միջև, որոնք զգալի հաջողություններ են արձանագրել:

Նորություն չէ Հարավային Կովկասի նկատմամբ Չինաստանի և Իսրայելի հետաքրքրությունը: Հաշվի առնելով աշխարհագրական մոտիկությունը և պատմականորեն հաստատված կապերը՝ զարմանալի չէ Կովկասի և Մեծ Մերձավոր Արևելքի պետությունների փոխգործակցության փաստը: Նույնիսկ նախախորհրդային ժամանակաշրջանում Կովկասը տարածք էր, որտեղ Օսմանյան, Պարսկական և Ռուսական կայսրությունները բախվում էին ազդեցության համար: Կայսրություններից յուրաքանչյուրն ինչոր ժամանակ գերիշխում էր այս տարածաշրջանում՝ ձեռք բերելով ազդեցություն այստեղով անցնող ամենակարևոր տարանցիկ առևտրական երթուղիների վրա: 20-րդ դարի մեծ մասի ընթացքում Խորհրդային Միությունը վերահսկում էր Կովկասը և փորձում էր իր ազդեցությունն ավելի տարածել Իրանի և Թուրքիայի վրա: ԽՍՀՄ փլուզումը թուլացրեց Մոսկվայի դիրքերը տարածաշրջանում, ինչը իրանա-ռուս-թուրքական մրցակցությունը Կովկասում կարող է հանգեցնել ազդեցության նոր գոտիների ի հայտ գալուն: 1990-ականները դժվար ժամանակներ էին Հարավային Կովկասի բոլոր երեք պետությունների համար: Ռուսաստանն ավելի շատ կենտրոնացել էր Հյուսիսային Կովկասի ներքին անկայունության և տարածաշրջանում անկարգությունները ճնշելու վրա: Հարավային Կովկասում Ռուսաստանի քաղաքականությունը պայմանավորված էր հիմնականում Հայաստանի և Ադրբեջանի միջև հակամարտությամբ, ինչպես նաև Վրաստանի անկայուն իրավիճակով: Իրանը 1990-ականներին նույնպես տնտեսական խնդիրների առջև էր՝ տուժելով ինչպես պատժամիջոցներից, այնպես էլ Իրաքի հետ գրեթե տասնամյա պատերազմի հետևանքներից: Համաշխարհային հարթակում խորապես մեկուսացված Իրանը քիչ բան ուներ առաջարկելու Հարավային Կովկասի երեք պետություններին, որոնցից յուրաքանչյուրը գտնվում էր Վաշինգտոնի

ճնշման ներքո: ԱՄՆ-ն անում էր ամեն ինչ, որպեսզի հարավկովկասյան երկրները նվազեցնեն շփումները հարավային հարևանի հետ: Այդ տարիներին Թուրքիան իր հերթին ավելի շատ կենտրոնացած էր եվրաինտեգրման վրա՝ իր արևելյան հարևաններին թողնելով երկրորդ պլանում: Ամբողջ Եվրասիայում պանթուրքական օրակարգը խթանելու Անկարայի ջանքերն ի սկզբանե իր համար խոստումնալից էին թվում, սակայն դրանք էական արդյունք չունեցան՝ բացառությամբ, թերևս, Ադրբեջանի պարագայի: Այնուամենայնիվ, Լեռնային Ղարաբաղի առաջին պատերազմի ժամանակ Անկարայի և Բաքվի միջև հաստատված դիվանագիտական և անվտանգային շփումները միայն ամրապնդեցին պանթուրքական սպառնալիքի ընկալումը Հայաստանի կողմից, ինչը հանգեցրեց հայ-թուրքական նոր սկսված շփումների սառեցմանը և տնտեսական շրջափակմանը, որը շարունակվում է մինչև օրս: 1990-ականներին Արևմուտքն ուներ փող, շուկաներ և աշխարհաքաղաքական ազդեցություն: Այդ օրերին Ադրբեջանի նախկին նախագահ Հեյդար Ալիևը հայտարարեց, որ «Վաշինգտոնը նոր Մոսկվան է»: Տարածաշրջանի օրվա բոլոր ղեկավարները «թթու արևմտականներ» էին և էյֆորիայի մեջ էին ԱՄՆ-ի և Եվրոպայի հետ հարաբերություններ կառուցելու հնարավորության հեռանկարով: Արևմտյան ազդեցությունը շարունակեց աճել 2001 թվականի սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունից և վրացական «վարդերի հեղափոխությունից» հետո, ինչը մեծացրեց տարածաշրջանի կարևորությունը ամերիկյան արտաքին քաղաքականության մեջ:

Ադրբեջանը և Վրաստանը դարձել էին Հարավային Կովկասով Կենտրոնական Ասիա և Աֆղանստան մատակարարման ուղիների վրա կարևոր հանգույցներ: Վրաստանը մեծ թվով զորքեր ուղարկեց Իրաք, ինչը արժանացրեց նրա նկատմամբ ԱՄՆ ազգային անվտանգության համակարգի առանցքային ստորաբաժանումների բարեհաճ վերաբերմունքին: Ծայրահեղականության դեմ պայքարը նաև նպաստել էր ՆԱՏՕ-ի և բոլոր երեք երկրների միջև անվտանգության կապերի ամրապնդմանը: Այդուհանդերձ Եվրասիան երկար չմնաց ամերիկյան արտաքին քաղաքականության կենտրոնում, ավելին, հաճախ այդ տեղը խոսքով էր զբաղեցվում, քան գործով: Աֆղանստանում և Իրաքում ռազմական ներկայության կրճատումը Բարաք Օբամայի և Դոնալդ Թրամփի նախագահության ժամանակ խնդրահարույց դարձրեց Վաշինգտոնի առանցքի հարցը Եվրոպայից և Եվրասիայից մինչև Հնդկա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջան: Հաշվի առնելով 2021 թվականի օգոստոսին Աֆղանստանից ԱՄՆ զինված ուժերի դուրսբերումը՝ Եվրասիայում Միացյալ Նահանգների ներկայությունը և տարածաշրջանում նրա հետաքրքրության չափը բաց հարց է: Հետխորհրդային այն ժամանակաշրջանը, երբ Հարավային Կովկասը գտնվում էր ԱՄՆ-ի ուշադրության կենտրոնում, շատ առումներով պատ-



մական անոմալիա էր: Աշխարհագրորեն տարածաշրջանը հեռու է Ամերիկայից, և այնտեղ գտնվող պետությունների ռազմավարական նշանակությունը, Վաշինգտոնի տեսանկյունից, կապված էր խորհրդային կառավարման ձևից նորի անցման հետ՝ անվտանգության ապահովման հրատապ անհրաժեշտությամբ: Միաժամանակ ԱՄՆ-ը նաև Աֆղանստան տանող այլընտրանքային ուղիներ էր որոնում: Այն, որ Արևմուտքը հաճախ անտեսում էր Կովկասը, զուտ ամերիկյան երևույթ չէ: Եվրամիությունը նույնն արեց ԵՄ ընդլայնման քաղաքականության հետ կապված ընդհանուր հոգնածության, Ուկրաինայի պատերազմի և ներքին խնդիրների՝ ներառյալ Brexit-ի և եվրոպական պարտքային ճգնաժամի պատճառով: Ինչևէ: Հայաստանը պետք է արձանագրի, որ Մոսկվան տեսանելի ապագայում կմնա տարածաշրջանի գերիշխող ուժը:

Մյուս կողմից՝ ժամանակն է Մոսկվայում հասկանան, որ հարավկովկասյան երեք պետությունների մայրաքաղաքները աշխարհագրորեն ավելի մոտ են Արևելյան Միջերկրական ծովի և Պարսից ծոցի տնտեսական և քաղաքական շատ կենտրոններին, քան հենց Մոսկվային: Օրինակ՝ Բաքուն մի փոքր ավելի մոտ է (մոտ 1600 կմ) Դոհային, Քաթարին և Անկարային, քան Ռուսաստանի մայրաքաղաքին (մոտ 2090 կմ): Թբիլիսիից Անկարա մոտ 1287 կմ է, իսկ Երևանից մինչև Իրաքի Մոսուլ քաղաքը, որտեղ ժամանակին ապրել է նշանավոր հայկական համայնքը, ընդամենը մի քանի հարյուր կիլոմետր: Այս մոտիկության շնորհիվ Թուրքիան և Պարսից ծոցի երկրներն այժմ օդային ճանապարհորդությունների առանցքային հանգույցներ են, ինչը խիստ հակադրվում է խորհրդային ժամանակներին, երբ արտաքին աշխարհի հետ կապը Մոսկվայի միջոցով էր: Թուրքիան Ռուսաստանից հետո դարձել է Կովկասից, այդ թվում՝ Հայաստանից աշխատանքային միգրացիայի երկրորդ ուղղությունը: Կանանց թրաֆիքինգը Հարավային Կովկասի երեք պետությունների և Թուրքիայի, Պարսից ծոցի երկրների միջև և դրանից դուրս, ցավոք, մնում է չլուծված խնդիր անդրազգային կազմակերպված հանցավորության շղթաների գործունեության պատ-

ճառով: Կովկասի և Մերձավոր Արևելքի պատմական կապերն արտացոլված են համայնքների կյանքում, հատկապես Միջերկրական ծովի առափնյա պետություններում: Թուրքիայում բնակվում են զգալի թվով մարդիկ Հյուսիսային և Հարավային Կովկասից, այդ թվում՝ ադրբեջանցիներ, հայեր, չերքեզներ և օսեր: Լիբանանի բնակչության ակտիվ մեկ հատվածը էթնիկ հայեր են, մոտ 100.000 հայեր Սիրիան իրենց հայրենիքն էին անվանում մինչև 2011 թվականին երկրում սկսված քաղաքացիական սարսափելի պատերազմը: Մերձավոր Արևելքում ապրող հազարավոր հայեր արյունալի հակամարտությունների հետևանքով փախել են Հայաստան և Լեռնային Ղարաբաղ: Հայաստանն այսօր Եվրոպայի երրորդ երկիրն է Սիրիայից ընդունած փախստականների թվով: Հայաստանն անմիջականորեն մասնակցեց Մերձավոր Արևելքի գործողություններին՝ ԱՄՆ-ի պնդմամբ խաղաղապահների ջոկատ ուղարկելով Իրաք (նույնը արեցին Ադրբեջանն ու Վրաստանը), իսկ ավելի ուշ՝ Սիրիա՝ Ռուսաստանի պնդմամբ: Ինքնահռչակ «Իսլամական պետությունը» իր կազմ ներգրավեց արմատական իսլամականներին ամբողջ Հյուսիսային և Հարավային Կովկասից, ինչպես նաև Կենտրոնական Ասիայից և Ռուսաստանի տարբեր շրջաններից: Վրաստանը տարիներ շարունակ փորձում է կայունացնել Պանկիսի կիրճում անհանգիստ իրավիճակը՝ մի տարածաշրջան, որտեղ մուսուլմանական, չեչենական փոքրամասնություն է, որը եղել է արմատականացման օջախ և ապահով ապաստարան Հյուսիսային Կովկասի զինյալների համար: Հիշեցնենք, որ Պանկիսի կիրճը կրկին ուշադրության արժանացավ 2015-ից 2017 թվականներին, երբ լուրեր էին շրջանառվում, որ «Իսլամական պետության» հավաքագրողները Վրաստանի քաղաքացիներին ներգրավել են՝ Իրաքում և Սիրիայում մարտական գործողությունների մեջ, իսկ հավաքագրվածներից ոմանք դարձան Իսլամական պետության ազդեցիկ դաշտային հրամանատարներ: Ադրբեջանական զինյալները ժամանել էին Մերձավոր Արևելք՝ Սիրիայում հակամարտության ամենաթեժ պահին «Իսլամական պետության» կամ «Ջաբհաթ ան Նուսրա» խմբավորումներին միանալու համար: Ադրբեջանցիները կռվել են նաև Լիբիայում՝ ամենայն հավանականությամբ աջակցելով թուրքական միջամտությանը: 2020 թվականի աշնանն ակնհայտ էր, որ մոտ 2000 սիրիացի վարձկաններ կռվում են Ադրբեջանի օգտին, սակայն սուննի ծայրահեղականների հնարավոր ներկայությունը տարածաշրջանում չմտահոգեց նույնիսկ ռուսներին:

Սառը պատերազմի տարիներին Խորհրդային Միությունն օգտագործում էր Հարավային Կովկասը՝ ազդելու Մեծ Մերձավոր Արևելքի բոլոր երկրների և հատկապես՝ հարևան Իրաքի և Թուրքիայի վրա: Կոպիտ հաշվարկներով ադրբեջանցիները կազմում են Իրանի ընդհանուր բնակչության մոտ մեկ քառորդը: Ընդունելով Խորհրդային Միության կազմավորումից հետո առաջին տարիներին փախած ադրբեջանցիներին՝ Իրանն ու Թուրքիան ստեղծեցին ադրբեջանական հակախորհրդային ազգայնականության հենակետեր: Հաշվի առնելով աշխարհաքաղաքական լուրջ տարբերությունները՝ Բաքուն երկար ժամանակ շատ զգուշավոր է իրանական գաղտնի գործողություններից: Ադրբեջանի անվտանգության ծառայությունները պարբերաբար ձերբակալում են Իրանի և Ադրբեջանի քաղաքացիներին, որոնց կասկածում են Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի գործունեությանը աջակցելու մեջ: Բաքուն և Թեհրանը տարբեր տեսակետներ ունեն և տարբեր կերպ են գործում տարածաշրջանում: Այսօր Ադրբեջանը դիվանագիտական, տնտեսական և անվտանգային կապեր է պահպանում Իրանի երկու հիմնական հակառակորդների՝ Իսրայելի և Թուրքիայի հետ: Հայաստանն իրապես ունի խնդիր՝ նախաձեռնելու լուրջ տեղեկատվական-քարոզչական աշխատանք Միջերկրական ծովի ավազանի երկրներում: Անկասկած է, որ Հայաստանի նախկին նախագահ Սերժ Սարգսյանը, տասը տարի առաջ քարոզելով հայ-թուրքական հաշտեցման գաղափարը, իր հիմնական լսարանը տեսնում էր Մերձավոր Արևելքի հայերին: Այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են առևտուրը, ներդրումները և դիվանագիտությունը, այս համայնքները որպես գործընկերներ օդ ու ջրի պես պետք են Հայաստանին: Իրանը վաղուց յուրատեսակ աշխարհագրական և տնտեսական փրկօղակ է Հայաստանի համար, ինչը պարբերաբար բարդացնում է նրա հարաբերությունները ԱՄՆ-ի հետ: 2020 թվականին՝ Լեռնային Ղարաբաղի պատերազմի ժամանակ, Հայաստանը դիվանագիտական աջակցության և մարդասիրական օգնության համար դիմեց Կիպրոսին, Հունաստանին, Լիբանանին և Հորդանանին: Բոլոր չորս երկրներն էլ լարված կամ առնվազն «անհանգիստ» հարաբերություններ ունեն Թուրքիայի հետ, ինչը նրանց դարձնում է բնական դիվանագիտական գործընկերներ Երևանի հետ: Ադրբեջանը, իհարկե, չի կարող պարծենալ տպավորիչ սփյուռքով, սակայն Բաքուն ակտիվորեն իր շահերն առաջ է մղում իսլամական աշխարհում: 1990-ականներից ի վեր Իսլամական համագործակցության կազմակերպությունը բազմիցս ընդունել է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը հաստատող և Հայաստանի զորքերը Լեռնային Ղարաբաղից, որպես Ադրբեջանի միջազգայնորեն ճանաչված տարածքից, դուրս բերելու կոչեր: Իսլամական շատ երկրներ ՄԱԿ-ում և այլ միջազգային հարթակներում աջակցել են Ադրբեջանի բանաձևերին: ԽՍՀՄ փլուզմանը հաջորդած առաջին տարիներին Բաքուն մարդասիրական օգնություն էր ստանում Պարսից ծոցի մի քանի բարգավաճ երկրներից, ինչը նպաստեց երկրում իրավիճակի կայունացմանը և միգրացիոն հոսքերի կարգավորմանը:

Տնտեսական առումով Ադրբեջանից Վրաստանի տարածքով դեպի Թուրքիա էներգետիկ խողովակաշարերն ու տրանսպորտային միջանցքները կաս-

պիականի ռեսուրսների համար ճանապարհ բացեցին դեպի Հարավարևելյան Եվրոպա և Մերձավոր Արևելք՝ ինչը թույլ տվեց Ադրբեջանին ազդելու միջերկրածովյան մի շարք երկրների քաղաքականության վրա: Իսրայելը երկար ժամանակ փորձում է համոզել Ադրբեջանին քայլեր ձեռնարկելու Իրանի հետ կապված ռիսկերը նվազեցնելու ուղղությամբ:

Այսօր Իսրայել ներմուծվող նավթի մոտավորապես 40-45%-ը գալիս է Ադրբեջանից: Ընդ որում, Իսրայելն Ադրբեջանի համար երրորդ արտահանման շուկան է Իտալիայից և Թուրքիայից հետո: Իսրայելին էներգիայի մատակարարումը նպաստել է երկրների միջև կապերի ամրապնդմանը ինչպես քաղաքական, նույնպես և անվտանգության ոլորտում: Ադրբեջանը իսրայելական զենքի երկրորդ գնորդն է, ինչն ակնհայտ էր, երբ Բաքուն օգտագործեց իսրայելական անօդաչու թռչող սարքերը Ղարաբաղյան հակամարտության ժամանակ: Իսրայելը նաև հանդես է գալիս գյուղատնտեսության ոլորտում ավելի սերտ համագործակցության օգտին՝ նկատի ունենալով ածխաջրածիններից կախվածությունը նվազեցնելու Ադրբեջանի ցանկությունը: Ալբանիան և Իտալիան ադրբեջանական գազ են ստանում Ադրադրիատիկի գազատարով, որը Թուրքիայի տարածքով անցնող Անդրանատոլիական գազատարի շարունակությունն է՝ Վրաստանի հետ սահմաններից մինչև Հունաստանի հետ սահմանները: Այն թույլ է տալիս Ադրբեջանին թուրքական շուկա մատակարարելու 6 միլիարդ խորանարդ մետր գազ, իսկ լրացուցիչ 10 միլիարդ խորանարդ մետրը նախատեսված է Հարավային Եվրոպայի համար: Ադրբեջանի և Թուրքմենստանի միջև վերջերս ձեռք բերված համաձայնությունը Կասպից ծովում վիճելի Քյափազ (Սերդար) գազի հանքավայրի համատեղ շահագործման վերաբերյալ, ի վերջո, թույլ կտա Կենտրոնական Ասիայի գազը հասցնել միջերկրածովյան շուկաներ: Հարավային Կովկասի երկրները երկար ժամանակ հանդես են եկել էներգետիկ միջանցքների ստեղծման օգտին, սակայն այդ երթուղիների տնտեսական կենսունակությունը մեծապես կախված կլինի համաշխարհային էներգետիկ շուկաների փոփոխություններից և անցումից ապագայում ձևավորելիք ցածր պարունակությամբ ածխածնին: Հայաստանի և Ադրբեջանի միջև 2020 թվականի նոյեմբերին Մոսկվայի միջնորդությամբ ձեռք բերված զինադադարը նախատեսում էր երկու երկրների տարածքով նոր տրանսպորտային ուղիների ստեղծում: Տեսականորեն այդ ուղիները կարող են Ռուսաստանը կապել Թուրքիայի և Իրանի հետ՝ նոր կապեր ստեղծելով հարավի ու հյուսիսի, ինչպես նաև արևելքի ու արևմուտքի միջև: Դա հնարավորություն է և՛ ամրապնդելու ռուսական ներկայությունը տարածաշրջանում, և՛ դեպի Կասպից ու Միջերկրական ծովեր, ինչպես և Պարսից ծոց նոր ուղիներ հարթելու համար: Այս ծրագրերը անհանգստություն են առաջացնում Վրաստանում, քանի որ Ռուսաստանի կողմից ֆինանսավորվող ցանկացած նոր տրանսպորտային ենթակառուցվածք կխաթարի

Վրաստանի դերը՝ որպես Արևելք-Արևմուտք առևտրային առանցքային ճանապարհ Կասպից և Միջերկրական ծովերի միջև:

Նախատեսվող որոշ նախագծեր մտահոգիչ են նաև Հայաստանի համար՝ հաշվի առնելով նրա հարաբերությունները Բաքվի և Անկարայի հետ: Ակնհայտ է, որ Հայաստանի մտավախությունները, Արցախում կայունացման և խաղաղության հաստատման համապարփակ ծրագրի բացակայությունը և Իրանի շարունակական մեկուսացումը կբարդացնեն տարածաշրջանային տրանսպորտային կապերի այս նոր տարբերակի իրականացումը: Վերջին տասնամյակում Ռուսաստանի և Թուրքիայի հարաբերությունները նկատելիորեն բարելավվել են: Այդ հարցում էական դեր են խաղացել ավելի սերտ էներգետիկ կապերը. որպես օրինակներ նշենք «Թուրքական հոսք» գազատարը կամ «Աքքույու» ատոմակայանը: Անկարան նաև գնել է ռուսական ՀՕՊ համակարգեր, ինչը լարվածություն է առաջացրել Թուրքիայի և ՆԱՏՕ-ի միջև և, իհարկե, շատ ուրախացրել է Մոսկվային: Փոխըմբռնումը, որը հաստատվել է Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի և Ռուսաստանի առաջնորդ Վլադիմիր Պուտինի միջև՝ հատկապես արևմտյան բազմաթիվ քննադատների նկատմամբ նրանց ընդհանուր բացահայտ թշնամանքի պատճառով, բարենպաստ ազդեցություն է ունենում երկու պետությունների հարաբերությունների վրա: Սակայն երկրների հարաբերություններում կան նաև խնդրահարույց ոլորտներ: Թուրքիան և Ռուսաստանը հակադիր տեսակետներ ունեն Սիրիայում և Լիբիայում հակամարտությունների վերաբերյալ: Թուրքիան դատապարտում է Ռուսաստանի ագրեսիան իր եվրասիական հարևանների դեմ, դատապարտում է Ղրիմի բռնակցումը և խոսում Սև ծովում ռուսական ռազմածովային ուժերի կուտակման սպառնալիքի մասին: Անկարան շարունակում է ռազմական համագործակցությունը Կիևի հետ. 2021 թվականի ապրիլին Ուկրաինան Դոնբասի երկնքում օգտագործեց մի քանի թուրքական Bayraktar-TB2 հարվածային անօդաչու թռչող սարքեր (այդ անօդաչու սարքերը հաջողությամբ օգտագործվել են Ադրբեջանի կողմից 2020

թվականին): Միևնույն ժամանակ Ուկրաինայի արևելքում իրավիճակի սրման ժամանակաշրջանում Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկին ժամանեց Թուրքիա և մասնակցեց թուրք-ուկրաինական բարձր մակարդակի ռազմավարական խորհրդի նիստին, որին Էրդողանի հետ մասնակցում էր համանախագահի կարգավիճակով: Մոսկվայի գործողությունները Մերձավոր Արևելքում, Թուրքիայի եվրասիական նկրտումները և այն փաստը, որ և՛ Ադրբեջանը, և՛ Վրաստանը Անկարային նայում են որպես Ռուսաստանի հակակշռի, խթանում են ռուս-թուրքական մրցակցությունը: Թուրքիայում շահագրգիռ խմբերը խրախուսում են Անկարայի բազմաշերտ մոտեցումը Վրաստանի հետ հարաբերություններում: Վրաստանում թուրքական բիզնեսը լավ է զարգանում, և դրա սկիզբը դրվել է 1990-ականներին: Էրդողանի կառավարությունը զգալի դիվանագիտական աջակցություն է ցուցաբերում Վրաստանի տարածքային ամբողջականության հարցին, չի ճանաչում Աբխազիայի և Հարավային Օսիայի անկախությունը և դատապարտում է վրացական տարածքների շարունակվող օկուպացիան Ռուսաստանի կողմից: Միևնույն ժամանակ Թուրքիայում շատ ազդեցիկ աբխազական սփյուռքը, որն ունի հզոր լոբբի խորհրդարանում և գործարար շրջանակներում, նպատակ ունի զարգացնել առևտրային կապերն ու հարաբերությունները Աբխազիայի բնակչության հետ: Ադրբեջանը երկար ժամանակ ձգտել է ավելի ամուր կապեր հաստատել Թուրքիայի հետ՝ Անկարային դիտելով որպես միջազգային հարցերում իր ամենաուժեղ և վստահելի հովանավորի: Թուրքիան Ադրբեջանի և Վրաստանի տնտեսություններում հիմնական ներդրողներից մեկն է, և բոլոր երեք երկրները կապված են ճանապարհների, երկաթուղու և խողովակաշարերի միջոցով: Ադրբեջանը Թուրքիային համարում է լուրջ հակակշիռ ոչ միայն Ռուսաստանին, այլև ԱՄՆ-ին ու Եվրոպային, որոնք ավելի են կոշտացնում Ադրբեջանում մարդու իրավունքների իրավիճակի հետ կապված քննադատությունը: Ադրբեջանին Թուրքիայի անվերապահ աջակցությունը լրջորեն դանդաղեցրեց Ռուսաստանի միջնորդական ջանքերը 2020 թվականի Ղարաբաղյան պատերազմի առաջին շաբաթներին: Բաքվի և Անկարայի համառության շնորհիվ 2021 թվականի սկզբին ադրբեջանի տարածքում ստեղծվեց հրադադարի ռեժիմի մոնիտորինգի թուրք-ռուսական կենտրոն: Քանի որ Թուրքիայի ազդեցությունը Կովկասում մեծանում է, հարավկովկասյան բոլոր երեք պետություններն էլ ստիպված են մտածել, թե ինչպես հարմարվեն տարածաշրջանում Թուրքիայի աճող, իսկ Հայաստանի դեպքում՝ նաև Ռուսաստանի նվազող դերի մասին: Ճիշտ է, Անկարան ստիպված է հավասարակշռել իր ներկայությունը Հարավային Կովկասում և պահպանել հարաբերությունները Մոսկվայի հետ: Ռուսաստանը դեռ ձգտում է տարածաշրջանը պահել որպես իր գերակշռող ազդեցության գոտու մաս և այնքան էլ շահագրգռված չէ, որ Թուրքիան ավելի մեծ տարածաշրջանային տերության վերածվի: Այդուհանդերձ այն փաստը, որ Թուրքիան կարևոր դերակատարություն է ձեռք բերել Կովկասում, կատարված փաստ է, որի հետ այժմ Ռուսաստանը պետք է հաշվի նստի: Ինչպես նշել է Ստամբուլի Օկան համալսարանի միջազգային հարաբերությունների դոցենտ Հաբիբե Օզդալը, Ռուսաստանն ու Թուրքիան դաշնակիցներ չեն Կովկասում և Մերձավոր Արևելքում. նրանք պարտադիր չէ, որ հետապնդեն նույն նպատակները: Բայց քանի որ երկու ուժերը մշտապես խաչվում են միմյանց հետ, նրանք երբեմն ուղիներ են գտնում հաշտեցնելու իրենց հակասական շահերը, հարթելու սուր անկյունները: Մինչ Թուրքիան և Ռուսաստանը պայքարում են Կովկասում ազդեցության համար, այլ երկրներ նույնպես զբաղված են այստեղ իրենց ազդեցության հաստատմամբ: Թեև Չինաստանը աշխարհագրորեն հեռու է, բայց օգտվում է տարբեր հնարավորություններից՝ ուսումնասիրելով ենթակառուցվածքային նախագծերի հնարավորությունները Հարավային Կովկասում, Պարսից ծոցում և Միջերկրական ծովում: Նավահանգիստների, ճանապարհների և երկաթգծերի հետ կապված ամեն ինչ գտնվում է «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» լայնածավալ նախաձեռնության հետ կապված նախատեսությունների շրջանակում: Չինական ընկերությունները հետաքրքրություն են ցուցաբերել Վրաստանի և Ադրբեջանի ափերին ենթակառուցվածքային նախագծերի, ինչպես նաև հարավկովկասյան բոլոր երեք երկրներում ճանապարհների ու երկաթուղիների կառուցման հարցում: Այնուամենայնիվ այս նախագծերի շուրջ առաջընթացը դանդաղ է և ուղեկցվում է կոռուպցիայի, աշխատողների շահագործման և շրջակա միջավայրին հասցված վնասի վերաբերյալ լուրջ մեղադրանքներով: 2020 թվականին Անակլիայի զարգացման կոնսորցիումի (ի սկզբանե վրաց-ամերիկյան կազմակերպություն) հետ պայմանագիրը չեղարկելու Վրաստանի որոշումը Սև ծովում խորջրյա նավահանգիստ կառուցելու համար, վերակենդանացրել է Չինաստանի երկարամյա հետաքրքրությունը նախագծի նկատմամբ: Պեկինը, ըստ երևույթին, ձգտում է միացնել այն կառույցը, որը նա ստեղծել է Կենտրոնական Ասիայում նմանատիպ ակտիվների հետ, որոնք կամ վերահսկում են, կամ նախատեսում են օգտագործել Միջերկրական ծովում՝ Կովկասի ճանապարհով: Կովկասի նկատմամբ Չինաստանի հետաքրքրությունը, սակայն, կարող է ավելի շատ ցուցադրական լինել: Չինական ֆինանսական հոսքերը չիրականացան այնքան արագ, որքան սպասում էին տարածաշրջանի պետությունները: Տեղական առաջնորդները շարունակում են Պեկինը դիտարկել որպես տասնամյակների վաղեմության խնդիրները լուծելու հնարավորություն՝ կապված տարածաշրջանում ռուսական գերիշխող ներկայության սպառնալիքի, ինչպես և Ուկրաինայի դեմ Ռուսաստանի պատերազմի ստեղծած լարվածության հետ: Իրանը ևս բարձրաձայնում է Կովկասում իր հավակնությունների մասին: Թեհրա-

նը նախաձեռնել էր խաղաղության հաստատման իր ձևաչափը 2020 թ. Լեռնային Ղարաբաղի պատերազմի ամենաթեժ պահին Ռուսաստանի միջնորդությամբ հաստատված զինադադարից հետո: Իրանը աջակցեց 3+3 ձևաչափի գաղափարին, ինչը տարածաշրջանային համագործակցության մեխանիզմն է՝ առաջարկված Թուրքիայի կողմից, և որը կմիավորեր կովկասյան երեք պետությունները Ռուսաստանի, Իրանի և Թուրքիայի հետ:

Այս մեխանիզմն ավելի քան նման է Սիրիայում երեք տերությունների կողմից փորձարկված համագործակցության և ռազմական ջանքերի համադրմանը: Կովկասյան պետությունները, հատկապես՝ Վրաստանը, սառնասրտորեն արձագանքեցին այս առաջարկին: Արևմուտքի կամ այլ հզոր խաղացողների տեսքով հակակշիռ չունենալու դեպքում վրացիները գոյաբանական մակարդակով զգուշանում են տարածաշրջանում գերիշխելու Իրանի, Ռուսաստանի և Թուրքիայի ձգտումներից: Մյուս կողմից՝ Ադրբեջանի և Հայաստանի համար Իրանը Պարսից ծոցի տարածաշրջանի հիմնական արտահանման շուկան է: Երկու երկրները շարունակում են շահագրգռված մնալ հարավում տրանսպորտային ենթակառուցվածքների կառուցմամբ, որոնք կնպաստեն Պարսից ծոցի երկրների ավելի լայն շուկաների զարգացմանը:

Մինչև 2018 թվականի Իրանի տնտեսական դժվարությունները և կորոնավիրուսի համաճարակը Իրանից ժամանողները կարևոր գործոն էին Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում զբոսաշրջության ոլորտի զարգացման գործում: Որպես հիմնական աճի ոլորտ և զբաղվածության զգալի աղբյուր Հայաստանի և Վրաստանի տնտեսությունների համար՝ տարածաշրջանում զբոսաշրջությունը կենտրոնացած է հիմնականում փոքր բիզնեսում: Իրանից զբոսաշրջությունը գագաթնակետին է հասել 2017-2018 թվականներին, երբ Հայաստան է մուտք գործել 220 հազար իրանցի, Վրաստան՝ 320 հազար, Ադրբեջան՝ 360 հազար: Թվերը զգալիորեն նվազել են 2018 և 2019 թվականներին, թեև Իրանը դեռևս այն երկրների հնգյակում է, որտեղից ամենաշատ զբոսաշրջիկներն են գալիս Հարավային Կովկաս: Պարսից ծոցի այլ երկրներ նույնպես սկսել են ներդրումներ կատարել Հարավային Կովկասի երկրներում զբոսաշրջության, բանկային, շինարարության և էներգետիկայի ոլորտներում, սակայն նրանք հիմնականում ձեռնպահ են մնում քաղաքականությանը և ռազմական գործողություններին առնչվելուց՝ ի տարբերություն Մերձավոր Արևելքում իրենց պահվածքի, ինչպես, օրինակ՝ Սաուդյան Արաբիան՝ Եմենում, կամ Արաբական Միացյալ Էմիրությունները՝ Լիբիայում: Սաուդյան Արաբիան վերջերս հայտարարեց Ադրբեջանում հողմակայան կառուցելու համաձայնագրի մասին, իսկ ԱՄԷ-ն ավելի քան 2 միլիարդ դոլար է ներդրել համատեղ ներդրումային հիմնադրամում, որը ստեղծվել է 2016 թվականին: Վերջին տարիներին աճել է նաև ԱՄԷ-ի և Ադրբեջանի միջև առևտուրը, թեև 2019 թվականին

ցուցանիշները եղել են համեմատաբար ցածր՝ կազմելով 240 մլն դոլար: Նկատելի է առևտրային անհավասարակշռություն, քանի որ Էմիրություններից Ադրբեջան ներմուծումը զգալիորեն գերազանցում է Ադրբեջանի արտահանմանը: Բաքուն հույս ունի, որ Էմիրությունների ներդրումները կօգնեն Ադրբեջանին՝ վերականգնելու հայկական զինված ուժերի կողմից նախկինում ազատագրված տարածքները: Միևնույն ժամանակ Հայաստանն ու Վրաստանը Պարսից ծոցը դիտարկում են որպես գյուղատնտեսական արտահանման պոտենցիալ շուկա և ցանկանում են ազատ առևտրի համաձայնագրեր ապահովել Պարսից ծոցի համագործակցության խորհրդի հետ: Կովկասի հարուստ բնակիչները, այդ թվում՝ կազմակերպված հանցավորության հետ առնչվողները, նույնպես Դուբայը համարում են լավ վայր բնակություն հաստատելու կամ փող լվանալու համար:

Տարածաշրջանում խիստ ակտիվանում է Ֆրանսիան: Չնայած Մինսկի խմբին իրենց երկար անդամակցությանը՝ ոչ Ֆրանսիան, ոչ էլ Միացյալ Նահանգները չեն կարողացել կամ գուցե չեն ցանկացել միջնորդել անգամ ժամանակավոր զինադադարի հաստատմանը: Ադրբեջանը գտնում էր, որ երկու երկրներում էլ կան մեծ ու ազդեցիկ հայկական համայնքներ, ուստի նրանք չեն կարող լինել անաչառ բանակցողներ: Մյուս կողմից՝ այս պատերազմում Հայաստանն իրեն լքված էր զգում Արևմուտքի (և Ռուսաստանի) կողմից, քանի որ հրադադար ապահովելու՝ Թրամպի վարչակազմի կիսատ ջանքերը շատ ուշացած էին: Դեռևս պարզ չէ, թե Ջո Բայդենի վարչակազմը ինչպիսի ծրագրեր ունի հետպատերազմյան կայունացման, հաշտեցման և կառավարման նախագծերի համար. ոլորտներ, որտեղ կա արևմտյան աջակցության, ֆինանսավորման և մասնագիտական փորձաքննության կարիք: Բացի էներգետիկայի և հանքարդյունաբերության ոլորտում ԱՄՆ-ի երկու նշանակալի ներդրումներից, ինչպես նաև հայկական սփյուռքի դրամական փոխանցումներից և բարեգործական նվիրատվություններից՝ ԱՄՆ-Հայաստան տնտեսական կապերն աննշան են: Երևանը հուսով է, որ Հայաստանի և ԵՄ-ի միջև համապարփակ և ընդլայնված գործընկերության համա-



ձայնագիրը, ինչպես նաև քաղաքական և տնտեսական, այսպես կոչված, բարեփոխումների ուղղությամբ երկրի ջանքերը ճանապարհ կհարթեն Եվրոպայի ավելի մեծ տնտեսական ներգրավվածության համար: Չնայած տնտեսական գործընկերների շրջանակն ընդլայնելու վերջին փորձերին՝ դժվար թե Հայաստանին մոտ ապագայում դա հաջողվի՝ հաշվի առնելով երկրում Ռուսաստանի տնտեսական ազդեցությունը և Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի անդամակցությունը: 2020 թվականի պատերազմում կրած պարտության հետևանքով և ոչ միայն այս պատճառով ստեղծված քաղաքական անկայունությունը երկրում վատթարացնում է նաև ներդրումային միջավայրը: Իսկ Ադրբեջանի համար, չնայած լարված հարաբերություններին, ԵՄ-ն մնում է ամենամեծ առևտրային գործընկերը (չնայած այս առևտրի մեծ մասը էներգետիկ ոլորտում է և հիմնականում մեկ երկրի՝ Իտալիայի հետ): Մինչդեռ Վրաստանը դեռ ձգտում է դառնալ անդրատլանտյան համայնքի անդամ: Ի նշան Արևմուտքի հետ գործընկերության՝ նա հիմք է ստեղծել Թբիլիսիի մերձակայքում ՆԱՏՕ-ի ուսումնամարզական ճամբարի համար, թեև այս երկիրը գտնվում է ծայրահեղ անապահով վիճակում՝ կապված Վրաստանից տարածքների անջատման, ինչպես և Ռուսաստանի կողմից նրա ինքնիշխանությանը սպառնացող մշտական սպառնալիքների զգացողության հետ: Չնայած այն հանգամանքին, որ ԱՄՆ-ի հետ ապրանքաշրջանառության ծավալը չնչին է՝ խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու մասին Վրաստանի և ԵՄ-ի միջև կնքված համաձայնագիրը հանգեցրել է Վրաստանի քաղաքացիների համար վիզային ռեժիմի վերացմանը: Եվս մեկ անգամ կրկնենք, որ աշխարհաքաղաքական առումով Հարավային Կովկասը անցումային շրջանում է: Դադարելով լինել Խորհրդային Միության անքակտելի մասը՝ նա այսօր կապված է աշխարհի շատ ավելի մեծ թվով տարածաշրջանների հետ՝ գրտնվելով նրանց ազդեցության տակ և շփվելով նրանց հետ: Աճում է Հարավային Կովկասի պետությունների և Միջերկրականում և Պարսից ծոցում նրանց հարևանների փոխկախվածությունը: Այս միտումը տագնապ է առաջացնում Ռուսաստանում: Հասկանալի էր, սակայն, որ Ռուսաստանի ինքնաօտարման դեպքում (դա Փաշինյանի հայտնագործությունը չէ, մեր աչքի առաջ տեղի ունեցող իրողություն է), Հարավային Կովկասը, փաստորեն, հայտնվելու է իր պատմական, աշխարհաքաղաքական միջավայրում՝ որպես տարբեր ազդեցիկ հարևաններով շրջապատված տարածաշրջան: Տարածաշրջանն իր հերթին ենթարկվում է ավելի լայն գլոբալ զարգացումների ազդեցությանը: Վաշինգտոնի արտաքին քաղաքականության պասիվացումը Օբամայի, և ավելի շատ՝ Թրամփի օրոք, ժամանակին հանգեցրեց ամերիկյան մեկուսացման խորացմանը: Սրա հետևանքով առաջացած վակուումը դրդեց հարավկովկասյան բոլոր պետությունների ղեկավարներին՝ ձևավորելու խաչաձև հարաբերություններ, որոնք ավելի սերտորեն են կապում Կովկասը Մերձավոր Արևելքի, Միջերկրական ծովի և Ասիայի հետ: Ընդհանուր առմամբ, տարածաշրջանային ինտեգրումը կարող է դառնալ դրական գործոն: Այսօր Ռուսաստանում պետք է գիտակցեն, որ սա տրամաբանական գործընթաց է, երբ իր քաղաքական վայրիվերումների, ոչ հետևողական արտաքին քաղաքական ուղենիշերի պարագայում Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի կառավարությունները հետևում են Վաշինգտոնի ազդանշաններին՝ տեսնելու, թե արդյոք Բայդենի վարչակազմը հակված է ուշադրություն դարձնելու Հարավային Կովկասին:

Առաջին հայացքից ԱՄՆ-ի ներկայիս ձգտումը ձևավորելու Հնդկա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի առանցքը և Չինաստանի վերելքին արձագանքելու անհրաժեշտությունը հուշում են, որ Վաշինգտոնը կենտրոնանալու է ավելի հրատապ խնդիրների վրա այլուր: Բացի այդ՝ Բայդենի վարչակազմը բախվում է բավականին հրատապ գլոբալ և ներքին այլ խնդիրների հետ՝ սկսած տնտեսական վերականգնումից, ռասսայական արդարադատությունից և կլիմայի փոփոխությունից: Այս ֆոնին Հարավային Կովկասի առանցքային խաղացողները դժվար թե արժանանան Վաշինգտոնի ավելի լուրջ ուշադրությանը: Այնուամենայնիվ, ամերիկացի և եվրոպացի քաղա-

քական գործիչները կձգտեն ավելի կայուն, բարգավաճ և արևմտյան հստակ կողմնորոշմամբ Հարավային Կովկասի կայացմանը: Բայց դրան հնարավոր չէ հասնել միայն ցանկությամբ: Միայն լայնամասշտաբ բարեփոխումները տարածաշրջանին հնարավորություն կտան լուծելու կառավարման խորքային խնդիրները, տեղական հակամարտությունները, ինչպես նաև հնարավորություն կստեղծեն ինտեգրվելու ավելի լայն տարածաշրջանային (և համաշխարհային) տնտեսական և քաղաքական կառույցներին: Հայաստանում և Վրաստանում քաղաքական ճգնաժամերը ցույց տվեցին, որ հասարակությունները դեռևս խիստ բևեռացված են, իսկ ժողովրդավարական հետընթացն իրական սպառնալիք է: Այնուամենայնիվ, տարածաշրջանի երկրների քաղաքացիները հասկացել են, որ իրենց անհրաժեշտ է արդյունավետ կառավարություն և տնտեսություն: Հաճելի է, թե ոչ, սակայն ընկալելի է, որ Վաշինգտոնի արտաքին քաղաքական օրակարգի համար պատասխանատու թիմը Հարավային Կովկասի նկատմամբ մոտեցում մշակելիս ճանաչել է տարածաշրջանում տեղի ունեցող փոփոխությունները և խրախուսում է արագորեն ընդլայնվող կապերը մոտ և հեռու հարևանների հետ: Տարածաշրջանին այլևս չի կարելի նայել Ռուսաստանի և Արևմուտքի միջև զուտ մրցակցության պարզունակ պրիզմայով կամ, այսպես կոչված, ռուսական նեոիմպերիալիզմին ընդդիմանալու դերում: Տարածաշրջանի ճակատագիրը մշտապես վիճարկվում է զարգացող հզոր տերությունների կողմից և կրում ավելի լայն տարածաշրջանային ազդեցություն՝ գործընթացների ազդեցությունը՝ ներառյալ ծայրահեղականությունը, միգրացիան, էթնիկական լարվածությունը, էներգետիկ շուկայում փոփոխությունները: ԱՄՆ-ն ունի իր սեփական շահերը Հարավային Կովկասում, հատկապես Վրաստանում, որտեղ մեծ ներդրումներ են կատարվել պետական, քաղաքական և տնտեսական բարեփոխումների, պաշտպանության ամրապնդման և Արևմուտքին ինտեգրվելու ուղղությամբ: Սակայն ԱՄՆ-ի նախկին քաղաքականության բնույթը հուշում է, որ Վաշինգտոնը չունի և, ամենայն հավանականությամբ, Հարավային Կովկասում չի ունենա այնպիսի լուրջ ռազմավարական շահեր, ինչպիսիք ունեն մյուս

խոշոր խաղացողները: Հենց միայն ԱՄՆ-ի և Կովկասի միջև եղած հեռավորությունը հուշում է, որ Վաշինգտոնը չպետք է ձևացնի, թե դա գործոն չէ: Հեռավորությունը, իհարկե, չի նշանակում, թե Բայդենի վարչակազմը կանտեսի տարածաշրջանը՝ հատկապես հաշվի առնելով, որ այստեղ են Արևմուտքի որոշ խոշոր մրցակիցների (Չինաստան, Իրան և Ռուսաստան) և նրա ամենադժվար գործընկերների (Իսրայել, Թուրքիա, Սաուդյան Արաբիան) շահերը խաչվում: Վաշինգտոնը պետք է վերջապես ճանաչի այլ խաղացողների դերը, ինչպես նաև այն փաստը, որ նրանք նույնպես շահագրգռված են Հարավային Կովկասի կայունության հարցում, և ապավինի նրանց՝ օգտագործելու սեփական ներուժը տարածաշրջանում ընդհանուր շահերի պաշտպանության համար: Նոր մոտեցումը պահանջում է ԱՄՆ-ի հզորության ավելի նպատակային կիրառում և ավելի նուրբ գործիքակազմ՝ նախկինում Վաշինգտոնի կողմից առաջ մղվող զանգվածային փոխակերպման ծրագրերի փոխարեն, սովորաբար փոքր հաջողությամբ: Այս ենթատեքստում Հայաստանը ամենադժվարին վիճակում է ոչ միայն Եվրասիական տնտեսական համագործակցության բազմաթիվ սահմանափակումների պատճառով, այլև առաջին հերթին՝ ՀԱՊԿ-ին անդամակցության բերումով: Այո՛, պետք է ընդունենք, որ ՀԱՊԿ-ի համար գլխավոր փորձությունը 44-օրյա պատերազմն էր: Կազմակերպությունը, փաստորեն, ժամանակի քննությունը չհանձնեց: Սա լուրջ հիասթափություն առաջացրեց հայ հասարակության մեջ, որին չբավարարեց իրավական բացատրությունը, թե մարտերը տեղի են ունեցել Լեռնային Ղարաբաղում՝ ֆորմալ առումով Ադրբեջանի տարածքում: Ավելին, ժամանակ առ ժամանակ ադրբեջանական հրթիռները թռչում էին հենց Հայաստանի տարածք, Սյունիք և Վարդենիս, իսկ անօդաչուները՝ գրեթե մինչև Երևան: Ժամանակին Ադրբեջանը նույնիսկ ընդունել էր նման գնդակոծության փաստը՝ այն անվանելով «կանխարգելիչ հարված՝ խաղաղ բնակչության անվտանգությունն ապահովելու համար»: Տեսականորեն այս պայմաններում կարող էր գործել Հավաքական անվտանգության պայմանագրի 4-րդ հոդվածը, որի հիման վրա էլ

ստեղծվել է կազմակերպությունը: Դրանում ասվում է «Եթե մասնակից պետություններից մեկը ենթարկվի ագրեսիայի (զինված հարձակում, որը սպառնում է անվտանգությանը, կայունությանը, տարածքային ամբողջականությանը և ինքնիշխանությանը), ապա դա մասնակից պետությունների կողմից կդիտվի որպես ագրեսիա բոլոր պետությունների դեմ»: Որոշ հայ քաղաքական գործիչներ այն ժամանակ մատնանշեցին այս փաստը և պահանջեցին, որ Նիկոլ Փաշինյանը դիմի ՀԱՊԿ-ին, սակայն նա ինչ-ինչ պատճառներով չդիմեց: Փաշինյանը ՀԱՊԿ-ի օգնությանը պաշտոնապես դիմեց միայն 2021-ի գարնանը, երբ ադրբեջանական զինուժը սկսեց «սահմանը ճշտել» և դիրքավորվեց հայկական տարածքում: Ինչ-որ պահի ըստ դիտարկումների՝ Հայաստանի տարածքում գտնվել է մինչև հազար ադրբեջանցի զինվոր, իսկ սահմանի հյուսիսային հատվածներում նույնիսկ փոխհրաձգություններ են տեղի ունեցել: Աջակցության համար դիմելու ընթացակարգը մեկնարկել է, սակայն Դուշանբեում նախարարների հանդիպման ժամանակ դիմումը մերժվել է: Փաստն այն է, որ ՀԱՊԿ-ում դաշնակցին պաշտպանելու համար ուժեր օգտագործելու որոշումը կայացնում են մասնակից երկրների ղեկավարները: Բացի այդ՝ կա նաև ՀԱՊԿ նախագահի գործոնը՝ նա պետք է բարձրացնի օգնության հարցը: Նախագահը փոխվում է ամեն տարի, նա ղեկավարն է այն երկրի, որտեղ անցկացվում է ՀԱՊԿ Հավաքական անվտանգության խորհուրդը: 2020 թվականին դա Ռուսաստանն էր, իսկ 2021 թվականին՝ Տաջիկստանը: Այսինքն, որպեսզի Հայաստանը ՀԱՊԿ-ից իրական ռազմական օգնություն ստանար, Փաշինյանի կոչից հետո հարցը պետք է բարձրացներ Տաջիկստանի նախագահ Էմոմալի Ռահմոնը, իսկ մյուս բոլոր ղեկավարները միաձայն հավանություն տային օգնության տրամադրմանը, քանի որ կազմակերպությունում որոշումները ընդունվում են կոնսենսուսով: Ակնհայտորեն, գրեթե անհնար է այն իրավիճակը, երբ ՀԱՊԿ-ը կարող է իրական կոլեկտիվ պաշտպանական գործողություններ սկսել: Ժամանակակից պատերազմները սահմանային բախումներ են, դիվերսիա, դժվար ապացուցելի կիբերհարձակումներ: Իսկ ՀԱՊԿ կանոնադրությունը գրված է «Բարբարոսայի» պլանի ոճով լայնածավալ ռազմական հարձակման համար: Հայ հասարակությունը, բնականաբար, դաշնակիցների այս վերաբերմունքն ընկալեց որպես դավաճանություն: Հենց Հայաստանում էր, որ մարդիկ ամենաշատը ՀԱՊԿ-ի վրա հույս դրեցին, քանի որ այստեղ ռազմական սպառնալիքը միանգամայն իրական է: Այժմ հարցումները ցույց են տալիս, որ հարցվածների միայն 7%-ն է ակնկալում ՀԱՊԿ-ի օգնությունը, իսկ հայ քաղաքական գործիչները պարբերաբար քննադատում են կազմակերպությանը դանդաղկոտության համար: Անցած տարվա ընթացքում ՀԱՊԿ-ի երկրորդ փորձությունը նրա երկու անդամների զինված հակամարտությունն էր՝ Ղրղզստանի և Տաջիկստանի միջև ապրիլյան սահմանային պատերազմը, որի ժամանակ կիրառվեցին տանկեր և ականանետեր: Իրավիճակն այնտեղ արտառոց էր նրանով, որ մարտերի ժամանակ Ղրղզստանի պաշտպանության նախարարը և Անվտանգության խորհրդի քարտուղարը գտնվում էին թշնամու մայրաքաղաք Դուշանբեում, հենց ՀԱՊԿ պետությունների պաշտպանության նախարարների խորհրդի նիստում:



Ասել է, թե մասնակից երկրները չփորձեցին ինչ-որ կերպ բարելավել ՀԱՊԿ-ի իմիջը և գործերով ամրապնդել նրա սուբյեկտայնությունը: 2017 թվականին Ռուսաստանում քննարկվում էր այն հարցը, որ կազմակերպությունը պետք է պայքարի սպառնալիքների դեմ ոչ միայն իր սահմաններում, այլև հեռավոր մատույցներում, օրինակ՝ Սիրիայում: Հիշեցնենք, որ այն ժամանակ Մոսկվան դաշնակիցներին խնդրեց Սիրիա ուղարկել իրենց զորախմբերը, սակայն միայն Հայաստանը արձագանքեց՝ ակնհայտորեն ցանկանալով ցույց տալ իր առանձնահատուկ հավատարմությունը: Ճիշտ է, հայ զինվորականները չեն մասնակցել մարտերին՝ սահմանափակվելով ականազերծման գործողություններով: Երբ Դոնբասի շուրջ բանակցությունների ժամանակ խոսվեց խաղաղապահների հնարավոր տեղակայման մասին, ենթադրվեց, որ նրանք պետք է լինեն ՀԱՊԿ-ի ներկայացուցիչներ: Գլխավոր քարտուղարի տեղակալ Վալերի Սեմերիկովը նույնիսկ չբացառեց, որ դա կարող է տեղի ունենալ, եթե վերևներում քաղաքական որոշում լինի: Բայց դրանից հետո Դոնբասի կարգավորումը կանգ առավ, և նման լավատեսական սցենարն այլևս չի հիշվում:

Ի վերջո, ՀԱՊԿ-ի շրջանակներում փորձեցին ստեղծել ահաբեկչական կազմակերպությունների միասնական ցանկ: Բայց այս միտքը նույնպես անիրագործելի էր: Օրինակ՝ Հայաստանն ընդհանրապես չունի ահաբեկչական կազմակերպությունների սեփական ցանկ, մինչդեռ Տաջիկստանում այդ ցանկում ներառված է, օրինակ, ընդդիմադիր «Իսլամական վերածնունդ» կուսակցությունը, որը հանրապետության խորհրդարանում ներկայացված է եղել մինչև 2015 թվականը, որից հետո նրան մեղադրեցին երկրի նորագույն պատմության ընթացքում տեղի ունեցած գրեթե բոլոր ահաբեկչությունները կազմակեր-

պելու համար: Այս դեպքում տհաճ ընտրության առաջ կկանգնեին նաև Ղազախստանն ու Ղրղզստանը: Այժմ, որպեսզի չնեղացնեն իրենց թուրք գործընկերներին, նրանք պետք է Քրդական բանվորական կուսակցությունը (PKK) ճանաչեն որպես ահաբեկչական կազմակերպություն, իսկ Մոսկվան չի պատրաստվում նման զիջումների Անկարային: Հետևանքն այն է, որ ՀԱՊԿ-ն իրեն գրեթե ոչնչով չի արդարացնում՝ բացառությամբ ՆԱՏՕ-ի զորավարժություններին ի պատասխան կազմակերպված զորավարժությունները և «ռազմաքաղաքական իրավիճակի քննարկման» կլոր սեղանները: Նման հանդիպումների ժամանակ նրանք, ի թիվս այլ հարցերի, խոսում են այն «կենսաբանական սպառնալիքի» մասին, որն ԱՄՆ-ն ստեղծում է հետխորհրդային տարածքում գտնվող լաբորատորիաների միջոցով: Խնդիրն այն է, սակայն, որ Մոսկվային անհանգստացնող լաբորատորիաներ կան նաև Հայաստանում և Ղազախստանում, որոնք կազմակերպության անդամ են: Տեղին չէ խոսել նաև ընդլայնման միջոցով ՀԱՊԿ-ի վերակենդանացման հնարավորության մասին: Ռուսական իլյուզիաների դաշտում մի քանի տարի առաջ շատ էին վիճում Ադրբեջանի հնարավոր մուտքի մասին դաշինք, մանավանդ որ 1992-ին նա նույնպես ստորագրեց Հավաքական անվտանգության պայմանագիրը: Բայց, ըստ ամենայնի, դրանք Հայաստանին մեկուսացնելու Բաքվի դիվանագիտական մանևրներն էին միայն: Հիմա, Ղարաբաղյան երկրորդ պատերազմում հաղթանակից հետո, Ադրբեջանը դժվար թե ցանկանա իրեն կապել ավելորդ պարտավորություններով:

Մուտքի, ավելի ճիշտ՝ վերադարձի մյուս տեսական թեկնածուն Ուզբեկստանն էր, որը ՀԱՊԿ-ից դուրս եկավ 2012 թ: Երբ 2016-ին իշխանության եկած Շավքաթ Միրզոևը սկսեց բարելավել հարաբերությունները իր հարևանների հետ, ենթադրվում էր, որ Տաշքենդը կարող է վերադառնալ ՀԱՊԿ: Չէ՞ որ 2006 թվականին նա արդեն դադարեցրել էր իր մասնակցությունը, իսկ հետո վերադարձել: Չվերադարձավ, չէ՞: Մեր ասելիքը մեկն է: Տեսնես ե՞րբ Հայաստանում իշխանության եկած «կինդերսյուրպրիզների» մանկախումբը հանգիստ կթողնի «հանգուցյալին» դատափետելը և կզբաղվի գործով: Ռուսաստանը իրապես լուրջ խնդիրներ է կուտակել, և Հայաստանի խնդիրն է ճիշտ ժամանակին ընկալել, որ հյուսիսային քամիները կարող են ուղղությունը փոխել և դադարեցնել անիմաստ փոխհրաձգությունը: Ակնհայտ է, որ այն, ինչը ժամանակին կարելի էր համարել Ռուսաստանի տպավորիչ դիվանագիտական հաղթանակ, այսօր դառնում է թակարդ: Ռուսաստանի՝ իրար հերթ չտվող փոխարտգործնախարարների հայտարարությունները պարզած ձեռք են, և վկայում են նաև նրա մասին, որ ռուսական դիվանագիտությունը գործում է ծայրահեղ ցայտնոտի պայմաններում: Ռուսաստանը իր վրա էր վերցրել հսկայական պատասխանատվություն, և երբ ինչ-որ բան սկսում է այնպես չընթանալ, երկու կողմի համար էլ այդ երկիրը դառնում է դժգոհության թիրախ: Տողերիս հեղինակը առիթ ունեցել է հայտնելու այն տեսակետը, որ գերտերությունները դաշնակիցներ չեն ունենում դրանց անհրաժեշտության բացակայության պատճառով: Սակայն այսօր ստեղծվել է եզակի (ունիկալ) իրավիճակ, երբ Ռուսաստանը ոչ միայն որևէ դաշնակից չունի Հարավային Կովկասում, այլև չկա որևէ ուժ, որը տարածաշրջանում կներկայացնի այդ երկրի շահերը: Նման իրավիճակ չի եղել նույնիսկ 1917 թվականի աշնանը, երբ փլուզվեց ցարական Ռուսաստանը: Եվ Անդրկովկասյան սեյմում, և՛ կոմիսարիատում հայկական ֆրակցիաները կենաց և մահու կռիվ էին տալիս Այսրկովկասում Ռուսաստանի ներկայությունը պահպանելու համար: Այսօր բացառություն կարելի է համարել Հայաստանում տեղակայված 102-րդ ռազմաբազան և Արցախում տեղակայված խաղաղապահներին, սակայն երկուսի ճակատագիրն էլ կարծես օդից է կախված: Աշխարհաքաղաքական շախմատը, դիվանագիտությունը, ինչպես և ֆինանսները լռություն են սիրում: Միգուցե ժամանակն է, որպեսզի Հայաստանում իշխանության եկած դիլետանտ «ամենագետների» այս խմբակը, որը վայելում է «ժողովրդական լայն զանգվածների աջակցությունը» և կամ երկրի կազմաքանդման պատվեր է կատարում, կամ ընդամենը մոլորյալ է, ճիշտ ընկալի Մոսկվայից եկող ազդակները, դուրս գա հրապարակային պոպուլիզմի և փոխհրաձգության դաշտից և վերադառնա մեր գոյաբանական խնդիրների քննարկման՝ դարեր շարունակ ընդունված տարբերակին: Ռուսները ասում են, «в тиши кабинетов» (կաբինետների լռության մեջ): Մի բանում կարող ենք վստահ լինել: Ռուսաստանը ոչ մի տեղ չի գնում: Ռուսը Կովկասը իր տունն է համարում, և դժվար ինչ-որ մեկին հաջողվի նրան վռնդել իր տնից: Հին հակամարտությունը, ըստ Մոսկվայի ցանկության, կարող է պարզապես նոր ձևեր ստանալ, և պարտադիր պայման չէ, որ 21-րդ դարի Բյուզանդիան, անպայման, լինի հակադիր խրամատում: Դրան պետք է պատրաստ լինել: ■

Կենտրոնական Ասիան աշխարհաքաղաքական զարգացումների տիրույթում: Թյուրքական աշխարհի միավորման հնարավորությունները

Լուսինե Մխիթարյան
Միջազգայնագետ, լրագրող

Աշխարհաքաղաքական ներկա գործընթացների և ուժերի վերադասավորումների համատեքստում կարևոր նշանակություն ունեցող տարածաշրջաններից է Կենտրոնական Ասիան: Այն ռազմավարական առումով առավել մեծ հետաքրքրություն է ներկայացնում Ռուսաստանի, Չինաստանի, Միացյալ Նահանգների, Թուրքիայի համար: Նոր իրողությունների պայմաններում կարևորվում են տարածաշրջանի մարդկային, բնական, տնտեսական, էներգետիկ ռեսուրսները, ենթակառուցվածքային համակարգը, ինչպես նաև աշխարհագրական դիրքի ընձեռած հնարավորությունները: Օրինակ՝ հետխորհրդային տարածքով են անցնում ամենակարևոր տրանսպորտային ենթակառուցվածքները, որոնք կարող են կապել Արևմուտքի արդյունաբերական շրջանները Եվրասիայի հեռավորարևելյան շրջանների հետ: Դրա պահանջարկն առավել մեծացել է Ռուսաստան-Արևմուտք առճակատման հետևանքով, քանի որ Արևմուտքն այլընտրանքային տարբերակներ է փնտրում Ռուսաստանի տարածքով անցնող լոգիստիկ, կոմունիկացիոն, տրանսպորտային ուղիները շրջանցելու համար:

Խորհրդային տարիներին ձևավորված ենթակառուցվածքները, լեզվամշակութային տարածքը, արժեհամակարգային և գաղափարական հիմքերը խախտվել են: Կենտրոնական Ասիայի երկրներում Ռուսաստանի ունեցած բացարձակ վերահսկողության թուլացմանը զուգահեռ տարածաշրջանը հասանելի դարձավ համաշխարհային ուժային կենտրոնների ազդեցության համար: Սակայն վերոնշյալ քաղաքական դերակատարներից որևէ մեկը դեռևս միանձնյա գերակա դիրք չի ապահովել իր համար: Տնտեսական և ներդրումային քաղաքականության մասով բավականին թեժ մրցակցություն է ընթանում ԱՄՆ-ի, Չինաստանի, Ռուսաստանի ու Թուրքիայի միջև, լեզվամշակութային տարածությունում առավել ամուր են խորհրդային՝ ռուսական ժառանգությունն ու վերջին երեք տասնամյակներում արդեն թուրքականը, իսկ գաղափարական-արժեհամակարգային տիրույթում «պարարտ» հող ունեն թուրքականն ու արևմտյանը՝ ի դեմս ամերիկյանի, որոնք մասամբ դուրս են մղել խորհրդային ժառանգությունը: Ի վերջո, տարածաշրջանի գաղափարական և քաղաքական կողմնորոշման հիմքը կձևավորվի բազմաշերտ պայքարի արդյունքում:

Տնտեսական, քաղաքական էքսպանսիայի համար սովորաբար անհրաժեշտ են լինում գաղափարական հիմնավորումներ: Այսպես՝ Ջորջ Բուշ կրտսերի օրոք (2001-2009 թթ.) Կենտրոնական Ասիայում ԱՄՆ քաղաքականության հիմքը դարձավ «Մեծ Կենտրոնական Ասիայի» հայեցակարգը, որն ուղղված էր Ասիան ԱՄՆ-ի կողմից վերահսկվող միասնական աշխարհատնտեսական տարածքի վերածելուն: Այն ներառելու էր Կասպից ծովի տարածաշրջանը, Կենտրոնական Ասիան, Մերձավոր Արևելքը և Հարավային Ասիան: 2011 թվականին ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնի կողմից առաջարկվեց «Մետաքսի նոր ճանապարհ» հայեցակարգը, որն ուղղված է Միացյալ Նահանգների և Կենտրոնական Ասիայի պետությունների միջև գործընկերության ցանցի ընդլայնմանը: Ի դեպ, Միացյալ Նահանգների համար մեր տարածաշրջանը ևս հետաքրքրություն է ներկայացնում որպես ամբողջություն, մասնավորապես Հայաստանի ու Ադրբեջանի մասով այս գերտերությունը չի նախատեսում տարբեր մոտեցումներ և ծրագրեր: Նախագահ Ջոզեֆ Բայդենի կողմից 2022 թ. հոկտեմբերի 12-ին ստորագրված ԱՄՆ ազգային անվտանգության նոր ռազմավարության մեջ նշված է, որ աջակցելու են «Հարավային Կովկասում հակամարտությունը լուծելու դիվանագիտական ջանքերին», այլ կերպ ասած, «Հարավային Կովկաս» աշխարհաքաղաքական և տնտեսական միավորը Միացյալ Նահանգների համար հետաքրքիր է որպես միասնական հարթակ՝ միտված Ռուսաստանի ազդեցության նվազեցմանը կամ ընդհանրապես վերացմանը:

Կենտրոնական Ասիայի երկրների հետ հարաբերությունները կառուցելիս Ռուսաստանը հենվում է պատմամշակութային ընդհանրության և դրանով պայմանավորված մտածելակերպի նմանության, նաև աշխարհագրական մերձավորության վրա: Այդ մոտեցումը որպես հայեցակարգ և գաղափարախոսություն ձևավորվել և զարգացել է 20-րդ դարի 20-30-ական թվականներին ռուսական էմիգրանտ մտավորական-

նության շրջանում: «Եվրասիականության» գաղափարական դրույթներից ամենակարևորը Եվրասիայում բնակվող ժողովուրդների գենետիկ և մշակութահոգեբանական ընդհանրության ճանաչումն էր: Այդ գաղափարախոսության կրողները Ռուսաստանի ինքնաբավությունը տեսնում էին Ասիայի հետ կապերի վաղեմության մեջ՝ ի հակակշիռ պրոեվրոպական տրամադրությունների: Ժամանակակից եվրասիականությունը, ընդունելով պատմամշակութային և քաղաքակրթական գործոնների առկայությունը, ինտեգրացիան առաջարկում է զարգացնել՝ հիմնվելով նախևառաջ տնտեսական պրագմատիզմի վրա: Նշենք, որ 2014 թվականին ԵԱՏՄ ստեղծման փաստաթղթերի ստորագրման գագաթնաժողովում Ղազախստանի այն ժամանակվա նախագահ Նազարբաևի պահանջով վերջին պահին վերջնական փաստաթղթից հանվեց քաղաքական ինտեգրման մասին կետը՝ ԵԱՏՄ-ն թողնելով միայն տնտեսական բովանդակությամբ: Այդ վերջին հանգամանքը հուշում է, որ Կենտրոնական Ասիայի երկրներից առնվազն Ղազախստանը ձգտում է դիվերսիֆիկացնել իր արտաքին հարաբերությունները և որոշակի տարածություն ստեղծել ռուսական/խորհրդային ժառանգությունից:

Չինաստանը Կենտրոնական Ասիայի երկրների, մասնավորապես՝ Ղազախստանի, Ղրղզստանի և Տաջիկստանի հետ ունի 3300 կմ ընդհանուր սահման, ինչը բացատրում է Չինաստանի համար տարածաշրջանի կարևորությունն աշխարհաքաղաքական, աշխարհատնտեսական և անվտանգային առումով: Խորհրդային Միության փլուզումից հետո Չինաստանն անմիջապես ճանաչեց Կենտրոնական Ասիայի նորանկախ պետությունները և ավելի քան երեք տասնամյակների ընթացքում զարգացրեց համագործակցությունը կրթության, գիտության, տեխնոլոգիաների, մշակույթի, գյուղատնտեսության, առևտրի և այլ բնագավառներում: Ներկայումս, հաշվի առնելով Չինաստանի աշխարհատնտեսական մեծ կշիռը, կարող ենք արձանագրել, որ այն կարող է փոխել նաև տարածաշրջանի աշխարհաքաղաքական կառուցվածքը: Բնականաբար զարգացումները պայմանավորված են լինելու ոչ միայն չինական գործոնով, այլև տարածաշրջանով հետաքրքրված մյուս խոշոր դերակատարների վարած քաղաքականությամբ և Կենտրոնական Ասիայի երկրների աշխարհաքաղաքական կողմնորոշմամբ: Կենտրոնական Ասիայի հետ հարաբերություններ զարգացնելիս Չինաստանը նախընտրում է «փափուկ ուժի» գործիքակազմը և առաջին հերթին դրա օգնությամբ է ամրապնդում սեփական դիրքերը, ինչն «անվտանգային գոտի» է ստեղծում առնվազն արևմտյան կողմից: «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնության շրջանակներում Չինաստանը հարյուրավոր միլիարդների ներդրումներ է կատարում ամբողջ աշխարհում, այդ թվում՝ Կենտրոնական Ասիայի պետություններում:

ԱՄՆ-ի, Արևմուտքի կամ Թուրքիայի կողմից Կենտրոնական Ասիայի վրա վերահսկողության հաստատումը լոգիստիկ առումով կարող է խզում առաջացնել Ռուսաստանի և Հնդկաստանի, Ռուսաստանի և Արևմտյան Չինաստանի, ինչպես նաև Ռուսաստանի և Իրանի միջև: Ստեղծված պայմաններում Թուրքիան՝ ի դեմս նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի, առաջ է մղում թուրքական գերիշխանության ներքո թյուրքական պետություններն ու թյուրքալեզու ժողովուրդներին միավորելու ծրագիրը: Ինչ-որ առումով Թուրքիայի և Արևմուտքի շահերը համընկնում են, քանի որ Կենտրոնական Ասիայի նկատմամբ ռազմաքաղաքական, տնտեսական, իսկ Թուրքիայի պարագայում նաև քաղաքակրթական, գաղափարական, լեզվամշակութային գերակայության հասնելու արդյունքում թուլանալու է ոչ միայն Ռուսաստանի, այլև Չինաստանի ազդեցությունը: Միաժամանակ ընդգծենք, որ թյուրքական աշխարհի միավորման ուղղությամբ տարվող աշխատանքներին զուգահեռ Կենտրոնական Ասիայի պետությունները նախընտրում են հավասարակշռված արտաքին քաղաքականություն վարել, ինչը չի նպաստում «նոր դարաշրջան» բացելու Էրդողանի երազանքի կյանքի կոչմանը (միավորման ճանապարհին առկա խնդիրների մասին հաջորդիվ):

Էրդողանի ծրագիրն է՝ ազդել Եվրասիայի գոյություն ունեցող աշխարհաքաղաքական դրվածքի վրա և դառնալ համաշխարհային տերություն: 2021 թ. նոյեմբերին Թյուրքական խորհուրդը վերանվանելով Թյուրքալեզու պետությունների համագործակցության կազմակերպության՝ փաստացի ազդարարվեց թուրքակենտրոն համակարգի ստեղծման մասին, որտեղ Անկարան ձգտելու է անվիճելի առաջատար դառնալ: Հասկանալի է, որ թյուրքալեզու երկրներին և ժողովուրդներին Թուրքիայի հովանու ներքո միավորելու քայլերը նոր չեն սկսվել: Անկարան առաջիններից էր, որ ճանաչեց Կենտրոնական Ասիայի երկրների անկախությունը և սկսեց տարբեր հարթակներում հարաբերություններ զարգացնել: Մեկը մյուսի հետևից հայտնվեցին թյուրքական տարբեր կառույցներ՝ Թյուրքական ժողովուրդների համաշխարհային ասամբլեան, Թուրքական խորհուրդը, այժմ՝ ԹՊԿ, Թուրքական համագործակցության և զարգացման գործակալությունը (TIKA) և այլն: Թուրքիան մեծ ուշադրություն է դարձնում մշակութային, սոցիալական, հումանիտար ոլորտներին: 2022 թվա-

կանին ստեղծվել է «Թյուրքական աշխարհ» մեդիա հարթակը, որը միավորում է թյուրքական երկրների լրատվական գործակալությունները: Այն դիտվում է որպես թյուրքական պետությունների տեղեկատվական տարածքները միավորող ինստիտուտ: Արդեն իսկ ստեղծվել են թյուրքական պատմության, գրականության, աշխարհագրության միասնական դասագրքեր, որոնք ևս միտված են համապատասխան մտածողություն և աշխարհընկալում ձևավորելու ճանապարհով կերտելու թյուրքական միասնական ինքնություն: Եթե զենքով նվաճածը ինչոր ժամանակ կարելի է հետ վերցնել, ապա մշակութային-գաղափարական հարթությունում նվաճված հասարակություններն ու ազգերը կարող են զրկվել ինքնությունը վերանվաճելու հնարավորությունից:

Գիտության, կրթության, մշակույթի և կրոնի միջոցով թուրքական գաղափարախոսությունն ու արժեքները քարոզելուց բացի՝ մեծ ուշադրություն է դարձվում նաև ռազմական ոլորտում ինստիտուցիոնալ հարաբերությունների խորացմանը: Թուրքիայի հեռահար նպատակներից է կազմակերպության անդամ պետությունների հիմքի վրա թուրանական բանակի ստեղծումը՝ հաշվի առնելով այն, որ ռազմական բաղադրիչը չափազանց կարևոր է իրական ազդեցություն ապահովելու համար: Թուրանական բանակ ստեղծելու նախադրյալները դեռևս բավարար ուժեղ չեն, սակայն այդ ուղղությամբ առաջ գնալու համար Թուրքիան նախընտրում է զարգացնել երկկողմ համագործակցությունը:

Արցախյան երկրորդ պատերազմի արդյունքները շրջադարձային կետ էին, որը «կանաչ լույս» վառեց դեպի Կասպից ծով և Կենտրոնական Ասիա ելք ունենալու Թուրքիայի ծրագրերի համար: Թյուրքական աշխարհի կայացման մասին խոսելիս պետք է հստակ գիտակցենք, որ այն հակադրվում է հայկական աշխարհին: Միաժամանակ Հայաստանը շարունակում է բանալի լինել տարածաշրջանի նկատմամբ վերահսկողություն ունենալու համար: Վրացական Geocase վերլուծական կենտրոնի Մերձավոր Արևելքի ուսումնասիրությունների տնօրեն Էմիլ Ավդալիանին Պաշտպանական հետազոտությունների թագավորական միացյալ ինստիտուտի համար գրած «Թուրքիայի վերադարձը Կենտրոնական Ասիա»[1] (2021 թ. ապրիլի 1) հոդվածում նշում է, որ Ադրբեջանին Թուրքիայի ցուցաբերած աջակցությունը կարող է շատ ավելի մեծ հետևանքներ ունենալ, քանի որ Էրդողանը որպես ցատկահարթակ է օգտագործում Ադրբեջանի աշխարհագրական դիրքը Կենտրոնական Ասիա հասնելու համար: Նկատենք, որ Ադրբեջանի կլանման գործընթացը հաջողությամբ է ընթանում. ի վերջո, ցանկացած աջակցություն և օգնություն ունենում է իր գինը, թեև այս պարագայում այն փաթեթավորված է «մեկ ազգ, երկու պետություն» հրապուրիչ կարգախոսով: 2020 թվականի սեպտեմբերի 28-ին, այն է՝ Արցախյան երկրորդ պատերազմի մեկնարկի հաջորդ օրը, թուրքական պետական լրատվամիջոցներից մեկում հրապարակվել է Ադրբեջանի Միլի Մեջլիսի պատգամավոր Ջավանշիր Ֆեյզիևի «Մեր ուժը միասնության մեջ է. Ինչո՞ւ է մեզ պետք Թյուրքական պետությունների համագործակցությունը» վերտառությամբ հոդվածը[2], որտեղ հեղինակը զարգացնում է ԵՄ-ի օրինակով «Թյուրքական պետությունների միություն» ստեղծելու միտքը: Հոդվածը հետաքրքրական է ոչ միայն բարձրացված հարցերի և թեմայի ուղղվածությամբ, այլև այդ հարցերի արծարծման ժամանակագրության առումով: Միլի Մեջլիսի պատգամավորն առաջարկում է Ադրբեջանը կամուրջ համարել «թյուրքական աշխարհի» արևմուտքն ու արևելքը միավորելու հարցում: Ուշագրավ է, որ Ֆեյզիևը անկախ քաղաքականություն վարելու հարցում Թուրքմենստանին, Ուզբեկստանին, Ղազախստանին և Ղրղզստանին դիտարկում է որպես «սահմանափակ կարողություններ» ունեցող երկրներ, որոնք ստիպված են երբեմն «զիջել իրենց ազգային շահերը՝ միջազգային քաղաքականության իրավիճակին համապատասխան»: Նա լուծումը տեսնում է թյուրքական պետությունների ինտեգրման մեջ՝ բնականաբար Թուրքիայի առաջնորդությամբ:

Արցախում հայության դեմ թուրք-ադրբեջանական տանդեմի վարած պատերազմում թուրքական զենքի հաջողությունը մեծացրեց թուրքական ռազմարդյունաբերության արտադրանքների նկատմամբ հետաքրքրությունը: Այսպես՝ պատերազմից մեկ տարի անց (2021 թ. հոկտեմբեր) թուրքական «Baykar» ընկերությունը հայտարարել էր «Bayraktar TB2» հարվածային անօդաչու թռչող սարքերի արտահանման աշխարհագրության ընդլայնման մասին ինչպես արևմտյան երկրների ուղղությամբ, այնպես էլ՝ արևելյան, ինչպես, օրինակ՝ Ուզբեկստանն ու Ղրղզստանը: Ի դեպ, Ղրղզստանը ՀԱՊԿ առաջին երկիրն է, որը ցանկություն էր հայտնել գնելու թուրքական անօդաչուներ: «Բայրաքթար» սարքերն ավելի վաղ ցուցադրվել էին նաև Աշխաբադում Թուրքմենստանի 30-ամյակի կապակցությամբ անցկացված շքերթի ժամանակ: Անցած տարի մայիսին հայտնի դարձավ, որ Ղազախստանն առաջին օտարերկրյա երկիրն է, որտեղ կհիմնադրվի «ANKA» անօդաչու թռչող սարքերի արտադրություն: «Թուսաշ» օդատիեզերական ընկերությունը 2021-ին պայմանագիր էր կնքել ղազախական

կողմի հետ «ANKA» անօդաչու թռչող սարքերի մատակարարման վերաբերյալ, սակայն հետագայում «Թուսաշի» և «Kazakhstan Engineering»-ի միջև ստորագրված համագործակցության նոր համաձայնագրով պայմանավորվածություն էր ձեռք բերվել Ղազախստանում հիմնելու համատեղ արտադրություն: Ղազախական կողմի հետ ռազմարդյունաբերության ոլորտում համագործակցության ընդլայնումն այսօր էլ շարունակվում է: Հուլիսի վերջին կայացած IDEF-2023 միջազգային ցուցահանդեսում ղազախական «Ural Plant Zenit» գործարանը և ASFAT-ը՝ Թուրքիայի պաշտպանության նախարարության դուստր ձեռնարկությունը, պայմանավորվել են համատեղ ռազմածովային նավեր կառուցել ղազախական նավատորմի համար[3]: Ստամբուլում անցկացված միջազգային ցուցահանդեսի շրջանակներում Թուրքիան պաշտպանական համագործակցության համաձայնագիր և ֆինանսական օգնության իրականացման արձանագրություն է ստորագրել Տաջիկստանի հետ:

Թուրքիայի՝ Կենտրոնական Ասիա հասնելը թելադրված է նաև նրա էներգետիկ կարիքներով: Կենտրոնական Ասիայի թյուրքական պետությունների հետ հարաբերությունների խորացման շնորհիվ Թուրքիան հնարավորություն է ստանում հանդես գալու ոչ միայն որպես էներգակիրների տարանցման հանգույց՝ հասանելիություն ստանալով արևելքից արևմուտք ձգվող խողովակաշարերին, այլև երկաթուղային տարանցիկ երթուղիներին: Էներգիայի նոր աղբյուրներին Թուրքիայի հասանելիությունը լուծում է թե՛ տնտեսական և էներգետիկ խնդիրներ, թե՛ աշխարհաքաղաքական, քանի որ մեծացնում է Թուրքիայի կշիռը՝ զրկելով Ռուսաստանին ու Իրանին էներգետիկ փոխադրման միջանցքների մենաշնորհ ունենալու հնարավորությունից: Փափուկ ուժի միջոցով դեպի արևելք ծավալվելու համար Թուրքիան կարողացել է հասնել այն բանին, որ Ադրբեջանն ու Թուրքմենստանը դադարեցրել են Կասպից ծովում նավթի և գազի հանքավայրերի շուրջ ունեցած վեճը. 2021 թ. հունվարի 21-ին ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր, որով համաձայնություն է ձեռք բերվել Կասպից ծովի «Դոստլուկ» հանքավայրի համատեղ հետախուզման, արդյունահանման վերաբերյալ: Բնականաբար էներգետիկ համաձայնագրի ստորագրումը կյանքի կոչելը գտնվել է Թուրքիայի անմիջական հովանու ներքո, քանի որ Ադրբեջանի «բարիքներն» այսուհետ ծառայելու են նաև Թուրքիային: Չնայած ըստ որոշ գնահատումների՝ հանքավայրն ունի համեմատաբար փոքր պաշարներ, մասնավորապես՝ նախնական գնահատվում են 50-100 միլիոն տոննա նավթ և 30 միլիարդ խորանարդ մետր գազ և չի հանգեցնի արտադրության ծավալների կտրուկ աճի ո՛չ Թուրքմենստանում, ո՛չ էլ Ադրբեջանում, սակայն դրանով ճանապարհ կբացվի այլ նախագծերի համար: Դրանցից մեկը կարող է լինել Անդրկասպյան գազամուղի անցկացումը, որով Թուրքմենստանի գազի հսկայական պաշարներն Ադրբեջանի տրանսպորտային ենթակառուցվածքի միջոցով կկապվեն Թուրքիայի հետ՝ դեպի Եվրոպա գազ փոխադրելու համար: Տարիներ շարունակ Անդրկասպյան գազամուղի կառուցման խնդիրը մեծ հետաքրքրություն է ներկայացրել Արևմուտքի համար, քանի որ Կենտրոնական Ասիայից գազի նոր պաշարների ստացմամբ հնարավոր կլիներ թուլացնել կախվածությունը Ռուսաստանից:

Ամփոփելով՝ նշենք, որ տարածաշրջանային գործընթացները բավականին հակասական են դինամիկ զարգացման վերաբերյալ կանխատեսումներ անելու համար: Կենտրոնական Ասիայի պետություններն անկախության շրջանում անցել են խորհրդային անցյալը ժխտելու ճանապարհով, փորձել դիվերսիֆիկացնել հարաբերությունները միջազգային և տարածաշրջանային առանցքային քաղաքական դերակատարների միջև, զարգացման նախադրյալները փնտրել են քաղաքակրթական, պատմաքաղաքական, կրոնական, տնտեսական հետաքրքրությունների հենքով: Հստակ է սակայն այն, որ Կենտրոնական Ասիան էական դերակատարություն է ունենալու ապագա միջազգային անվտանգային միջավայրի ձևավորման հարցում, և այդ տարածաշրջանում ընթացող զարգացումներն ազդելու են աշխարհաքաղաքական քարտեզի վերափոխման վրա:

Օգտագործուած աղբիւրներ

1. https://rusi.org/explore-our-research/publications/commentary/turkeys-return-central-asia:
2. https://www.trtrussian.com/mnenie/nasha-sila-v-edinstve-zachem-nuzhno-sodruzhestvo-tyurkskih-gosudarstv-2918003:
3. https://www.zakon.kz/ekonomika-biznes/6401761-turetskaya-kompaniya-pomozhet-postroit-boevye-korabli-dlya-kazakhstanskogo-flota.html:

Իրանի՝ ԲՐԻՔՍ-ի դաշինքին անդամակցության հնարավոր ազդեցությունը

Նարե Գևորգյան
ԵՊՀ իրանագիտության ամբիոնի դասախոս

Մոտ մեկ տարի առաջ, երբ Իրանը պաշտոնապես հայտարարեց BRICS-ին միանալու մասին, չէր սպասվում, որ BRICS-ի կողմից հրավերը կլինի մեկ տարուց քիչ անց: Այս համատեքստում պետք է ընդգծել, որ Իրանի միացումը ՇՀԿ-ին տևել է շուրջ 15 տարի:

BRICS-ին միանալը Իրանի նախագահ Էբրահիմ Ռաիսիի կառավարության ռազմավարական որոշումներից է: Այս կառավարությունը, ըստ երևույթին, պրագմատիկ և իրատեսական է դիտարկում BRICS դաշինքի տնտեսական ներուժը՝ չփորձելով այն օգտագործել ներքաղաքական շահերի համար: Իրանը ցանկանում է դիմակայել ամերիկյան հեգեմոնիային և շարժվել հարավի համաչափ զարգացմանն ու ապադոլարացմանը զուգահեռ: BRICS-ը արևմտյան տնտեսության ամենամեծ մարտահրավերն ու մրցակիցն է, քանի որ այս խմբի նպատակն է փոխել միջազգային տնտեսական համակարգը և ստեղծել արդար տնտեսական կարգեր:

Վերադառնալով վերջերս Հարավային Աֆրիկայում կայացած Բրիքսի գագաթնաժողովից՝ Ռաիսին ասաց, որ Իրանը չի կիրառի արտաքին քաղաքականությունը ներքին քաղաքական շահերի համար՝ նշելով. «Մենք ձգտում ենք ապահովել ազգային շահերը, ներառյալ պատժամիջոցների վերացումը և հարևան պետությունների հետ հարաբերությունները»:

Ռաիսին գագաթնաժողովում հայտարարել է, որ Իրանն ունի «եզակի հնարավորություններ» և «պատրաստ է մասնակցել BRICS-ի գործառույթների բոլոր երեք ոլորտներին՝ քաղաքական-անվտանգության, տնտեսական-ֆինանսական և սոցիալական»: «Իր եզակի տարանցիկ դիրքով, հսկայական էներգետիկ ռեսուրսներով և բարձր գիտական ու ինժեներական կարողություններով Իրանը ցանկանում է համագործակցել BRICS-ի անդամների հետ համատեղ տնտեսական և ներդրումային նախագծերում»[1]: Է. Ռաիսին կրկին շեշտել է, որ Իրանի Իսլամական Հանրապետության ներկայությունը BRICS-ում նոր քայլ է միջազգային աշխարհում արդարության, էթիկայի և կայուն խաղաղության հաստատման ուղղությամբ: ԻԻՀ նախագահը ելույթի ընթացքում նշել է, որ աֆրիկյան մայրցամաքի քաղաքական և տնտեսական կշիռն օրեցօր ավելանում է, և զարգացող աշխարհի ապագայի կարևոր մասը տեղի է ունենում աֆրիկյան մայրցամաքում. «Իրանը միշտ եղել է Աֆրիկայի բարեկամը. Իրանի օրակարգում է աֆրիկյան երկրների հետ երկկողմ ու բազմակողմ համագործակցության ամրապնդումը»[2]:

Գագաթնաժողովի աշխատանքային հանդիպումների շրջանակներում իրանական կողմի հետ ունեցած զրույցի ընթացքում չինական պատվիրակությունը ևս մեկ անգամ նշել է, որ Իրանի անդամակցությունը BRICS-ին ամրապնդում է այս խմբի սկզբունքային մոտեցումները, այդ թվում՝ հակադրվել ամերիկյան միակողմանիությանը:

Չինաստանը պատրաստակամություն է հայտնել ամրապնդել և զարգացնել երկկողմ համագործակցությունը տարբեր ասպարեզներում: Անդրադառնալով Իրանի և Չինաստանի միջև ձեռք բերված համաձայնություններին՝ նախագահն ընդգծել է երկու երկրների միջև 25-ամյա ռազմավարական համագործակցության շրջանակներում պայմանավորվածությունների իրականացումը[3]:

BRICS-ի գագաթնաժողովի շրջանակում Իրանի հետ երկկողմ համաձայնություն է ձեռք բերվել Հարավային Աֆրիկայում հինգ նավթավերամշակման գործարաններ զարգացնելու վերաբերյալ, մինչդեռ Թեհրանը բանակցություններ է վարել նաև BRICS-ի նոր զարգացման բանկին միանալու համար. քայլ, որը կարող է օգնել նրան ապահովել ֆինանսավորում կարևոր ենթակառուցվածքային նախագծերի համար, ինչպիսին է «Հյուսիս-Հարավ» միջանցքը, որը կապում է Հնդկաստանը Ռուսաստանին Իրանի միջոցով: Այս համագործակցության ամրապնդումը կարող է ապահովել երկու երկրների և ժողովուրդների շահերը, ինչը ընդգծվել է Իրանի և Հնդկաստանի նախագահների հանդիպման ընթացքում[4]: Բավականին հետաքրքիր էր, որ հանդիպումից հետո Հնդկաստանի նախագահ Նարենդրա Մոդին իր թվիթերյան էջում պարսկերենով թվիթ է արել, որտեղ մասնավորապես նշել է. «Ես հիանալի հանդիպում ունեցա նախագահ Էբրահիմ Ռաիսիի հետ: Ես ուրախ եմ, որ Իրանը կմիանա BRICS-ին: Քննարկեցինք Հնդկաստանի և

Իրանի միջև առևտրային և մշակութային համագործակցության խորացման ուղիները»[5]:

Իրանի կառավարության վերլուծական կենտրոնները, սակայն, պնդում են, որ Իրանը պետք է իրատես լինի BRICS-ի հնարավորությունների նկատմամբ և չհամարի նրան հակաարևմտյան ուժ: BRICS-ում դեռևս բացակայում է անդամների միջև քաղաքական և ռազմավարական լիարժեք համակարգումը, և ներքին մրցակցությունը պետությունների միջև, ինչպիսիք են Չինաստանը և Հնդկաստանը, մնում է ԱՄՆ-ի հիմնական գործիքը՝ խմբի արդյունավետությունը զսպելու համար:

Ավելին, ԱՄՆ-ի հետ Հնդկաստանի ռազմավարական հարաբերությունները և աշխարհատնտեսական նախաձեռնություններին մասնակցությունը, ինչպիսին է I2U2-ը, որը գործընկերություն է Հնդկաստանի, Իսրայելի, ԱՄԷ-ի և ԱՄՆ-ի միջև, ցույց են տալիս, որ արևմտյան առանցքային գործընկերները շարունակում են կարևոր մնալ Նյու Դելիի համար:

ԱՄՆ-ի, այսպես կոչված, երկրորդական պատժամիջոցները, որոնք ուղղված են Իրանի հետ բիզնես անող մարդկանց և կազմակերպություններին, ևս մեկ խոչընդոտ են BRICS-ի նման խմբին անդամակցությունից լիարժեք ֆինանսական օգուտներ քաղելու համար: Օրինակ՝ Իրանը, ամենայն հավանականությամբ, դեռևս չի կարողանա վարկ ստանալ BRICS երկրների կողմից ստեղծված զարգացման բանկից:

Թեև չի ակնկալվում, որ BRICS-ին միանալը կօգնի լուծել Իրանի ահռելի տնտեսական խնդիրները, խմբին միանալու հիմնական առավելությունը, փորձագետների կարծիքով՝ կլինի ապացուցել, որ Թեհրանն ունի հզոր ընկերներ: Դա կարող է նրան լծակ ընձեռել Միացյալ Նահանգների հետ հետագա բանակցություններում:

Այնուամենայնիվ, Իրանի միացումը BRICS երկրներին (Բրազիլիա, Ռուսաստան, Հնդկաստան, Չինաստան և Հարավային Աֆրիկա) կարող է ունենալ մի քանի հավանական ազդեցություն.

1. Տնտեսական հնարավորություններ. Իրանի ընդգրկումը BRICS-ում կարող է նոր տնտեսական հնարավորություններ բացել երկրի համար: Այն կարող է ամրապնդել առևտրային և ներդրումային կապերը BRICS-ի երկրների հետ՝ հանգեցնելով արտահանման ներուժի և ավելի մեծ սպառողական շուկա մուտք գործելու:

2. Էներգետիկ համագործակցություն. Իրանը նավթի և գազի խոշոր արտադրող է, և նրա ընդգրկումը BRICS-ում կարող է ամրապնդել էներգետիկ համագործակցությունը խմբի ներսում: Սա կարող է հանգեցնել էներգետիկ գործընկերությունների, համատեղ ձեռնարկությունների և տեխնոլոգիաների փոխանցումների ավելացման, ինչը օգուտ կբերի ինչպես Իրանին, այնպես էլ BRICS երկրներին:

3. Աշխարհաքաղաքական ազդեցություն. Իրանի միանալը BRICS-ին կարող է մեծացնել նրա աշխարհաքաղաքական ազդեցությունը և հարթակ տրամադրել իր շահերն ու մտահոգությունները համաշխարհային հարթակում բարձրաձայնելու համար: Սա կարող է ամրապնդել Իրանի դիրքերը միջազգային բանակցություններում և որոշումների կայացման գործընթացներում:

4. Տարածաշրջանային կայունություն. Իրանի ընդգրկումը BRICS-ում կարող է նպաստել տարածաշրջանային կայունությանը, հատկապես Մերձավոր Արևելքում: Շփվելով BRICS երկրների հետ՝ Իրանը կարող է հնարավոր ուղիներ գտնել դիվանագիտական երկխոսության և հակամարտությունների կարգավորման համար, ինչը կհանգեցնի լարվածության նվազեցմանը և տարածաշրջանում կայունության ավելացմանը:

5. Պատժամիջոցներից խուսափում. Իրանը նախկինում բախվել է զգալի տնտեսական պատժամիջոցների, հատկապես արևմտյան երկրների կողմից: BRICS-ին միանալը կարող է Իրանին ապահովել այլընտրանքային տնտեսական ցանցով, որն ավելի քիչ է կախված արևմտյան շուկաներից՝ հնարավորություն տալով շրջանցել կամ նվազագույնի հասցնել պատժամիջոցների ազդեցությունը:

6. Ենթակառուցվածքների զարգացում. BRICS երկրներն ակտիվորեն ներգրավված են ենթակառուցվածքների զարգացման նախագծերում ամբողջ աշխարհում: Իրանի ընդգրկումը կարող է ներդրումներ և աջակցություն տրամադրել երկրում ենթակառուցվածքային նախագծերի համար՝ հանգեցնելով տրանսպորտային, էներգետիկայի և կապի ցանցերի բարելավմանը:

Այսպիսով՝ կարելի է ենթադրել, որ Թեհրանն ակնհայտորեն ակնկալում է, որ BRICS-ին միանալը նոր հնարավորություններ կստեղծի՝ հեշտացնելու արտաքին առևտուրը՝ առանց կախվածության դոլարից և արևմտյան ֆինանսական համակարգից: Միևնույն ժամանակ Ռաիսիի կառավարությունը ցանկանում է բազմազանեցնել արտաքին ֆինանսական և տնտեսական հարաբերությունները գլոբալ հարավի հետ՝ փորձելով համընդհանուր շահերը օգտագործել սեփական նպատակների իրագործման համար:

Ծանոթագրություններ

1. https://web.telegram.org/k/#@reisi_ir:
2. https://web.telegram.org/k/#@reisi_ir:
3. https://web.telegram.org/k/#@reisi_ir:
4. https://web.telegram.org/k/#@reisi_ir:
5. https://web.telegram.org/k/#@reisi_ir:

Տարածաշրջանային նոր զարգացումների պայմաններում ռուս-իրանական փոխգործակցության հեռանկարները. ընդհանուր ակնարկ

Լիանա Պետրոսյան
Պատմ. գիտ. թ., ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի ավագ լաբորանտ, դասախոս

Հարավային Կովկասում ռուս-իրանական փոխգործակցության հեռանկարների վրա ազդում են մի քանի գործոններ, այդ թվում՝ տարածաշրջանային նոր զարգացումները: Մինչև վերջերս ռուս-իրանական հարաբերությունները եղել են հետևողականորեն բարեկամական՝ զարգանալով առանց առանձնահատուկ վերելքների ու վայրէջքների: Այնուամենայնիվ, Ուկրաինայում ռուսական զինված ուժերի հատուկ ռազմական գործողության մեկնարկից հետո Ռուսաստանի հարաբերությունների կտրուկ սրումը արևմտյան երկրների հետ և Ռուսաստանի վրա արևմտյան պատժամիջոցների ճնշման ուժեղացումը արմատապես փոխեցին միջազգային աշխարհաքաղաքական լանդշաֆտը և խթան հաղորդեցին Մոսկվայի և Թեհրանի միջև մերձեցմանը: Վերջինս ավելի քան քառասուն տարի գտնվում է Արևմուտքի խիստ պատժամիջոցների տակ և ենթարկվում է մշտական ռազմական ու քաղաքական սպառնալիքների:

Պատմականորեն Ռուսաստանը և Իրանը Հարավային Կովկասում փոխգործակցության երկար պատմություն ունեն: Երկու երկրներն էլ ունեն ընդհանուր շահեր տարածաշրջանում՝ ներառյալ անվտանգությունը, էներգետիկան և առևտուրը: Աշխարհաքաղաքական առումով Հարավային Կովկասը ռազմավարական նշանակություն ունի ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Իրանի համար: Այն ծառայում է որպես Կասպից ծովից դեպի համաշխարհային շուկաներ էներգառեսուրսների տարանցիկ ուղի, ինչպես նաև ելք է ապահովում դեպի Սև և Միջերկրական ծովեր, ուստի երկու երկրներն էլ ձգտում են պահպանել իրենց ազդեցությունը տարածաշրջանում՝ սեփական շահերը պաշտպանելու համար:

Տարածաշրջանային վերջին զարգացումները, ինչպիսիք են Արցախի հետ տեղի ունեցած ողբերգական իրադարձությունները, իրադրության սրումը և փոփոխվող քաղաքական դաշտը Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում, փոխել են Հարավային Կովկասում քաղաքական գործընթացների դինամիկան: Այս փոփոխությունները հնարավորություններ են ստեղծում ռուս-իրանական համագործակցության ընդլայնման համար, հատկապես այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են ենթակառուցվածքների զարգացումը, առևտուրը և տարածաշրջանային անվտանգությունը:

Խոսելով տնտեսական համագործակցության մասին՝ պետք է փաստել, որ Ռուսաստանն ու Իրանն արդեն իսկ տնտեսական համագործակցություն են հաստատել տարբեր ոլորտներում՝ ներառյալ էներգետիկան, տրանսպորտը, գյուղատնտեսությունը, ուստի ասվածի համատեքստում Հարավային Կովկասը կարող է որպես դարպաս ծառայել այս համագործակցության

հետագա ընդլայնման համար: Համատեղ նախագծերը, ինչպիսին է «Հյուսիս-Հարավ» տրանսպորտային միջանցքի ծրագիրը, կարող են ուժեղացնել կապը երկու երկրների միջև և ավելի լայն իմաստով՝ տարածաշրջանում:

Հատկանշական է նաև, որ և՛ Ռուսաստանը, և՛ Իրանը մտահոգություններ ունեն տարածաշրջանային անվտանգության սպառնալիքների վերաբերյալ՝ ներառյալ ահաբեկչությունը, ծայրահեղականությունը և անջատողականությունը: Հետախուզության փոխանակման, ահաբեկչության դեմ պայքարի ջանքերի և համատեղ զորավարժությունների ոլորտում համագործակցությունը կարող է օգնել հաղթահարելու այդ մարտահրավերները և ապահովելու կայունությունը Հարավային Կովկասում: Ասվածի համատեքստում կարևոր դերակատարում ունի նաև միջազգային համատեքստը, քանի որ ներկայում երկու երկրներն էլ ենթարկվում են պատժամիջոցների և լարված հարաբերություններ ունեն Արևմուտքի հետ: Այս ընդհանուր մարտահրավերը կարող է տարածաշրջանային խնդիրների շուրջ ավելի սերտ համագործակցության և համակարգման խթան լինել:

Ընդհանուր առմամբ պետք է փաստել, որ ռուս-իրանական փոխգործակցության հեռանկարների վերլուծությունը Հարավային Կովկասում նոր տարածաշրջանային և աշխարհաքաղաքական զարգացումների պայմաններում ներառում է ներկա դինամիկան և ապագա հնարավոր սցենարների դիտարկումը: Այս պայմաններում Մոսկվան և Թեհրանը «Առանցք դեպի արևելք» կուրսի շրջանակներում սկսեցին ակտիվորեն ամրապնդել կապերն ու համագործակցությունը այն պետությունների հետ, որոնք չեն ենթարկվում ամերիկյան գերիշխանությանը և ցանկանում են բարեկամական հարաբերություններ զարգացնել Ռուսաստանի Դաշնության և Իրանի Իսլամական Հանրապետության հետ:

Նաև պետք է հաշվի առնել տարածաշրջանային հավասարակշռության փոփոխությունը: Վերջին տարինե-

ին Հարավային Կովկասը զգալի տեղաշարժեր է ապրել, մասնավորապես՝ 2020 թ. 44-օրյա ռազմական ակտիվ գործողությունների և դրանց հաջորդած գործընթացների հետ կապված: Սա առաջ է բերել նոր ստատուս-քվո, երբ Ադրբեջանը մտել է Հայաստան և տարածքների վրա է իշխում, Արցախի անկախ մնացած հատվածի օկուպացումն ու արցախահայության հայտնվելը ցեղասպանության շեմին: Տարածաշրջանային փոփոխված իրադրության պայմաններում Հարավային Կովկասում մեծացել է Թուրքիայի, Իսրայելի և Արևմուտքի ներկայությունը, որոնք այս կամ այն կերպ Իրանի և Ռուսաստանի քաղաքական մրցակիցներն են, ուստի այս երկու երկրները պետք է ակտիվ ջանքեր գործադրեն տարածաշրջանում իրենց դիրքերն ամրապնդելու համար:

Այնուամենայնիվ կան նաև մարտահրավերներ, որոնք կարող են խոչընդոտել ռուս-իրանական փոխգործակցության հեռանկարներին: Թեև Ռուսաստանը և Իրանը ընդհանուր շահեր ունեն Հարավային Կովկասում, նրանք ունեն նաև տարբեր նպատակներ: Օրինակ՝ Ռուսաստանը ձգտում է պահպանել իր ազդեցությունը տարածաշրջանում, իսկ Իրանը նպատակ ունի ընդլայնել սեփական տարածաշրջանային ազդեցությունը: Այս մրցակցող շահերը կարող են լարվածություն առաջացնել և սահմանափակել համագործակցության շրջանակը:

Ռուսաստանը ավանդաբար գերիշխող դիրք է զբաղեցնում Հարավային Կովկասում իր պատմական կապերի, ռազմական ներկայության և քաղաքական ազդեցության շնորհիվ: Չնայած Ուկրաինայում հատուկ գործողությանը՝ այս գերակայությունը, ամենայն հավանականությամբ, կշարունակվի նաև հետագայում, քանի որ Ռուսաստանը Հայաստանում պահպանում է իր ռազմաբազաները և խաղաղապահ զորախումբը դեռևս գտնվում է Արցախում: Ուստի այս դիրքավորումը Ռուսաստանին հավելյալ լծակներ է տալիս տարածաշրջանային դինամիկան ձևավորելու և ռուս-իրանական փոխգործակցության վրա ազդելու համար:

Ինչ վերաբերում է Իրանին, ապա նա ձգտում է ընդլայնել իր ազդեցությունը տարածաշրջանում, մասնավորապես՝ Ադրբեջանում և Հայաստանում, ինչպես նաև տեղական բնակչության հետ խորացնել մշակութային և կրոնական կապերը: Այնուամենայնիվ Իրանը բախվում է մարտահրավերների՝ Արևմուտքի հետ լարված հարաբերությունների, տնտեսական դժվարությունների և ռազմական սահմանափակ հնարավորությունների պատճառով: Այս գործոնները կարող են սահմանափակել Իրանի հնարավորությունը՝ տարածաշրջանային հավասարակշռությունն իր օգտին փոխելու համար:

Ի հակադրություն աշխարհաքաղաքական տարաձայնությունների՝ Ռուսաստանը և Իրանը պատրաստակամություն են ցուցաբերել ներգրավվելու տնտեսական համագործակցության մեջ: Արդեն իսկ նկատելի են համատեղ նախագծերի և ներդրումային հնարավորությունները, մասնավորապես՝ էներգետիկայի, ենթակառուցվածքների զարգացման և առևտրի ոլորտներում: 2022 թ. «Գազպրոմի» և Իրանի ազգային նավթային ընկերության միջև ստորագրված փոխըմբռնման հուշագրի շրջանակներում մշակվում են Իրանում նավթի և նավթագազային հանքավայրերի զարգացման, մայրուղային գազատարների կառուցման, բնական գազի հետ նավթամթերքների փոխանակման, ինչպես նաև գիտատեխնիկական և տեխնոլոգիական համագործակցության զարգացման նախագծեր:

Ուսումնասիրվում են մեքենաշինության և օդանավաշինության ոլորտում համատեղ ձեռնարկությունների ստեղծման ծրագրերը: Դիտարկվում են ավտոմոբիլաշինության, նավաշինության, երկաթուղային տրանսպորտի, գյուղատնտեսության և էներգետիկայի, դեղագործության ոլորտներում համագործակցության հնարավորությունները: Ակտիվորեն զարգանում են ուղղակի տնտեսական կապերը Ռուսաստանի մարզերի և Իրանի նահանգների միջև, որոնցում ներգրավված են Ռուսաստանի Դաշնության շուրջ քսան սուբյեկտներ:

Ֆինանսական հատվածում ծրագրեր են մշակվում ֆինանսական հաղորդագրությունների փոխանցման համակարգի ներդաշնակեցման ուղղությամբ, քանի որ իրանական և ռուսական շատ բանկեր անջատված են SWIFT համակարգից, ինչպես նաև կողմերը միացնում են «Միր» և «Շեթաբ» վճարային համակարգերը և փոխադարձ հաշվարկներ կատարում ազգային արժույթներով:

Մոսկվայի համար արևմտյան շուկաների փակումը և եվրոպական ուղղությամբ լոգիստիկ շղթաների խզումը մեծացնում են Իրանի՝ որպես կարևոր տրանսպորտային հանգույցի գրավչությունը: Քայլեր են ձեռնարկվում «Հյուսիս-Հարավի» երկաթուղային և ծովային բաղադրիչները բարելավելու ուղղությամբ՝ Իրանի տարածքով անցնելով Պարսից ծոցի և Հնդկական օվկիանոսի գոտի: Ռուսաստանը ակտիվորեն նպաստում է Իրանի դուրս գալուն միջազգային քաղաքական և տնտեսական մեկուսացումից, ավարտական փուլում է Իրանի և Եվրասիական տնտեսական միության միջև ազատ առևտրի համաձայնագրի նախապատրաստումը:

Այսօր նախադրյալներ են ստեղծվում ռուս-իրանական հարաբերությունների իրավական դաշտը թարմացնելու համար՝ այն ռազմավարական գործընկերության մակարդակի հասցնելու նպատակով: Մոսկվան և Թեհրանը փոխանակել են նոր պայմանագրի նախագծեր և ավարտում են դրա համաձայնեցումը: Այն կլրացնի ԻԻՀ-ի և ՌԴ-ի միջև հարաբերությունների հիմունքների և համագործակցության սկզբունքների մասին 2001 թ. մարտի 12-ի գործող համաձայնագիրը:

Ամփոփելով՝ պետք է նշել, որ Հարավային Կովկասում ռուս-իրանական փոխգործակցության հեռանկարների վրա ազդում են պատմական կապերը, աշխարհաքաղաքական նկատառումները, տարածաշրջանային դինամիկայի, տնտեսական համագործակցությունը, անվտանգության խնդիրները և միջազգային հարաբերությունները: Թեև կան համագործակցության ընդլայնման հնարավորություններ, կան նաև մարտահրավերներ, որոնք պետք է լուծվեն: Արդյունավետ երկխոսությունը, փոխըմբռնումը և ընդհանուր լեզու գտնելու պատրաստակամությունը էական են տարածաշրջանում ռուս-իրանական փոխգործակցության ողջ ներուժն իրացնելու հարցում:

Ջրային ռեսուրսները Հայաստանի և Արցախի անվտանգային համակարգում

Արմեն Վարդանյան
Լրագրող

Ռեսուրսները բոլոր ժամանակներում եղել են պատերազմների, եթե ոչ միակ, ապա հիմնական պատճառներից մեկը: Դրանց հետևանքով նվաճում կամ կորցնում են կենսականը՝ հողը, որը մի ժողովրդի հազարամյակների բնօրրանն է, հայրենիքը, նվաճողի համար էլ՝ կենսագործունեության կամ դրա ընդլայնման համար անհրաժեշտ տարածք: Հողն է սնում իր վրա ապրողին, իսկ հողը սնողը ջուրն է: Բնական ռեսուրսների համար պայքարը հատկապես սրվեց նախորդ դարի երկրորդ կեսին. տեխնոլոգիական գերարագ զարգացումները և Երկիր մոլորակի բնակչության թվի կտրուկ աճն առարկայորեն իրենց հետ բերեցին դրանց պահանջարկի աննախադեպ մեծացում, և քաղաքակրթության արդեն որերորդ հազարամյակում հակամարտությունների շարժառիթը մնում են ռեսուրսները, մատուցման ինչ գաղափարական շղարշով էլ դրանք քողարկվեն:

Մեր օրերում ռեսուրսները պետությունների անվտանգային համակարգում հիմնական տարրեր են՝ արդեն բարձրացված ինստիտուցիոնալ մակարդակի, իսկ դրանցից հիմնականի՝ բնական ռեսուրսի կայուն օգտագործումը վերպետական, համամարդկային թիվ մեկ հիմնահարցերից է: Շրջակա միջավայրում արձանագրվող գլոբալ կլիմայական փոփոխությունների հետևանքով առաջնային են դարձել հատկապես ջրային ռեսուրսների պահպանման և արդյունավետ օգտագործման խնդիրները: Հայաստանում վերջինիս խնդիրը նորովի դրվեց 2020 թվականի 44-օրյա պատերազմից հետո, երբ Ադրբեջանի վերահսկողության տակ անցան Քարվաճառի և Շահումյանի շրջանները, որտեղից սկիզբ են առնում տարածաշրջանում ամենախոշոր քաղցրահամ ջրի բնական պաշար, Սևանը սնուցող Արփա և Որոտան գետերի ակունքները: Վերոնշյալ շրջաններից է սկիզբ առնում նաև Արցախի Հանրապետության ջրային պաշարների 85 %-ը:

2021 թ. մայիսի և 2022 թ սեպտեմբերի 13-14-ի ռազմական գործողությունների հետևանքով Ադրբեջանի զինված ուժերի վերահսկողության տակ անցան Հայաստանի սուվերեն տարածքում գտնվող որոշ համայնքների խմելու ջրի ամբարները: Պատահական չէ, որ ադրբեջանական զինված ուժերը խնդիր էին դրել մեր տարածքներ ներխուժել երկու հիմնական ուղղություններով՝ Սևանա լճի և Ջերմուկի:

44-օրյա պատերազմից ամիսներ անց ադրբեջանական կողմի նախաձեռնած առաջին շփումներն Արցախի իշխանությունների հետ առնչվում էին Սարսանգի ջրամբարի ջրերի օգտագործման խնդիրներին: Արցախի Հանրապետության ջրային կոմիտեի ներկայացուցիչներն էլ այցեր են կատարել Ադրբեջանի վերահսկողության տակ անցած հատվածներ՝

Ստեփանակերտին և մի շարք համայնքներին մատակարարվող խմելու և ոռոգման ջրերի օգտագործման շուրջ հարցերը կարգավորելու և պայմանավորվածություններ ձեռք բերելու համար: Բանն այն է, որ Արցախին հարակից ադրբեջանական բնակավայրերի գյուղատնտեսական նշանակության հողերի 96 հազար հեկտարը ոռոգվում է հենց Սարսանգի ջրամբարի ավելցուկային ջրերով: Վերջին փաստը չխանգարեց, որպեսզի Ադրբեջանը ձեռնարկի Արցախի լիակատար շրջափակումը՝ խափանելով նաև Հայաստանից Արցախ գնացող էլեկտրաէներգիայի և բնական գազի մատակարարումը: Որպես հետևանք՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ստիպված եղավ ամբողջ հզորությամբ աշխատեցնել միակ խոշոր ՀԷԿ-ը և այդ նպատակին ուղղել ջրամբարում առկա ջրի հիմնական ծավալը, ընդհուպ մեռյալ գծից ներքև՝ ադրբեջանական կողմին թողնելով առանց ոռոգման ջրի, ինչին հետևեց Բաքվի բարձրացրած քարոզչական աղմուկը: Մյուս կողմից էլ՝ Արցախի օկուպացված տարածքներում ադրբեջանական կողմն արդեն ձեռնամուխ էր եղել գետերի հուների փոփոխման աշխատանքներին՝ դեպի հայկական պետություններ դրանց հոսքն առավելագույնս սահմանափակելու նպատակով:

Ջրային ռեսուրսների հարցում Հայաստանի խնդիրներն արևելյան և արևմտյան սահմանակից պետությունների հետ պակաս չեն, քան Արցախինը: Որոտան, Արփա գետերի ակունքներից բացի՝ ՀՀ սուվերեն տարածքներ ներխուժելու հետևանքով Հայաստանի որոշ համայնքների խմելու ջրի ամբարները նույնպես կամ անցել են ադրբեջանական զինուժի վերահսկողության ներքո, կամ գտնվում են ուղիղ

նշանաառության տակ: Թուրքիան էլ արդեն որերորդ տասնամյակն է, ինչ ձեռնարկել է մեծ ծավալների ջրամաբարաշինական աշխատանքներ՝ սահմանափակելով իր տարածքով ջրերի հոսքը դեպի հարևան երկրներ: Խոշոր ջրամբարներ են կառուցվում նաև Արաքսի և Ախուրյանի վտակների վրա, որոնք էականորեն նվազեցնում են հոսքերը դեպի մայր գետ, որի ջրերը՝ տարեկան 1,82 մլրդ մ^3-ը, ըստ դեռևս նախորդ դարի 60-ականներին ձեռք բերված պայմանավորվածության՝ երկրներն օգտագործում են 50/50 հարաբերակցությամբ:

Այս ամենին զուգահեռ Հայաստանի հիմնարար խնդիրներից է ջրային ռեսուրսների պահպանումն ու արդյունավետ կառավարումը, ինչը ցածր մակարդակի վրա է: Մեր երկրում տարեկան օգտագործելի ջրային ռեսուրսները շուրջ 9.05 մլրդ մ^3 են, որից 8 մլրդ մ^3-ը մակերևութային ջրերն են, իսկ 1.05 մլրդ մ^3-ը՝ ստորերկրյա: Մեր ռազմավարական ջրային պաշարը 1.672 մլն մ^3 է, իսկ ազգային ջրային պաշարը՝ 35 855.6 մլն մ^3: Սևանա լիճը երկրի ազգային ջրային պաշարի 96.5%-ն է: Օգտագործելի ջրային ռեսուրսները ներառում են Հայաստանի տարածքում ձևավորվող գետային հոսքը, անդրսահմանային համարվող Արաքս և Ախուրյան գետերի հոսքի Հայաստանի մասնաբաժինը և վերականգնվող ստորերկրյա ջրային ռեսուրսները՝ բացառությամբ էկոլոգիական թողքի:

Հայաստանում ձևավորվող վերականգնվող ջրային ռեսուրսները տարեկան 6.859 մլն մ^3 են, որից մակերևութային ջրերը՝ 3.248 մլն մ^3, ստորերկրյա ջրերը՝ 3.611 մլն մ^3: Ըստ վիճակագրական կոմիտեի AQUASTAT տվյալների շտեմարանի՝ Հայաստանից այլ երկրներ հեռացող մակերևութային ջրերը տարեկան մոտավորապես 5.28 մլրդ մ^3 են, ինչը նշանակում է, որ Հայաստանի տարածքում ձևավորվող ջրերը մենք ծայրահեղ անարդյունավետ ենք օգտագործում, ինչի հետևանքով նրանց 60-70%-ը հոսում է երկրի սահմաններից դուրս: Ստացվում է, որ վերականգնվող ջրային ռեսուրսների 90%-ի չափով կորուստ ունենք, չենք կարողանում այն ամբարել և օգտագործել Հայաստանում: Սա այն դեպքում, երբ Երկիր մոլորակում քաղցրահամ ջրի ռեսուրսների պակասն արդեն ավելի հաճախ է պատերազմների և ռազմական բախումների պատճառ դառնում:

Դրան զուգահեռ մեր երկրում ջուրը հավասարապես բաշխված չէ: Ըստ Համաշխարհային ռեսուրսների ինստիտուտի գնահատման՝ Հայաստանը համարվում է բարձր ելակետային ջրային սթրեսով երկիր և 164 պետությունների շարքում այդ ցուցանիշով զբաղեցնում է 34-րդ տեղը: Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության համաձայն՝ Հայաստանը ջրի ցածր մատչելիություն ունեցող երկիր է և ջրային ռեսուրսների շահագործման 45% համաթվով ենթակա է ջրային սթրեսի: Ապագայի կանխատեսումներով՝ նույնիսկ լավատեսական սցենարի դեպքում Հայաստանի կենտրոնական և հարավային մասերում ջրային սթրեսի համաթվի արժեքը 2030-2040 թվականներին կբարձրանա մինչև 80%:

Վերոնշյալ իրողությունները Հայաստանի գործադիր իշխանություններին պարտադրում են առաջնային կարգով լուծել ջրերի կառավարման խնդիրները, ինչի համար առաջին հերթին անհրաժեշտ է երկու հիմնական խնդիր լուծել՝ ջրամբարներ կառուցել, որպեսզի Հայաստանից դուրս հոսող ավելի քան 5 մլրդ մ^3 ջրի զգալի մասը օգտագործվի մեր երկրի տնտեսության մեջ, երկրորդ՝ արմատապես արդիականացնել ոռոգման համակարգը: Վերջինիս հնացած լինելու պատճառով ամեն տարի Սևանա լճից, օրենքի պահանջները շրջանցելով, բաց թողնված ջրաքանակի 70%-ը չի հասնում գյուղացուն: Այլ կերպ ասած՝ լճի էկոհամակարգը վտանգելով՝ բաց թողնված թանկարժեք ռեսուրսի մեծ մասն ուղղակի կորում է անարդյունավետ կառավարման հետևանքով: Թերևս առաջինը հենց ջրի անարդյունավետ կառավարման գործոնն է պատճառը, որ երբեմնի ագրարային երկրի համբավ ունեցող Հայաստանում վերջին տարիներին գյուղատնտեսության ոլորտում միայն անկման ցուցանիշներ են արձանագրվում: Մյուս կողմից էլ՝ աշխարհում արդեն սուր է դրված պարենի անբավարարության խնդիրը և պետությունների անվտանգային համակարգում տարեցտարի պարենային անվտանգությունն առաջնային հորիզոնականներ է բարձրանում:

Հայ «Նեմեսիս»-ը, հետախոյզ առասպելն ու ազգային-պետական գործիչը - Հրաչ Փափազեան (Մաս-2)

Աւօ Գաթրճեան
Հրապարակագիր, բանասէր, Հալէպի հայագիտական հիմնարկի Հայ դատի դասախօս

«Նեմեսիս» գործողութեան ժամանակահատուածի վերոնշեալ յուշերն ու վկայութիւնները լուսարձակի տակ առնելով՝ երբ փորձենք Հրաչ Փափազեանի առաքելութիւնը արժեւորել, ապա հոն ցայտունօրէն կը դրսեւորուի հետախոյզի դժուար ու վտանգաւոր յանձնառութիւնը: Հոն երեւան կու գայ Հրաչի նուիրուածութիւնը հետախուզական գաղափարին, յանուն որու կ'ապրէր եւ կը պայքարէր: Ան նուիրուած էր իր ազգին, կուսակցութեան, որու մասնիկն էր եւ անսահման կը սիրէր: Այդ նուիրումը ու մանաւանդ Հայոց ցեղասպանութեան զոհ գացած մէկուկէս միլիոն նահատակներու վրէժն էր զինք ուժ տուողը, առաջ մղողը, վստահութիւն ներշնչողը:

Հետախուզական գործունէութիւնը Հրաչի համար խիստ հետաքրքրական, միեւնոյն ժամանակ շատ ծանր ու վտանգաւոր աշխատանք էր եղած: Անոր կեանքը ամէն օրը յղի էր վտանգով, բայց ան միշտ պատրաստ էր ամէն անակնկալի, ընտելացած եւ այդպէս ալ ապրեցաւ:

Արդարեւ, Հրաչ 1922-ին կը հեռանայ Պոլիսէն եւ կ'անցնի Յունաստան, ուր կը զբաղի ազգային, քաղաքական եւ կուսակցական աշխատանքներով:

Շրջան մը Յակոբ Սիմոնիի (Տասնապետեան) հետ ան կը զբաղի Տերսիմի (այժմ՝ Թունճելի) քրտական ապստամբութեամբ՝ նկատի առնելով, որ այդ շարժումը ուղղուած էր թուրքին դէմ:

Այնուհետեւ Հրաչ Փափազեան բնակութիւն հաստատած է Ճեպէլ Մուսայի (Մուսա լեռ)[1] հայկական Պիթիաս գիւղը: Առաջին օրէն իրեն նպատակակէտ դարձուցած էր Ճեպէլ Մուսայի ժողովուրդին միտքին լուսաւորումը: Ու անոր համար հաստատած էր լսարանական դրութիւն մը, որ, իսկապէս, նպաստած է Պիթիաս գիւղի մտային զարգացման:

Հրաչ Փափազեան վերջապէս կուսակցական գործով կը հաստատուի Սուրիոյ Հալէպ քաղաքը ամբողջ երեսնամեակ մը եւ կ'ունենայ պատկառելի գործունէութիւն մը ազգային, կուսակցական քաղաքական եւ հասարակական բոլոր ճակատներուն վրայ:

Անոր խօսքը կշիռ ունէր, ըլլայ սուրիական դիւանագիտական-քաղաքական աշխարհին մէջ, ըլլայ նաեւ ազգային իշխանութեան մէջ, գաւառական, քաղաքական (ազգային վարչութիւն) եւ ազգ. ընդհանուր ժողովներուն մէջ, Հալէպէն մինչեւ Պէյրութ եւ Անթիլիաս:

Հրաչ Փափազեան Սուրիոյ մէջ սկզբնական շրջանին միշտ կարմիր ֆէսով[2] էր...: Սակայն Օսմանեան կայսրութեան ազդեցութեան աստիճանական նուազումով իր, ինչպէս այլ տղամարդոց մօտ, ֆէսի գործածութիւնը նահանջեց ու գրեթէ անհետացաւ: Հետագային ան ֆէսը փոխարինեց ամերիկեան գլխարկով: Իսկ գլանիկը՝ անոր անբաժանելի ընկերը՝ միշտ բերնին:



Հրաչ ամէնէն մօտիկ գործակիցն ու աջակիցը կ'ըլլայ Բերիոյ թեմի առաջնորդ Զարեհ սրբազան Փայասլեանին (հետագային՝ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Զարեհ Ա. Սքանչելի) եւ միշտ թեւ ու թիկունք դարձած անոր:

Նկատի առնելով հաւատարիմ ու անկեղծ գործընկերներ Հրաչ Փափազեան եւ Զարեհ սրբազանի սերտ կապերը եւ այդ ժամանակաշրջանին անոնց հետ առնչուած շատ մը ազգային եւ այլ նախաձեռնութիւններու իրագործումը:

Հրաչ Փափազեան Հալէպի մէջ մեծ ներդրում կ'ունենայ ազգային կեանքի անկիւնադարձային շատ մը ծրագիրներուն: 1930 թուականին ան մեծ դեր կ'ունենայ Հալէպի Համազգային հայ կրթական եւ Մշակութային միութեան հիմնադրութեան մէջ:

Սուրիոյ հայերը նաեւ Սուրիոյ քաղաքական բնագաւառին մէջ բնականաբար իրենց մասնակցութիւնն ու դերակատարութիւնը ունեցան, յատկապէս Հայոց ցեղասպանութենէ յետոյ՝ սկսելով Խորհրդարանի հիմնադիր նիստէն՝ 1928-էն: Ընտրութիւնները տեղի կ'ունենան 4 տարին անգամ մը:

Այնուհետեւ Հրաչ Փափազեան, իբրեւ հայ առաքելական, 1932 եւ 1943 թուականներուն կ'ընտրուի երեսփոխան (պատգամաւոր) սուրիական խորհրդարանին՝ Հալէպի շրջանին կողմէ:

Նախ պէտք է ըսել, որ Սուրիոյ օրենսդիր մարմինը՝ Խորհրդարանը գաղութատիրական շրջաններէն մինչեւ օրս արաբերէնով քանի մը անուն ունեցած է եւ Խորհրդարանի անդամներու թիւը հետզհետէ աւելցած է: Այսպէս՝ Հրաչ Փափազեանի օրերուն Խորհրդարանը կ'անուանուէր Խորհրդարանական Խորհուրդ (ալ-Մաճլիս ալ-Նիյապի: Արաբ.՝ **المجلس النيابي** : Այժմ՝ Սուրիոյ Ժողովրդական Խորհուրդ: Արաբ.՝, **مجلس الشعب** Մաճլիս աշ-Շաապ):

1932-ի Սուրիոյ Խորհրդարանական Խորհուրդի

(խորհրդարան) 66 աթոռներու ընտրութիւններուն արդիւնքով 14 Յունիս 1932-ի նիստին կը հաստատուի, որ Սուրիոյ խորհրդարանին մաս կը կազմեն երկու հայ երեսփոխաններ՝ Հրաչ Փափազեանը եւ Մովսէս Տէր Գալուստեանը[3]:

Հրաչ Փափազեան կենսական դեր ունեցաւ նորակազմ ընդհանրապէս՝ Սուրիոյ եւ յատկապէս՝ Հալէպի հայ գաղութը մասնակից դարձնելու սուրիական հայրենիքի անկախացման՝ ի նպաստ մղուած պայքարներուն՝ հայ գաղութը վստահելի ու դերակատար տարր մը դարձնելով յաչս արաբ ժողովուրդին: Ան վստահելի ու յարգուած դէմք մը էր Սուրիոյ պետական ու քաղաքական շրջանակներէն ներս: Փափազեան Սուրիոյ Խորհրդարանի սահմանադրական երդիքին տակ արժանաւորապէս ներկայացնելով հայ համայնքը՝ լուռ ու անաղմուկ պաշտպանած է հայոց շահերը:

1943-ի ամառը Խորհրդարանի ընտրութիւններուն մասնակցող հայ թեկնածուներու թիւը կը բազմանայ:

17 Օգոստոս 1943-ի Խորհրդարանական Խորհուրդի (Խորհրդարան) անդրանիկ նիստին իբրեւ երեսփոխան կը յայտարարուին 4 հայերու անունները՝ Հրաչ Փափազեանը, Մովսէս Սալաթեանը եւ Ֆաթի Ալլահ Ասյունը՝ Հալէպէն, իսկ Դամասկոսէն՝ Նազարէթ Եագուպեանը[4]:

Հարկ է նշել, որ 1943 թուականին ընտրուած երեսփոխանական աթոռներու թիւը բարձրացած էր 99 աթոռի: 99 պատգամաւորները իրենց երդումը կատարեցին 24 Յունուար 1944-ի նիստին[5]:

Հրաչ Փափազեան միշտ սերտ կապեր ունեցած է սուրիական պետական վերնախաւին հետ, գործակիցն էր Սուրիոյ Հանրապետութեան օրուան նախագահ Շուքրի ալ-Քուաթլիին[6]: Անոր խօսքը կշիռ ունէր սուրիացի արաբին մօտ եւ սերտ գործակից մըն էր «Ազգային կուսակցութեան» (Քըթէէթ կամ Հըզպ ալ-Ուաթանի):

Շատ մօտ էր ազգային մեծ ղեկավարներու՝ Սաատ Ալլահ ալ-Ժապրիի, Իպրահիմ Հանանոյի, Ապտիլ Ռահման ալ-Քէյեալի, Ֆարէս ալ-Խուրիի եւ այլոց:

Հրաչ Փափազեան 1945-ին կրկին Խորհրդարանական Խորհուրդի մաս կազմած է[7]:

Սուրիոյ ազատագրական պայքարի գործընթացին մէջ ան բաւական աշխուժ դերակատարութիւն ունեցաւ: Ֆրանսական գաղութատիրական զօրքերը Սուրիոյ մէջ յաճախ սրած են երկրի կացութիւնը՝ սուրիացիներուն մարդկային վնաս հասցնելով: 1945-ին ֆրանսացիները խախտեցին իրենց խօսքը: Սուրիացիները կրկին կ'ապստամբին, իսկ 29 Մայիսի 1945-ին ֆրանսական զօրքերը կը յարձակին Դամասկոսի մէջ Սուրիոյ խորհրդարանի շէնքի վրայ՝ առաջացնելով աւելի մեծ վրդովմունք եւ նոր ցոյցեր:

Արդէն տեղի կ'ունենար Սուրիոյ անկախութեան ձգտող ազատագրական պայքարը: Ֆրանսացիները յամառօրէն կառչած կը մնային «հովանաւորի» իրենց դիրքին՝ գիտնալով հանդերձ, որ երկար չեն կրնար դիմանալ:

Այս ժամանակաշրջանին մէջ Սաատ Ալլահ ալ-Ժապրին Հալէպի մէջ Ուրբաթ օր մը Հրաչ Փափազեանը շտապ կը կանչէ իր բնակարանը: Այդ օր, երբ քաղաքը կ'եռար, եւ սուրիացիք ընդվզած էին ֆրանսացի զինուորներու իրերայաջորդող կրակոցներէն, որոնք կ'ուզէին ժողովուրդը ահաբեկել, նուաստացնել եւ հնազանդեցնել:

Այս մասին մանրամասն իր ականատեսի վկայութիւնը կը յայտնէ սփիւռքահայ բանաստեղծ, արձակագիր, հրապարակագիր եւ խմբագիր Անդրանիկ Ծառուկեան Հալէպի կեանքը վառ ցոլացում գտած իր «Երազային Հալէպը» յուշագրութեան մէջ:

Ծառուկեան կը գրէ. «Ուրբաթ իրիկուն մը, ողբացեալ Հրաչ Փափազեանը աճապարանօք ակումբ եկաւ, եւ Օնսիկն[8] ու զիս հետը առած՝ գացինք Սաատ Ալլահին բնակարանը իր կողմէ ղրկուած ինքնաշարժով, վարիչին քովն ալ՝ հրացանակիր թիկնապահ մը: Քաղաքը տակն ու վրայ էր արդէն, փողոցները՝ ամայի, հեռուէն՝ կատաղի հրացանաձգութեան համազարկեր:

«Գիտեմ, թէ ինչու կանչած է,—ըսաւ Հրաչը ճամբան,—տալիք պատասխանս ալ պատրաստ է, բայց լաւ է, որ հետս մարդ տեսնէ: Ասանկ պարագաներու վկաները աւելորդ չեն: Դուք խօսելու պէտք չունիք: Միայնլսեցէք եւ ինծի հետեւեցէք:

«Լայն աշխատասենեակին ետեւ նստած էր Սաատ Ալլահն: Սենեակին մօտ, բայց կողմնակի կը մնար Իսանը[9], որ ամբողջ տեսակցութեան ընթացքին լուռ մնաց: Հաւանաբար Հրաչին միզի տուած պատուէրը Սաատ Ալլահն ալ տուած ըլլար եղբօրը: Անմիջապէս անցաւ նիւթին:

«Այս ֆրանսացիներուն խելքս չի հասնիր: Ուզեն, չուզեն, պէտք է երթան այս երկրէն եւ պիտի երթան:

Ըրածնին պարզապէս խայտառակութիւն է (ռեզիլլիք)։ Իրենք ալ գիտեն, բայց կը շարունակեն մնալ եւ պարապ տեղը արիւն թափել։ Բաւական հայ զինուորներ ալ կան իրենց հետ։ Քանի ուշ չէ, ձեր տղոց լուր ղրկեցէք, որ թողուն եւ դուրս գան...

«Հրաչը ըսելիք մը ունէր, բայց Սաատ Ալլահն ձեռքի նշանով հասկցուց, թէ չէ վերջացուցած ու շարունակեց.

«Մեզի դէմ քանի հարիւր հրացան աւելի, թէ պակաս արժէք չունի։ Շէյխ Մչհեմը 3000 ձիաւորներով հրամանիս կը սպասէ՝ Ռաքքայէն Հալէպ արշաւելու։ Բայց ես չեմ ուզէր, որ անապատի կռուողները քաղաք մտնեն։ Ուզած ատենդ կու գան, բայց ուզած ատենդ չեն մեկնիր, եւ կողոպուտն ալ մեղք չեն սեպեր։ Վախս հայ զինուորներն են։ Կը նայիս վաղը շէյխին մէկը (թուրքերէն հայհոյանքով գէշ ածական մը ալ փակցուց անծանօթ շէյխին) կրնայ քարոզ մը տալ մեծ մզկիթին մէջ, հաւատացեալները գրգռել հայերուն դէմ եւ այն ատեն...

«Դադար մը, ջղային պրկում մը եւ գրեթէ պոռալով.

«Հոդ ես անզօր եմ, միայն այդտեղ է որ ձեռքերս կապուած են, կը հասկնա՞ք։ Ուահպի կոչուող շունը (Ուահպի Հարիրի, Սաատ Ալլահին ընտրական հակառակորդը, յայտնի թրքասէր եւ կինն ալ թրքուհի) սկսած է արդէն միտքեր պղտորել այդ ուղղութեամբ։ Հոգինիդ սիրեմ, աճապարեցէք եւ զիս ամօթով մի հանէք...

Մեզ համոզելու պէտք չունէր։ Միջոցներ ձեռք առնուած էին արդէն, որ վաղայաջորդ կիրակին ֆրանսական բանակին ծառայող հայ զինուորները բոլորը մէկ, միեւնոյն ժամուն եւ ցուցական կերպով դուրս գան զօրանոցներէն։ Հրաչը պէտք եղածը ըսաւ։ Սաատ Ալլահը գոհ մնաց եւ կատարելապէս համաձայն ու համախոհուրդ՝ մեկնելու վրայ էինք, երբ Իսանը առաջին անգամ ըլլալով՝ խօսեցաւ.

Հրաչ պէյ, չմոռնանք ըսելու, որ հայ զինուորները զէնքերն ալ միասին բերեն... պէտք կ'ունենանք...»[10]։

Այսպիսով՝ Սուրիա բնակող հայերը 1946-ին սուրիական հայրենիքին իրենց պատկանելիութեան ամէնէն ականաւոր փաստերէն մէկը արձանագրեցին, երբ Բերիոյ թեմի առաջնորդ Տ. Զարեհ Ծ. Վ. Սրբազան ֆրանսական բանակին մէջ ծառայող հայ զինուորներուն կոչ ուղղեց՝ իրենց զէնքերով միասին միանալու սուրիական բանակին. կոչ մը, որուն ընդառաջեցին հայ զինուորները։

Մինչ յամառ պայքարի շնորհիւ 1946 թուականին՝ Ապրիլ 17-ին, սուրիացիներուն յաջողուեցաւ երկրէն դուրս հանել օտարերկրեայ զօրքերը։ Եւ այսպիսով Սուրիա անկախացաւ ֆրանսական տիրապետութենէն։

Երկուշաբթի, 23 Սեպտեմբեր 1946-ին Հալէպի կառավարչատան մէջ նահանգապետ (Մուհաֆըզ) Էմիր Մուսթաֆա աշ-Շեհապի, Սուրիոյ նախագահ Շուքրի ալ-Քուաթլիի եւ կառավարութեան անունով Բերիոյ թեմի առաջնորդ Տ. Զարեհ Ծ. Վարդապետին յանձնեց «Արժանեաց շքանշանի» Ա. կարգի պատուանշանը՝ ի գնահատութիւն իր մատուցած բարւոք ծառայութեանց։ Նկատի առնելով, որ Զարեհ Սրբազան իր խոնարհութեամբ եւ իմաստութեամբ խորապէս տպաւորած էր ազգային, պետական եւ յարանուանական շրջանակները։ Քաղաքական ամէնէն տագնապալից օրերուն իմաստուն քաղաքականութեան մը հետեւեցաւ եւ աշխատեցաւ արաբական դատի յաղթանակին ի նպաստ։ Այդ իսկ պատճառով ալ պարգեւատրուեցաւ շքանշանով։

Այստեղ հարկ է նշել, թէ Սուրիոյ անկախութեան սիւներէն խորհրդանիշը սուրիացի ժողովուրդի ազատութեան պայքարին՝ Սաատ Ալլահ ալ-Ժապրի, կը հաւատար հայ ժողովուրդին։ Կը հաւատար հայու արժանիքներուն եւ ընդունակութեանց ու յաճախ ականջ տուած է հայութեան ցաւին, թէ տագնապի գալարումներուն։ Ճանչցաւ Հ. Յ. Դաշնակցութեան, որ հանդիսացաւ Սուրիոյ անկախութեան ամէնէն հաւատարիմ գործօններէն մէկը հայրենիքի ամէնէն սեւ ու դժուարին օրերուն։ Ազգայնական ճակատի տարիներու գործակցութիւնը հայ ժողովուրդի ամէնէն կենսունակ ու ծաւալուն կազմակերպութեան հետ դարձաւ հայ եւ արաբ եղբայրակցութեան անխորտակելի մէկ պատնէշը պատեհապաշտ ու դաւադիր բոլոր հոսանքներուն դէմ։ Այդ իսկ պատճառով ցայտուն եւ օրինակելի երեւոյթ մըն է ազգայնական ու հայրենասէր սկզբունքներէ մղուած Սաատ Ալլահ ալ-Ժապրի եւ Հրաչ Փափազեանի համախոհ ու հաւատարիմ ընկերութիւնը։

Հ. Փափազեան Սուրիոյ քաղաքական կեանքին մէջ բնականաբար իր դրօշմը ձգած է, խորհրդարանի պատգամաւոր եւ անոր ընդմէջէն խորհրդարանի յանձնաժողովներու անդամակցումով, նիստերուն ընթացքին իր ունեցած ելոյթներով եւ առաջարկութիւններով կրցած է հայութեան եւ ընդհանրապէս Սուրիոյ ժողովուրդին շահերը պաշտպանել սուրիացի քաղաքացիին առնչուող բոլոր հարցերով ոչ միայն հայկական շրջանակներէն ներս, այլեւ Հալէպ քաղաքի եւ նահանգին վերաբերող հարցերով՝ իր շրջանի ժողո-

Դրօ, Հրաչ Փափազեան եւ ուրիշներ

վուրդին դժգոհանքներն ու դժուարութիւնները փոխանցելով խորհրդարանական ժողովներուն եւ համապատասխան լուծումներու առաջարկութիւնները փոխանցելով համապատասխան նախարարութեանց:

Փափազեան տեւական պաշտպանած էր հայ եւ արաբ ժողովուրդներու արդար դատը, յատկապէս օսմանցի-թիւրքերու թշնամական եւ անոնց որդեգրած թրքացումի քաղաքականութիւնէ նշեալ երկու ժողովուրդներու նկատմամբ:

Գերութեան եւ տառապանքի մէջ ճակատագրակից այս երկու ժողովուրդները երբեմն ուղղակի եւ երբեմն անուղղակիօրէն իրարու օժանդակած են: Ազգային անկախութեան համար մղուող պայքարին մէջ արաբներու իւրաքանչիւր յաղթանակ առարկայօրէն կը ծառայէր նաեւ հայերու ազատագրումին եւ հակառակը, հայերու կողմէ սուլթանականութեան հասցուող ամէն մէկ հարուած կը մօտեցնէր նաեւ արաբներու ազատագրման պահը:

Վերոնշեալ թեզի հիման վրայ էր, որ մեծ եղաւ Հրաչ Փափազեանի դերը: Մասնաւորապէս Սուրիոյ ազատագրման մէջ ֆրանսական գաղութատիրութիւնէն վերջնականապէս ձերբազատելու համար մղուած պայքարին հայ ժողովուրդը դարձեալ բերաւ իր նպաստը՝ կանգնելով ազատութեան համար մարտնչող բազմութիւններուն կողքին:

Այդ պատճառով ալ 1945-ին սուրիացի արաբ մեծ ղեկավար մը Հրաչ Փափազեանի մասին Բերիոյ Հայոց թեմի օրուան առաջնորդ Զարեհ Եպս. Փայասլեանին առիթով մը խոստովանած էր. «Առանց Հրաչի կարծիքը առնելու երկրին համար կենսական կարեւորութիւն ներկայացնող որեւէ որոշում չենք տար»[11]:

Պատմական կարեւորութեան համար պէտք է արձանագրել, որ 1947-ին սուրիական խորհրդարանական ընտրութիւններուն Հրաչ Փափազեան անգամ մը եւս Հալէպէն իր թեկնածութիւնը կը դնէ «Ազգային կուսակցութեան» թեկնածուներու ցանկին մէջ:

Խորհրդարանական ընտրութիւններուն նախօրեակին ընտրական պայքարը բաւական կը սրի, եւ շատ աւելի լարուած մթնոլորտ կը տիրէ:

«Ազգային կուսակցութեան» կողմէ առաջադրուած ցանկին դէմ «Ժողովուրդի կուսակցութիւնի» (հրզպ աշ-Շաապ,**حزب الشعب**) ցանկը իբրեւ հակառակորդ առաջ կու գայ:

Ընտրական պայքարի մասին օրին Հալէպի մէջ լոյս տեսնող «Արեւելք» օրաթերթը լայն անդրադարձ կը կատարէ Երկուշաբթի, 7 Յուլիս 1947-ի առաջին էջին մէջ՝ «Մ.» ստորագրութեամբ, խմբագրականի «Արթուն «աչքը»» խորագրի տակ կը գրէ. «...Երբ քայլ կ'առնենք այսօր դէպի քուէատուփ, պէտք է կանգ առնենք կենսական ու նաեւ ճակատագրական հարցումի մը վրայ: — Վերջին քառորդ դարու մեր կեանքի ընթացքին, Սուրիոյ մէջ ո՞վ էր, որ ստեղծեց հայ ժողովուրդի հաւաքական ապահովութեան եւ անհատական ազատութեան պայմանները: ...»[12]:

«Արեւելք»-ի նոյն էջի վրայ, խմբագրականի կողքի

ձախէն աջ՝ Հրաչ Փափազեան, Հակոբ Օշական, Զարեհ Սրբազան, Արշաւիր Շիրակեան եւ Յովհաննէս Գասապեան

սիւնակին մէջ երեք վերնագրերու տակ կը կարդանք «Հ. Յ. Դաշնակցութեան հսկայ միթինկը: 20.000-է աւելի ծովածավալ բազմութիւն մը լսեց Դաշնակցութեան խօսքը իր ազգային եւ քաղաքական ձգտումներուն ու հայեցակէտերուն շուրջ: Կը հրաւիրենք հալէպահայութիւնը գիտակցելու վայրկեանի լրջութեան եւ իր քուէները կեդրոնացնելու «Ազգային կուսակցութեան» վրայ, ուր արաբ մեծ ղեկավարներու կողքին իր թեկնածուն ունի եւ Հ. Յ. Դաշնակցութիւնը»:

Միւս կողմէ՝ խորհրդարանական ընտրութիւններու նախօրեակին տեղի ունեցած ընտրապայքարներու ընթացքին «Արեւելք»-ի էջերով, զանազան խմբագրականներով եւ այլ գրութիւններով յաճախ կը զգուշացուի ժողովուրդը: Այդ լոզունքներէն կամ զգօնութեան հրաւիրող գրութիւններէն է մեծատառով հետեւեալ գրութիւնը. «Հայ ժողովուրդ, բոլշեւիկները բոլոր ցանկերէն վտարուելէ եւ դուրս շպրտուելէ վերջ կը դիմեն ծանօթ խաղին..... «չէզոք թեկնածու»... կը զգուշացնենք քուէ տալու ո՛եւէ «խառն ցանկի, որուն հեղինակները մի՛շտ բոլշեւիկներն են, ու իրենց կողքին՝ իրենց «մանրամասնութիւնները...»»[13]:

Արդարեւ, 28 Մայիս 1947-ին տեղի ունեցած խորհրդարանական ընտրութիւններու արդիւնքով Հ. Յ. Դաշնակցութեան թեկնածու Հրաչ Փափազեան կը ձախողի:

Անուրանալի է Հրաչ Փափազեանի դերակատարութիւնն ու վարած խոհեմ քաղաքականութիւնը նաեւ ներգաղթի ժամանակաշրջանին:

Հայ գաղթականութեան պատմութեան տխուր էջերէն մէկն էր սուրիահայութեան 1946-1947-ին դէպի Խորհրդային Հայաստան ներգաղթը: Այս երեւոյթը, որ օրին ստացաւ «Մեծ հայրենադարձութիւն» անուանումը:

Սուրիահայ ներգաղթողները, մեծաւ մասամբ՝ Հալէպէն, Դամասկոսէն, Համայէն, Հոմսէն, Ազէզէն, Սուրիոյ այլ շրջաններէն, զանգուածային կերպով գաղթեցին:

Դժբախտաբար հայրենի իշխանութիւններուն մօտ ներգաղթ կազմակերպելու սերտուած քաղաքականութիւն մը գոյութիւն չուներ:

Օրին Դաշնակցութեան երդուեալ հակառակորդնե-

ը փոխանակ համազգային հայրենադարձի շարժումի մը վերածելու ներգաղթը, ինչպէս վայել էր, ուզեցին օգտագործել զայն Հ. Յ. Դաշնակցութիւնը քայքայելու համար:

Ներգաղթի ժամանակաշրջանին հակադաշնակցական մամուլը թիրախ դարձուց Հ. Յ. Դ.-ն, անոր ղեկավարութիւնը ու ինչպէս միշտ՝ Հրաչ Փափազեանը:

Բերիոյ Հայոց թեմի օրուան առաջնորդ Զարեհ սրբազանը մտասեւեռումի մը վերածած էր Հայ երկրորդական վարժարանի մը ծրագիրը: Ան տեսիլք եւ կամք կ'ունենայ՝ սուրիահայ գաղութը օժտելու երկրորդական վարժարանով մը, որպէսզի ազգի զաւակներն ալ ունենան իրենց հայկական երկրորդական կրթարանը, ուր մանաւանդ հայեցի դաստիարակութիւն կը ստանան. Հրաչ այդ նախաձեռնութեան ջատագովն է եւ սկիզբէն ի վեր բոլոր հնարաւոր միջոցներով սատար կը դառնայ Սրբազան Հօր ծրագիրին: Քանի որ իրեն համար նոր սերունդի ազգային դաստիարակութիւնը լուրջ մտահոգութիւն էր եւ հայկական երկրորդական վարժարան մը ունենալու եւ զայն հայապահպանման դարբնոց դարձնելու Հ. Յ. Դաշնակցութիւն կուսակցութեան ծրագիրը անխուսափելի էր, ուստի ամէն ջանք պէտք է թափուէր հայկական երկրորդական վարժարանը կեանքի կոչելու համար:

Սրբազան Հօր ջանքերով դանիական մարդասիրական հաստատութեան պատասխանատուներէն միս Քարէն Եփփէ մայրիկի 1924-ին Նոր գիւղի մէջ հիմնած որբանոց-այրիանոցը ազգային սեփականութիւն կը դարձնէ ազգային երկրորդական վարժարանի կառուցման համար:

Փափազեան եւ Զարեհ Սրբազան միասին ձեռնարկեցին հիմնադրութեան աշխատանքները ամէնէն բծախնդրութեամբ, անոնք կողք կողքի լաւատես ոգիով, ամուր հաւատքով, անսասան կամքով ու վճռականութեամբ, ինչպէս նաեւ ազգային գործիչներու եւ ազգային մարմիններու սերտ գործակցութեամբ, վիթխարի ճիգերով ու անընկճելի նուիրումով իրականացուցին տարիներու իրենց երազը: 1947-ին բացումը կատարուեցաւ կրթական այս օճախին, մշակութային այս լուսաւոր ոստանին, որ դարձաւ ոչ թէ հալէպահայութեան, այլ Սփիւռքի հայութեան ազգային ինքնութեան քուրան՝ «Քարէն Եփփէ» ազգային ճեմարանը:

Ճեմարանը կը կոչուէր Քարէն Եփփէի անունով իբրեւ արդար գնահատութիւն Քարէն Եփփէին, հայերու դանիացի բարեկամներուն եւ Դանիոյ ժողովուրդին:

Ազգային, կրթական այս տաճարին մէջ Հրաչ Փափազեան 1949-էն մինչեւ իր Լիբանան մեկնումը՝ 1957, մօտ 8 տարի կը ստանձնէ ճեմարանի խնամակալութեան ատենապետութիւնը:

Այստեղ տեղին է նշել, որ «Քարէն Եփփէ» ազգային ճեմարանի մեծ ընտանիքը միշտ ալ երախտապարտ եղած է իր հիմնադիրներով, այդ իսկ պատճառով ալ Հրաչ Փափազեանի անունը չէ մնացած ճեմարանի հիմնադիրի սահմաններուն մէջ միայն, այլ «Քարէն Եփփէ» ազգային ճեմարանի 1995-1996 ուսումնական տարեշրջանի երկրորդականի ԽԳ. շրջանաւարտները կոչուած են «Հրաչ Փափազեան հունցք»: Իսկ միւս կողմէ՝ 2011-ին ճեմարանի շրջանաւարտից միութեան վարչութեան նախաձեռնութեամբ նորակառոյց յուշասրահ-արխիւատունը անուանակոչուեցաւ «Հրաչ Փափազեան յուշասրահ-արխիւատուն»:

Հրաչ Փափազեան հիմնադիրն արտօնատէրն էր նաեւ Հալէպի մէջ լոյս տեսնող «Արեւելք» օրաթերթին՝ շրջան մը վարելով նաեւ թերթի տնօրէնի պաշտօնը: Օրաթերթի առաջին էջի՝ օրաթերթի անունի՝ «Արեւելք»-ի երկու կողմերը տեղադրուած են փոքր քառակուսի տուփիկներ, առաջինը՝ հայերէն, գրուած է. «Արտօնատէր եւ պատասխանատու տնօրէն Հրաչ Փափազեան», իսկ միւսն ալ արաբերէնով հայերէնի թարգմանութիւնն է:

Փափազեան, ըլլալով մարզասէր, մեծ եղած է կապուածութիւնը Հ.Մ.Ը.Մ.-ի հետ, միշտ ներկայ եղած է Հ.Մ.Ը.Մ.-ի միջմասնաճիւղային հանդիպումներուն, ֆութպոլի միջազգային մրցումներուն: 1958-ին Գահիրէի մէջ նոյնիսկ ներկայ եղած է Հ.Մ.Ը.Մ.-ի Հալէպի մասնաճիւղի ֆութպոլի խումբի մրցումներուն:

Հալէպի մէջ կատարուած ֆութպոլի մրցումներու աւարտին՝ անտեղի պարտութենէ մը յետոյ, երբ երիտասարդութիւնը Թիլելի Հ.Մ.Ը.Մ.-ի ակումբ հաւաքուած՝ կը վիճէր, Հ. Փափազեան՝ ի տես երիտասարդներու յուզման, հանդարտեցնելու համար անոնց գրգռուած ջիղերը, խօսք կ'առնէ ու կ'ըսէ քանի մը բառեր, որոնց մէջ կը շեշտէ, թէ պէտք չկայ իրար անցնելու, որովհետեւ պարտութիւնները յաղթանակներու կ'առաջնորդեն: Այդպէս եղած է ան, երբ քանի մը բառ ըսած է, այդ քանի մը բառին ընդմէջէն բան մը փոխանցած է, պատգամ մը տուած է:

Հ. Փափազեան յաճախ այցելած է Լիբանան, Եգիպտոս, Իրան, Իրաք, Եւրոպա եւ այլ շրջաններ՝ գլխաւորաբար կուսակցական պարտականութեամբ:

Ան մասնակցած է ՀՅԴ կուսակցութեան գրեթէ բոլոր ընդհանուր ժողովներուն 1923-1959 թուականնե-

ձախէն աջ՝ Նաթալի Լազեան, Այտա Լազեան, Դրօ, Վիգէն Օհանճանեան եւ Հրաչ Փափազեան

րուն: Զանազան կուսակցական պարտականութիւններ ստանձնելէ ու կատարելէ ետք Հրաչ Փափազեան Հ.Յ.Դ. ԺԴ. ընդհ. ժողովին, ուր տեղի կ'ունենայ 1947 թուականի Սեպտեմբեր-Հոկտեմբեր ամիսներուն Գահիրէի մէջ (Եգիպտոս), կ'ընտրուի ՀՅԴ Բիւրոյի անդամ՝ 1947-է 1959:

Հրաչ Փափազեանի ունեցած էական դերը ընդհանրապէս՝ Սուրիոյ, եւ յատկապէս՝ Հալէպի հայ գաղութի վերակազմաւորման եւ գոյատեւման մէջ անուրանալի է եղած: Ան թէեւ հայկական տարբեր հաստատութիւններու, կեդրոններու եւ միութիւններու հիմնադրութիւններուն մտայղացողն ու կազմակերպողն էր, սակայն միւս կողմէ անժխտելի է անոր կերտած կուսակցական ու ակումբային առողջ սերունդը, որուն մօտ միշտ ներկայ եղած է նուիրումի ոգին՝ արդիւնաւոր կերպով ծառայելու իր ազգին. ան հալէպահայ գաղութը վերածած է անառիկ ամրոցի մը այլասերման ու այլ վտանգներու դէմ՝ փոքր Հայաստանի մը շունչը ներմուծելով նորահաս սերունդին:

Հրաչ Փափազեանի դերը մեծ եղած է նաեւ Զարեհ Սրբազանի կաթողիկոս ընտրութեան ընթացքին: Օրին, երբ Կիլիկիոյ պատմական աթոռին մեծ վտանգ մը կը սպառնար: Համայնավարական Խորհրդային Միութենէն թափ առնելով՝ փոթորիկներ փչեցին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան չորս կողմը, ու փորձեցին ցնցել անոր հիմքերը եւ արմատախիլ դարձնել զայն: Սակայն Կիլիկիան կաթողիկոսութեան դարաւոր ու պատմական Ս. Աթոռին հաւատարիմ եւ արթուն պահակներուն՝ Հրաչ Փափազեաններու, ինչպէս նաեւ կարգ մը կրօնաւորներու, դաշնակցական շարքայիններու, ազգայիններու ու մանաւանդ անոր առաքելութեան հաւատացող հաւատաւոր ժողովուրդին վճռական կամքով ու անսասան հաւատքով մեծ պայքար տարուեց՝ Կիլիկիան կաթողիկոսութեան Ս. Աթոռը կանգուն եւ անխախտ պահելու:

Համայնավարական Խորհրդային Միութեան ազդեցութեամբ Խորհրդային Հայաստանի կողմէ կատարուած իրողութիւնները եւ անոր մէջ սփիւռքահայութիւնը, ի մասնաւորի՝ Մերձաւոր Արեւելքի հայութիւնը պառակտելու ու իրար դէմ ատելութեան ու թշնամական սերմ ցանելու մթնոլորտը պատճառ պիտի դառնար եղբայրական այնքան ահաւոր փորձանքներու:

Տարագիր հայութիւնը խորհրդային ազդեցութեան տակ առնելու եւ Քրեմլինի տիրակալութեան ենթարկելու տխուր ու դաժան ոտնձգութեանց դարաշրջանին վերջին փուլը կազմած են Զարեհ Առաջինի կաթողիկոս ընտրութեան առիթով տեղի ունեցած ողբերգական իրադարձութիւնները: Սկսելով Զարեհ Ա.-ի ընտրութեան նախօրէին հակադաշնակցական ճակատի տխրահռչակ անարգումի քայլերէն, անցնելով Զարեհ կաթողիկոսի ընտրութիւնը «անվաւեր» հռչակելու երջանկայիշատակ Վազգէն Ա. Պալճեան Ամենայն Հայոց կաթողիկոսին պարտադրուած եւ անոր կողմէ ստորագրուած կոնդակէն (որ խորհրդայիններու «ընտրական պարգեւը» եղաւ՝ Էջմիածնին արգիլելով, որ իր մասնակցութիւնը բերէ Զարեհ Առաջինի կաթողիկոս օծումին) եւ հասնելով Սփիւռքի տարածքին հակամարտ թեմերու առաջացումին՝ հայ ժողովուրդը ապրեցաւ իր ժամանակակից պատմութեան դառնագոյն փուլը, որ բարեբախտաբար եղաւ նաեւ վերջին ու եզրափակիչ արարը՝ ազգային պառակտումի օտարամուտ գրգռութեանց էջը գոցելու եւ Հայ Դատի պահանջատիրութեան ներշնչումով հայոց ազգային միասնականութեան ուղին բանալու առումով:

Արդարեւ, Կիլիկիոյ թափուր աթոռին թեկնածու կը ներկայանային Գարեգին Արք. Տրապիզոնի, Խաղ Արք. Աջապահեան եւ Դերենիկ Եպիս. Փոլատեան: Ասոնք 1941-էն ասդին տեսած էին, թէ ինչ ուժի վրայ յենելով կարելի էր կաթողիկոս կամ պատրիարք ընդունիլ:

Բայց Միջին Արեւելքի մէջ քաղաքական իրադարձութիւնները բաւական զարգացումներ արձանագրելով՝ շատ բան փոխուած էր եւ արաբական պետութիւնները ֆրանսական ու անգլիական ազդեցութիւններէ, ճնշումներէ ձերբազատուելէ յետոյ տրամադրութիւն չունէին անոնց տեղ բերելու սովետականը:

Կիլիկիոյ կաթողիկոսութեան տեղապահ ընտրուած էր Խորէն եպիսկ. Բարոյեան, եւ որոշուած էր 1956 Փետրուար 14-ին ընտրել գահակալը. առ այդ հրաւիրուած էին երեք թեմերու՝ Լիբանան, Սուրիա, Կիպրոս պատգամաւորները:

Այդ ատեն է, որ հայ եկեղեցական պատմութեան մէջ նախընթաց չունեցող դէպք մը պատահուեցաւ: Էջմիածինի նորընտիր Վազգէն կաթողիկոս, հազիւ քանի մը ամիսէ ի վեր ընտրուած եւ դեռ Կովկասի, Ռուսաստանի թեմերը չայցելած, ղրկուեցաւ Լիբանան, որպէսզի Կիլիկիոյ կաթողիկոս ընտրուի այն եկեղեցականը, որ կ'ենթարկուի ծանօթ քաղաքական ազդեցութեան:

Օրին, յատկապէս՝ «Ազդակ» 12-էն 22 Փետրուար 1956-ի եւ «Արեւելք» 14-էն 22 Փետրուար 1956-ի եւ լրատուական այլ աղբիւրներ լուսարձակի տակ կ'առնեն ու լայնօրէն կ'անդրադառնան Զարեհ Ա. Վեհափառի ընտրութեան ընթացքին:

Կիրակի, 12 Փետրուար 1956-ին, Ամենայն Հայոց Վազգէն Ա. կաթողիկոս Լիբանան կը ժամանէ՝ մասնակցելու Կիլիկիոյ կաթողիկոսութեան ընտրութեան եւ օծման: «Փառահեղ ընդունելութիւն Վեհափառ Հայրապետին»[14] խորագիրով տեղեկատուութեամբ «Ազդակ» կը գրէր. «Պատմական եւ աննախընթաց ընդունելութիւն մը ցոյց տուաւ Լիբանանի հայութիւնը, երէկ՝ Կիրակի, 12 Փետրուար 1956, Ամենայն Հայոց Հայրապետ Տ. Տ. Վազգէն Ա.-ի:

Երեքշաբթի, 14 Փետրուար 1956-ի առաւօտեան ժամը 10:30-ին, կաթողիկոսականի վեհարանին մէջ Կիլիկիոյ կաթողիկոսական ընտրութեան պատգամաւորական ժողովի բացումը կը կատարուի»:

«Ազդակ» կ'աւելցնէ. «Էջմիածնայ Հայրապետը պատրուակելով, թէ Կիլիկիոյ հայրապետական աթոռի թեկնածուին շուրջ շեշտուած տարակարծութիւններ եւ կիրքեր գոյութիւն ունին, մինչ ինք կ'ուզէ իբրեւ

թէ խաղաղ մթնոլորտ հաստատել, առաջարկեց պատգամաւորներուն շաբաթ մը յետաձգել ժողովի գումարումը:

Միաժամանակ Վեհափառը հեռաւոր սպառնալիքի մը ձեւով ուզեց զգացնել, թէ պիտի չմնայ կաթողիկոսական ընտրութեան եւ օծումին, եթէ երբէք ընթացք չտրուի իր այս թելադրութեան:

Այս ձեւով եզրակացնելէ ետք Վեհափառը առանձին ձգեց ժողովը, որպէսզի ան իր որոշումը տայ:

Տեղապահ Խորէն Սրբազան հրաւիրեց ներկաները՝ իրենց տեսակէտները պարզելու Հայրապետի յետաձգման առաջարկին շուրջ...:

Խօսք առաւ նախ տոքթ. Ա. Պաղտասարեան, որ ընդգծեց անհրաժեշտութիւնը նախ ժողովը բանալու: Իրեն միացաւ Մովսէս Տէր Գալուստեան, որ շեշտը դրաւ հետեւեալ կէտերուն վրայ.

ա) Պատգամաւորական ժողովը կը գումարուի կաթողիկոսութեան կանոնագրի հիման վրայ, հետեւաբար, նախ պէտք է պատգամաւորները վերածել պատգամաւորական ժողովի:

բ) Եթէ յետաձգումի առաջարկ մը կայ, այդ յետաձգումը ընդունիլ կամ մերժել կը պատկանի միմիայն պատգամաւորական ժողովին:

գ) Պէտք է գումարուի ժողովը եւ օրինական սահմաններու մէջ նկատի առնուի Վեհափառի խնդրանքը»[15]:

Այնուհետեւ «Խօսք առաւ պր. Հրաչ Փափազեան, որ շեշտեց կարեւորութեամբ, թէ յետաձգումի առաջարկը մերժելու որեւէ տրամադրութիւն գոյութիւն չունի պատգամաւորներու մօտ, որոնք իրենց չափ եւ աւելի կը բաղձան ներդաշնակ տեսնել ժողովը եւ, սակայն, այս բաղձանքի իրականացման համար ո՛չ մէկ պատճառ գոյութիւն ունի՝ պատգամաւորները ցրուելու:

Կը կազմուի առժամեայ դիւանը, կը կատարէ լիազօրագրերու ստուգումը, կը դառնայ ժողով, ապա միայն նո՛յն այդ ժողովը, եթէ ուզէ, կը յետաձգէ կաթողիկոսական ընտրութիւնը»[16]:

Խորէն եպիսկոպոս ժողովին պատկերը եւ տրամադրութիւնները ներկայացուց Վազգէն Վեհափառին, որ սակայն հաստատ մնաց իր առաջարկին վրայ:

Տեղապահ Խորէն սրբազան հաստատելէ ետք օրինաւորութիւնը պատգամաւորներու բացարձակ մեծամասնութեան տեսակէտին, յայտնեց. «Կը տեսնեմ որ մեր յարգելի պատգամաւորներու իրաւունքը անտեսել կրնայ ժխտականօրէն անդրադառնալ Կիլիկեան աթոռի ապագային եւ վտանգել զայն անվերականգնելիօրէն: Իբրեւ տեղապահը այս աթոռին՝ պարտք կը նկատեմ ամէն պատասխանատուութիւն յանձն առնելով, նոյնիսկ Վեհափառ Հայրապետէն յանդիմանուելու գնով՝ յարգել օրէնքը եւ անցնիլ առժամեայ դիւանի կազմութեան՝ պատգամաւորներու երիցագոյն անդամը ընտրելով ատենապետ, իսկ կրտսերագոյնը՝ ատենադպիր»[17]:

Սրբազան Հօր այս վճռական յայտարարութիւնը ընդունուեցաւ պատգամաւորներու երկարատեւ որոտընդոստ ծափահարութիւններով:

Յիսուն պատգամաւորներէ 12-ի բացակայութեամբ եւ մնացեալ 38 պատգամաւորներու միաձայնութեամբ ձեռնարկուեցաւ առժամեայ դիւանի կազմութեան, եւ իրենց տեղերը գրաւեցին ատենապետ Յակոբ Տէր Մելքոնեան եւ ատենադպիր Յարութիւն Գոյումճեան: Կատարուեցաւ լիազօրագրերու ստուգումը:

Առժամեայ դիւանի կազմութենէն ետք խօսք կ'առնեն տոքթ. Ատուր Գապագեան եւ Հրաչ Փափազեան, որոնք կ'ընդգծեն անհրաժեշտութիւնը ընտրելու նաեւ մնայուն դիւանը, որպէսզի աշխարհական, թէ կրօնական ոչ մէկ անհատ, ոտնձգութիւն փորձելով պատգամաւորական ժողովի իրաւասութեան սահմաններէն ներս, հետագային առիթ չտայ որեւէ խափանարարութեան:

Այս առաջարկի մասին արտայայտուեցան զանազան պատգամաւորներ, որոնց եզրակացութեան հիման վրայ տեղապահ Խորէն Սրբազան առաջարկեց կազմել մնայուն դիւանը եւ այս իմաստով դիմեց պատգամաւորներու ձայնին: 38 պատգամաւորներ միահամուռ ցանկութիւն յայտնեցին գործի վերածելու այս առաջարկը եւ մնայուն դիւանը կազմուեցաւ հետեւեալ ձեւով.

Ա. Ատենապետ՝ Յակոբ Տէր-Մելքոնեան
Բ. Ատենապետ՝ Վահէ Սէթեան
Ա. Ատենադպիր՝ Ստեփան Գապարաճեան
Բ. Ատենադպիր՝ Յարութիւն Գոյումճեան

Պատգամաւորական ժողովը, ստացած ըլլալով իր ժողովի օրինաւորութիւնը եւ նուիրականացուցած ըլլալով իր բոլոր իրաւունքները, իր իրաւասութեան հիման վրայ եւ իբրեւ յարգանքի արտայայտութիւն գոհացում տուած ըլլալու համար Վեհափառ Վազգէն կաթողիկոսի խնդրանքին՝ որոշեց կաթողիկոսական ընտրութիւնը կատարել ամէնէն ուշը մինչեւ Երկուշաբթի, 20 Փետրուար:

Այս որոշումով ալ ժողովը վերջացած նկատեց իր նիստը ու փակեց ժամը 13:45-ին:

Երկուշաբթի, 20 Փետրուար, առաւօտեան ժամը 11:45-ին, Կիլիկիոյ Աթոռի կաթողիկոսական ընտրութեան պատգամաւորական ժողովը գումարուեցաւ կաթողիկոսարանի վեհարանին մէջ՝ նախագահութեամբ կաթողիկոսական տեղապահ Խորէն եպիսկոպոս Բարոյեանի եւ ատենապետութեամբ Յակոբ Տէր-Մելքոնեանին:

Ժողովին ներկայ էին 36 պատգամաւորներ, ինչպէս նաեւ «Ազդակ»-ի, «Արեւելք»-ի, «Այգ»-ի, «Նիւ-Եոք Թայմզ»-ի, «Լը ժուռ»-ի, «լ'Օրէան»-ի, «Մաթէն»-ի, Միւնիխի «Ազատագրութեան ձայն»-ի, «Ալիք»-ի, «Հայրենիք»-ի, «Յուսաբեր»-ի, «Սիոն»-ի, «Հասկ»-ի, «Հայեաթ»-ի, «Տէյլի Սթար»-ի, «Մարմարա»-ի եւ «Էլ-Ժարիտա»-ի թղթակիցները: Կային նաեւ 15 լուսանկարիչներ եւ սինեմայի օբէրաթէօր[18] մը Պոլսէն:

Գաղտնի քուէարկութեամբ կազմուեցաւ եռանուն ցանկ մը՝ բաղկացած Խորէն եպիսկոպոս Բարոյեանէ, Զարեհ եպիսկոպոս Փայալեանէ եւ Ղեւոնդ եպիսկոպոս Չէպէեանէ:

Եռանուն ցանկի կազմութենէն ետք տեղի ունեցաւ ընտրութիւնը եւ 36 պատգամաւորներու մասնակցութեամբ, 32 ձայներու ջախջախիչ մեծամասնութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ Աթոռի գահակալ ընտրուեցաւ Բերիոյ թեմի առաջնորդ Զարեհ եպիսկոպոս Փայասլեան[19]: Երկու պատգամաւորներ ճերմակ քուէ տուին, իսկ մէկական քուէ ստացան Խորէն եպիսկոպոս Բարոյեան եւ Պոլսոյ պատրիարք Ամեն. Գարեգին արք. Խաչատուրեան:

Ազգընտիր գահակալին ընտրութիւնը ողջունուեցաւ ներկաներու բուռն եւ երկարատեւ ծափահարութիւններով:

Այսպիսով՝ Կիլիկիոյ կաթողիկոսութեան ընտրութիւնները աւարտեցան Էջմիածնի կամ աւելի ճիշդ՝ խորհրդային իշխանութիւններուն թելադրանքները մերժող, ազգային անկախ մտածողութեան տէր, սուրբ մարդու մը՝ Զարեհ Ա. Փայասլեան կաթողիկոսի ընտրութեամբ: Միւս կողմէ՝ ան փրկեց Սսոյ կաթողիկոսութեան Ս. Աթոռը՝ Ռուբինեաց հարստութեան վերջին ժառանգը:

Հետագային Զարեհ Առաջին իր անանձնական մօտեցումով, ներողամտութեան ոգիով եւ անսահման բարութեամբ ու նուիրումով մեծ ներդրում ունեցաւ՝ պառակտուածութեան այդ տխուր եւ դառն էջերը փակելու եւ համերաշխութեան ու միասնականութեան ենթահող պատրաստելու:

1959-ի Մայիսին Դամասկոսի մէջ Հրաչ Փափազեան կ'այցելէ Արաբական Միացեալ Հանրապետութեան (ԱՄՀ) առաջին քաղաքացի Շուքրի ալ-Քուաթլիին: Շուրջ մէկ ժամ տեւած այցելութեան ընթացքին նախագահ ալ-Քուաթլի մեծ դրուատիքով կ'անդրադառնայ Փափազեանի մասին, ինչպէս նաեւ անգամ մը եւս կ'ընդգծէ յատկապէս սուրիացի ուաթանիներուն (ազգայնական) ծանօթ այն որակումը՝ «աջ բազուկը Սաատ Ալլահ ալ-Ժապրիին»[20]:

Օրին վերոնշեալ հանդիպումը «Արեւելք» այսպէս կը հաղորդէր. «Թերթիս արտօնատէրը՝ ընկ. Հրաչ Փափազեան, երէկ կէսօրէ ետք՝ ժամը 1.20-ին, Հալէպ ժամանեց: Օդանաւակայանին մէջ ընդունուեցաւ ընկերներու եւ բարեկաններու կողմէ:

Ընկ. Հրաչ Փափազեան Դամասկոս գտնուած օրերուն այցելեց ԱՄՀ-ի առաջին քաղաքացի Շուքրի ալ-Քուաթլիի վերջինիս բնակարանին մէջ՝ ընկերակցութեամբ Պ. Վահան Տօնապետեանի, իրաւաբան Ֆրէտ Արսլանեանի եւ ընկ. Ներսէս Պարսումեանի: Տեսակցութիւնը տեւեց մօտ մէկ ժամ, Շուքրի պէյ եւ ընկ. Հրաչ Փափազեան ողջագուրուելէ ետք սիրալիր խօսակցութիւն մը ունեցան: Շուքրի պէյ, իրեն այցելութեան եկած հիւրերուն ներկայացնելով ընկ. Հրաչը, յայտարարեց, թէ Սուրիոյ ազատագրութիւնը կերտող ղեկավարներէն է եւ աջ բազուկը Սաատ Ալլահ ալ-Ժապրիի:

Ձեզ,—ըսաւ Շուքրի պէյը ընկ. Հրաչին,—երեսուն տարիէ ի վեր կը ճանչնանք իբրեւ անկեղծ հայրենասէրներ, անսակարկ նիւիրեալներ եւ արաբական վերելքին համար զոհաբերուողներ»»[21]:

Այնուհետեւ «Շուքրի պէյ անդրադարձաւ համայնավար վտանգին եւ ԱՄՀ-ի կառավարութեան մղած կորովի պայքարին: «Փա՛ռք Աստուծոյ,—ըսաւ,— ազատեցանք համայնավար չարիքէն, որուն ճիրանները երկարած էին մեզի»»[22]:

Վերոնշեալ լուրը անմիջապէս ստայօդ տեղեկանքով կը հրապարակուի հակադաշնակցական մամուլի մէջ: Փափազեանի հասցէին բամբասանքներով եւ վատաբարոյ խօսքերով լոյս տեսած թերթերէն մէկը, որպէս օրինակ, հոս կը ներկայացնենք. Պէյրութի մէջ հրատարակուող «Յառաջ»[23] («Մեր նշանաբանն է՝ Յառաջ») քաղաքական շաբաթաթերթը, որ «Փափազեան էֆենտի...» խորագրով գրեց «ԽԻԿԱՐ» ծածկանունով՝ վերոնշեալ լուրը փոխ առնելով. Հրաչ Փափազեանը եւ անոր միջոցաւ Հ. Յ. Դաշնակցութիւնը կը վարկաբեկէ եւ կրկին նուաստացնելու փորձ կը կատարէ, թունաւոր եւ ապաբարոյ մոլուցքով խեղաթիւրուած տեղեկութիւն կը տարածէ: «Յառաջ»-ի այս նիւթը օրին կ'արտատպեն հակադաշնակցական այլ թերթեր նաեւ, ինչպէս՝ Ամերիկայի «Երիտասարդ Հայաստան»[24] թերթը...:

Հայաստան ու հայութիւն, որոնք եղած են ու կը մնան Հ. Յ. Դաշնակցութեան գործունէութեան խարիսխները, բնականօրէն եղած են Հրաչ Փափազեանի գործունէութեան առանցքը: Ապրեցաւ հայութեամբ, տառապեցաւ անոր ցաւերով: Ձգնեցաւ սփիւռքահայութիւնը առաջնորդել լուսաւոր հանգրուանէ հանգրուան՝ ի խնդիր ազգապահպանման գործին:

Համեստ, խորհրդաւորութեան հասնող լռութեամբ, յարատեւ եւ տքնաջան աշխատանքի մարդն էր ան: Հաւատաւոր դաշնակցական եւ գաղափարականի անսայթաք մարդը:

Երբէք դիւրին չէ եղած Հրաչ Փափազեանի ճամբան: Ան կեանքի ընթացքին դիմագրաւած է բազում մարտահրաւէրներ:

Անոնցմէ ամէնէն ահաւորը եղաւ համայնավարներու եւ անոնց գործակալներու կողմէ հակադաշնակցական մոլուցքի դրսեւորումները:

Խորհրդային Միութեան կողմէ յառաջացած հակադաշնակցական հովերը փոթորկալի ձեւով իրենց պտուղը տուած էին Սփիւռքի տարբեր շրջաններուն մէջ: Կերեւի չափազանցած չենք ըլլար, եթէ ըսենք, որ այդ օրերուն հակադաշնակցական պայքարին մէջ ամէնէն շատ թիրախաւորուած դաշնակցականներէն մէկը Հրաչ Փափազեանն է եղած:

Սփիւռքի տարածքին, Մերձաւոր Արեւելքէն մինչեւ Ամերիկաներու ցամաքամասերը համայնավարութեան խօսափողը դարձած կազմակերպութիւններու, միութիւններու ու անհատներու պատկանող թերթերու ու գիրքերու ընդմէջէն օրին հակադաշնակցական դրսեւորումներով բացայայտ յարձակումի եւ արշաւի ենթարկեցին Հրաչ Փափազեանը: ■

Օգտագործուած աղբիւրներ

1. «Ճեպէլ Մուսա» («Մովսէսի լեռ») արաբերէն անուանումէն կու գայ Մուսա լեռը:
2. Ֆէս (թրքերէն՝ fes), արեւելեան գլխարկ, անուանումը ծագած է Մարոքի Ֆէս քաղաքի անունէն: Սովորաբար կարմիր չուխէ պատրաստուած, որ ուղղակի կը հագցուի գուլխու վրայ՝ առանց կողերու եւ ճակատնոցի: Ֆէսերը կ'ունենան երկայն մետաքսէ ծոպ՝ մուգ կապոյտ գոյնով: Ունի բիւզանդական ծագում: Օսմանեան կայսրութեան մէջ ֆէս կրելը պարտադիր էր, կը յամարուէր բարեպաշտութեան նշան, սակայն 1925-ին արգիլուած է Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքի կողմէ իբրեւ անյարմար գլխարկ:
3. أريسيان د. نورا، "النواب الأرمن في المجالس النيابية السورية: 1928-2011"، 39. دمشق، 2011، ص
4. أريسيان د. نورا، "النواب الأرمن في المجالس النيابية السورية: 1928-2011"، 77. دمشق، 2011، ص
5. أريسيان د. نورا، "النواب الأرمن في المجالس النيابية السورية: 1928-2011"، 83. دمشق، 2011، ص
6. Շուքրի ալ-Քուաթլի (21 Հոկտեմբեր 1891 - 30 Յունիս 1967), Սուրիոյ Հանրապետութեան նախագահ 1943-1949 թուականներուն եւ այնուհետեւ 1955-1958 թուականներուն:
7. أريسيان د. نورا، "النواب الأرمن في المجالس النيابية السورية: 1928-2011"، 91. دمشق، 2011، ص
8. Օնսիկ Պողիկեան:
9. Սաատ Ալլահ ալ-Ժապրիի կրտսեր եղբայրը: Իհսանը քաղաքական կեանքի մէջ Սաատ Ալլահէ նուազ կարողութեամբ էր, այդ փորձառութիւնը չունէր:
10. Անդրանիկ Ծառուկեան, «Երազային Հալէպը», Պէյրութ, 1980, էջ 203-204: Տես՝ նաեւ. الجابري رياض، "سعد الله الجابري وحوار مع التاريخ: أوراق مضيئة"، دمشق، 2006، ص 103
11. «Ազդակ» օրաթերթ, Շաբաթ, 20 Օգոստոս 1960, էջ 2:
12. «Արեւելք» օրաթերթը, Երկուշաբթի, 7 Յուլիս 1947, էջ 1:
13. Նոյն տեղը, էջ 4:
14. «Ազդակ» օրաթերթ, Երեքշաբթի, 14 Փետրուար 1956, էջ 1:
15. «Արեւելք» օրաթերթ, Հինգշաբթի, 16 Փետրուար 1956, էջ 1:
16. Նոյն տեղը, էջ 1:
17. Նոյն տեղը, էջ 1:
18. Մասնագէտնկարիչ:
19. «Ազդակ» օրաթերթ, Երեքշաբթի, 21 Փետրուար 1956, էջ 1:
20. «Արեւելք» օրաթերթ, Երեքշաբթի, 5 Մայիս 1959:
21. Նոյն տեղը:
22. Նոյն տեղը:
23. «Յառաջ», Գ. տարի, թիւ 22 (125), Կիրակի, 31 Մայիս 1959, Պէյրութ:
24. «Երիտասարդ Հայաստան», 56-րդ տարի, թիւ 19, Ուրբաթ, Յուլիս 10, 1959, Նիւ Եորք (ԱՄՆ):

ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ԱՂԲԻՒՐՆԵՐՈՒ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՑԱՆԿ

1. Գրականութիւն

1. Անձնական արխիւներ:
2. Երկանեան Արամ, «Այսպէս. սպաննեցինք կամ գիրք մատուցման եւ հատուցման», Պէյրութ, տպարան «Օնիպար», 1954:
3. Էպլիղաթեան Գրիգոր, «Յուշեր եւ վկայութիւններ», Հալէպ, 2011:
4. «Թեհլիրեան արդարահատոյցը», խմբագիր՝ Յարութիւն Քիւրքճեան, հրատարակութիւն Հ. Յ. Դաշնակցութեան, Համազգայինի «Վահէ Սէթեան» տպարան, Պէյրութ, 1981:
5. Լազեան Գաբրիէլ, «Հայաստան եւ Հայ դատը հայ եւ ռուս յարաբերութիւններու լոյսին տակ», տպարան «Յուսաբեր» Գահիրէ, 1957:
6. Ծառուկեան Ա.[նդրանիկ], «Երազային Հալէպը», Պէյրութ, 1980:
7. Շիրակեան Արշաւիր, «Կտակն էր նահատակներուն», Պէյրութ, տպարան կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, Անթիլիաս, Լիբանան, 1965:
8. Տասնապետեան Հրաչ, «Հ. Յ. Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչեւ Ժ. Ընդհ. ժողովը (1890-1924)», Աթէնք, 1988:
9. أريسيان د. نورا، "النواب الأرمن في المجالس النيابية السورية: 1928-2011"، دمشق، 2011
10. الجابري رياض، "سعد الله الجابري وحوار مع التاريخ: أوراق مضيئة"، دمشق، 2006.

2. Պարբերական մամուլ

1. «Ազատ օր» օրաթերթ, Աթէնք, Յունաստան:
2. «Ազդակ» օրաթերթ, Պէյրութ:
3. «Ալիք» օրաթերթ, Թեհրան (Իրան):
4. «Արեւելք» օրաթերթի հաւաքածոյ, Հալէպ, Սուրիա:
5. «Երիտասարդ Հայաստան», Նիւ Եորք (ԱՄՆ):
6. «Հայրենիք» օրաթերթ, Պոսթըն (ԱՄՆ):
7. «Հասկ» պաշտօնական ամսաթերթ, Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ, Բացառիկ թիւ, նուիրուած Վեհափառ Տ. Տ. Զարեհ Ա. Կաթողիկոսին, նորընտիր հայրապետին, Մեծի Տանն Կիլիկիոյ, թիւ 1-4, ԻԵ. տարի, Յունուար-Ապրիլ, Պէյրութ, 1956:
8. «Յառաջ», օրաթերթ, Փարիզ, Ֆրանսա:
9. «Յառաջ», Պէյրութ, Լիբանան:
10. «Յուսաբեր», օրաթերթ, Գահիրէ, Եգիպտոս:
11. مجلة «السنابل» أسبوعية، آب، 1960، حلب .

Մուսա լեռան պարպումը, Այնճար հայավանի ծնունդը

Յակոբ Ճանպազեան
Դեղանկարիչ, քանդակագործ

Անցնող դարասկիզբի հայոց պատմութեան էջերը լեցնող ցեղասպանութեան զարհուրանքներն ու արիւնալի կռիւները ունեցան նաև իրենց փայլատակումներու ադամանդեայ վայրկեանները. Մուսա լեռ, Սասուն, Վան, Ուրֆա, Շապին Գարահիսար, Սարդարապատ, Բաշ Ապարան և բազում մեծ ու փոքր գիւղեր կեանքի ու մահուան պատմութիւնը հերոսներու արիւնով փորագրեցին յաւերժութեան ապառաժեայ ճակատին վրայ: Եւ այս բոլորը եկան անգամ մը ևս հաստատելու, թէ ինչպէ՛ս հրաշքներ կրնան գործել ժողովուրդի մը ազատատենչ զաւակները, երբ ազատութեան ոգին մշտավառ է և նուիրումը՝ անսակարկ:

Մուսա լեռան առիւծասիրտ զաւակները, վստահած իրենց պապենական սրբազան լեռան, գերմարդկային քաջութեամբ 1915 թուականի Եղեռնի համատարած սուգին մէջէն գալիք սերունդներու յիշողութեան, հայոց պատմութեան մատեաններուն և միջազգային քաղաքական շրջանակներու գիտակցութեան մէջ դրոշմեցին յաղթանակի անջնջելի էջեր: Մուսա լեռան խիզախ զաւակներուն հերոսական մարտնչումները տպաւորեցին նաև ամբողջ արևմտեան աշխարհն ու Եւրոպան, և այդ ճշմարտութիւններուն փաստական վկան հանդիսացաւ օտարազգի գրող Ֆրանց Վերֆելը, որուն «Մուսա լեռան 40 օրը» խորագրով լայնածաւալ վէպը թարգմանուեցաւ բազմաթիւ լեզուներու՝ տակաւին ներշնչելով օտարազգիները, ինչպէս նաև մեզ և բոլոր անոնք, որոնք օրհասական պահերուն հաւատքի և կամքի ուժին վստահած, յաղթանակներ նուաճելով՝ հերոսապատումներ կ՚արձանագրեն:

ՀՕՄ-ի Թորոնթոյի «Ռուբինա» մասնաճիւղի կազմակերպած «Լիբանանի տոհմիկ օրուան» առիթով եկէք անդրադառնանք Լիբանանի Այնճար հայաւանի հիմնադրութեան տուն տուող պատճառներուն:

Մուսա լեռան պարպումը

Նկատի ունենալով, որ 23 Յուլիս 1939-ին սանճաքը վերջնականապէս Թուրքիոյ կը կցուէր Փարիզի մէջ կնքուած ֆրանքօ-թրքական դաշնագրով, շրջանի հայութիւնը յաջորդող մէկ շաբթուան ընթացքին պէտք է լքէր թրքական հողերը: 1938-ի աշնան և յաջորդող տարուան ձմռան հայերու 70 տոկոսը արդէն գաղթած էր շրջանէն: 1939 թուականի Յուլիս 17-ին կը սկսի Մուսա լեռան գիւղերու պարպումը: Եւ դարձեալ գաղթականութիւն, երբ տակաւին նախորդ գաղթականութեան յիշողութիւնը թարմ էր բազմաչարչար գիւղացիներու մտքերուն մէջ: Մուսալեռցին արցունքը աչքերուն կը բաժնուէր իր հայրենի դարաւոր գիւղերէն ու լեռներէն:

Ֆրանսական բանակին հսկողութեան տակ գիւղացիները քանի մը ժամէն կ՚անցնին Քեսապի մօտէն ու կը մտնեն Սուրիա: Յուլիս 23-ին Մուսա լեռան գիւղերը արդէն իսկ պարպուած էին իրենց բոլոր բնակիչներէն: Միայն Վագըֆ գիւղին մէջ կը մնան քանի մը ընտանիքներ, որոնք կը գոյատևեն մինչև այսօր:



Մինչև 23 Յուլիս 1939 սանճաքի Մուսա լեռան և Քըրրք Խանի 35 հազար հաշուող հայութիւնը, ինչպէս նաև 20 հազար արաբներ և չէրքէզներ կը հեռանան սանճաքէն և կը հաստատուին Սուրիա կամ Լիբանան: Մուսալեռցիներու առժամեայ բնակավայր կը դառնայ Պասիթը՝ Քեսապէն շուրջ 4 քիլոմեթր հարաւ-արևմուտքը գտնուող ծովեզերեայ շրջանը:

Մուսալեռցիք Պասիթի մէջ մնացին 40 օր ցախով կամ սաւաններով ծածկուած խցիկներու տակ: 40 դաժան և տխուր օրեր՝ բնութեան անշուք և մռայլ տեսարանին նման: Պասիթէն միայն ցաւալի յիշատակներ մնացին Մուսա լեռան ժողովուրդին յիշողութեան մէջ: Անօթևան, ըմպելի ջուրի և սնունդի պակասէն ժողովուրդը ենթարկուեցաւ նաև հեղեղանման անձրևային տարափներու, շուտով վրայ հասան հիւանդութիւնները, և յատկապէս տիզանթերի հիւանդութիւնը մանուկներուն մէջ համաճարակի ձև ստացաւ: Հայկական բարեգործական ընդհանուր միութեան նպաստից կեդրոնական յանձնախումբը իր հոգատար ձեռքը կ՚երկարէ բեկոր դարձած մուսալեռցիին ու կը բանայ հիւանդանոց մը Լաթաքիոյ մէջ, ուր փոխադրուեցան աւելի քան 200 հիւանդներ՝ ծանր հիւանդներն ալ փոխադրելով մինչև Պէյրութ:

Այն օրերուն, երբ մուսալեռցիք դաժան օրեր կ՚անցնէին Պասիթի մէջ, ֆրանսական իշխանութիւնները աշխատանք կը տանէին՝ աւարտելու նոր բնակավայրի մը գնումը Մուսա լեռան ժողովուրդին համար: Մուսալեռցի ղեկավար և սուրիական խորհրդարանի անդամ Մովսէս Տէր Գալուստեան մեծ դեր կ՚ունենայ նոր կայքի ապահովման մէջ և փաստօրէն կը դառնայ անոր հիմնադիրը: Կ՚ապահովուի Այնճար անունով ընդարձակ կիսանապատային դաշտը Լիբանանի Պեքաա դաշտին արևելեան կողմը՝ սուրիական սահմանին մօտ, լիբանանեան արևելեան լեռնաշղթայի ստորոտին: Երբ ամէն կարգադրութիւն կ՚աւարտի, մուսալեռցիք Փոր Սայիտէն նաւով նախ կը փոխադրուին Թրիփոլի, ուրկէ շոգեկառքով՝ Ռայաք և վերջապէս ապրանքատար ինքնաշարժներով՝ Այնճար, 4 Սեպտեմբեր 1939-ին: Եւ ահա կը սկսի Այնճար գաղթականի նոր պատմութիւնը:

Երբ և ինչպէ՞ս կառուցուեցաւ Այնճար հայաւանը

Այնճար միակ գիւղն է Պեքաայի դաշտին մէջ, որուն համար նախ պատրաստուած է յատակագիծ և ապա կառուցուած: Այնճարի յատակագիծը, որ կը ներկայացնէ թաղերը բաց արծիւի մը, պատրաստուած է հայազգի ճարտարապետ Յակոբ Քեշիշեանի կողմէ: Այնճար կը գտնուի Պէյրութ-Դամասկոս մայրուղիին վրայ՝ գրեթէ երկու մայրաքաղաքներուն մէջտեղը, Պէյրութէն 45 քմ, իսկ Դամասկոսէն 40 քիլոմեթր հեռաւորութեան վրայ: Այնճարի տարածութիւնը 1800 հեկտար է, որ կ՚ընէ 18 քառակուսի քիլոմեթր: Իսկ ծովէն բարձրութիւնը՝ 900 մեթր: Այնճար գիւղաքաղաքը, յատակագիծին համաձայն, բաժնուած է վեց գիւղերու՝ Մուսա լեռան գիւղերուն անուններով:

1939-ին, երբ մուսալեռցիք Այնճար ժամանեցին, կը հաշուէին 5125 հոգի, 1205 ընտանիք: Այնճարի գլխաւոր պողոտային գագաթը կառուցուած է Ս. Պօղոս Հայաստանեայց Առաքելական եկեղեցին, որուն կողքին՝ Ազգային «Յառաջ» և «Գալուստ Կիլպէնկեան» վարժարանները: Առանձին տեղեր տրուած են Հայ Կաթողիկէ և Հայ Աւետարանական եկեղեցիներու և դպրոցներու շինութեանց համար: Այնճարի մէջ տեղաւորուեցան 1050 ընտանիքներ, որոնցմէ 803-ը՝ հայ առաքելական, 165-ը՝ հայ կաթողիկէ և 82-ը՝ հայ աւետարանական: Գաղթականները նախ հաստատուեցան «Բարեգործականի» տրամադրած վրաններուն տակ՝ բիւզանդական Քալքիս կոչուած փլատակ բերդի աւերակներուն վրայ: Նախնական տարիներուն բնութեան դաժան պայմանները, սնունդի և ջուրի տագնապը ծանր կացութիւն ստեղծեցին: Գաղթականներուն մէկ մասը մնաց Այնճար անցուկ և մահասարսուռ պայմաններու մէջ, իսկ մաս մը՝ գլխաւորաբար հիւանդ մանուկներ և ծերեր, հիւրընկալուեցան Պեքաայի շրջակայ գիւղերու՝ Մեժտելի, Ռայաքի, Դար Իլիասի, Ջահլէի գիւղացիներուն կողմէ, որուն համար երախտապարտ կը մնանք մինչև այսօր:

Տուներու շինութիւնը Այնճարի մէջ սկսաւ 1940 թուականին: Իւրաքանչիւր ընտանիքի համար կառուցուեցաւ միայն մէկ սենեակ՝ փոքր արտաքնոցով մը՝ սենեակի կողքին: Իւրաքանչիւր տան համար տրամադրուեցաւ

Ապագայ բնակավայրում

400 քառակուսի մեթր հողամաս տան կողքին և 3000 քառակուսի մեթր հողամշակութեան տարածք մը: Ասոնց զուգահեռ սկսան եկեղեցիներու և դպրոցներու շինարարութեան աշխատանքները, որոնք արդէն իսկ սկսած էին գործել վրաններու տակ:

Իւրաքանչիւր համայնք նախաձեռնեց իր եկեղեցին և դպրոցը կառուցելու աշխատանքին: Սակայն նորահաստատ գաղթականներուն համար մեծագոյն խնդիրը ապրուստի հարցն էր: Այդ տարիներուն մալարիան կը սկսի սաստիկ աւեր գործել գաղթականներուն մէջ: Այնճարի հիւանդներուն մէկ-երրորդէն աւելին այս հիւանդութենէն կը տառապէր, և մահերը բազմաթիւ էին: 1942-ի ամռան Այնճարը շատ գէշ համաճարակ մը կ՚անցնէր. միայն մէկ ամսուան ընթացքին կը մահանային 130-է աւելի գաղթականներ, իսկ առաջին երկու տարիներուն մալարիայի, փորհարութեան և չքաւորութեան պատճառով կը մահանան 200-է աւելի մուսալեռցիներ: Կիլիկիոյ կաթողիկոսութեան, Հայկական բարեգործական ընդհանուր միութեան, «Գարակէօզեան» և այլ բարեսիրական կազմակերպութիւններու օժանդակութեամբ կը հիմնուին մանկախնամ կեդրոններ, դարմանատուներ և կը տրամադրուին առողջապահական այլատեսակ սպասարկութիւններ: Քայլ առ քայլ Այնճարը կը դադրի անապատ ըլլալէ ու կը սկսի ծաղկիլ շնորհիւ հայ գիւղացիի տքնաջան աշխատանքին և անսկզբն կամքին:

Այնճարի զարգացումը կը շարունակուի արագ թափով մինչև Լիբանանի քաղաքացիական պատերազմին սկիզբը, որուն պատճառով Լիբանան կը մտնէ խառնակ ժամանակաշրջանի մը մէջ ու կը դադրի երկրին զարգացման ընթացքը: Վերջին տարիներուն, սակայն, խաղաղութեան հաստատումով Այնճար դարձեալ կ՚ապրի զարգացման արագ և աստիճանաւոր վերելք: Գիւղը նոր տարազ կը հագնի, որ բոլորովին տարբեր էր այլևս անցեալէն: Հին օրերու կիսանապատային, մահաբոյր գաղթակայանը կը փոխակերպուի նոր օրերու կանաչապատ, գեղատեսիլ և լուսաւոր գիւղաքաղաքի, կը կառուցուին արդիական քաղաքապետարանը և «Սարգիս Ջէյթլեան» կեդրոնը: Այնճարի ՀՅԴ «Կարմիր լեռ» կոմիտէին և քաղաքապետարանին նախաձեռնութեամբ և գիտութեան բարիքներէն օգտուելով՝ 2022-ին կը տեղադրուին արևային վահանակներ՝ խնայողութեամբ ընդմիշտ լուսաւոր պահելու Այնճար հայաւանի տուներն ու փողոցները:

Հոս կ՚արժէ նշել, որ 1939-1945-ին, երբ մուսալեռցիք

Այնճարի մէջ կ'անցընէին իրենց ամէնէն դժուար տարիները, Բ աշխարհամարտի աւարտէն անմիջապէս ետք՝ 1946 թուականին, կը հնչեն Հայաստան ներգաղթի զանգերը՝ հրաւիրելով սփիւռքահայերը հայրենիք՝ իրականացնելու իրենց դարաւոր երազը:

Ստեղծուած ընդհանուր խանդավառութենէն անմասն չմնացին մուսալեռցիք: 1946-47-ին Պէյրութի նաւահանգիստէն 650 ընտանիքներ Այնճարէն և 50 մուսալեռցի ընտանիքներ Սուրիոյ և Լիբանանի տարբեր քաղաքներէն կը ներգաղթեն Հայաստան: Մուսալեռցիք կը հաստատուին Հայաստանի տարբեր քաղաքներու և գիւղերու մէջ և կ'աշխատին արդիւնաբերական մարզերու մէջ: Ամոնք փայլուն յաջողութիւններ կ'արձանագրեն ուսման, գիտութեան, լուսաւորութեան և կրթութեան ասպարէզներուն մէջ ու այսպէսով կը մասնակցին Հայաստանի զարգացման և վերելքին: Հայաստանի մէջ ևս մուսալեռցիք պահեցին իրենց բարքառն ու սովորութիւնները և շարունակեցին ամէն տարի, Սեպտեմբեր ամսուն նշել Մուսա լեռան հերոսամարտը: 1972-ին Էջմիածնի շրջանի Գինեվետ աւանը կը վերանուանուի Մուսա լեռ, որու բարձունքին վրայ 1976 թուականին կը կառուցուի յուշակոթող մը՝ յարակից թանգարանով, որ կը խորհրդանշէ Մուսա լեռան մարտիկներու ազատագրական ոգին և քաջութիւնը:

Հայաստանի Մուսա լեռան հայրենակցական միութիւնը կը տանի բեղուն գործունէութիւն Հայաստանի մէջ՝ կազմակերպելով ցուցահանդէսներ, համագումարներ և այլն: Հպարտութեամբ կարելի է ըսել, թէ 2015 թուականին Հայաստանի և Այնճար հայաւանին մէջ մեծ շուքով և պետական այրերու մասնակցութեամբ տօնախմբուեցաւ Մուսա լեռան պանծալի հերոսամարտին 100-ամեակը:

Այնճարի երեք հայ յարանուանութիւնները և գործունեայ միութիւններն ու կազմակերպութիւնները Այնճարի Ս. Պօղոս Հայաստանեայց Առաքելական եկեղեցի

Մուսալեռցիք մեծաւ մասամբ առաքելական համայնքի զաւակներ էին և ունէին մէկէ աւելի հոգևոր հովիներ: Այնճարի մէջ առաջին տարիներուն, հաւատարիմ իր աննկուն հաւատքին, համայնքը իր եկեղեցական արարողութիւնները կը սկսի կատարել սև մեծ վրանի մը տակ, որ կը կոչուի վրան-եկեղեցի: 1939-ին՝ Այնճար հասնելէն քանի մը ամիս ետք, մի քանի արաբական լայն ու ընդարձակ վրաններ իրարու կցելով՝ կը բացուի նաև «Ազգային վարժարանը», որուն վրան-վարժարան անունը կը տրուի: 1940-ին Փարիզի «Յառաջ» թերթի խմբագիր Շաւարշ Միսաքեանի անձնական նախաձեռնութեամբ ֆրանսահայութենէն կոկիկ գումար մը կը հանգանակուի, և հիմը կը դրուի Ազգային «Յառաջ» վարժարանին: Վարժարանը ֆրանսահայութեան նուէրը կ'ըլլայ Մուսա լեռան գաղթական ժողովուրդին: Հետագային ի յարգանս Շաւարշ Միսաքեանի՝ անոր կիսանդրին կը կանգնեցուի վարժարանի շրջափակին մէջ:

1958-ին ծնունդ կ'առնէ Այնճարի Ս. Պօղոս եկեղեցւոյ շինութեան ծրագիրը թաղական խորհուրդին և պետական երեսփոխան Սիվսէս Տէր Գալուստեանի ջանքերով: Շինութեան ծրագիրը թափ կ'առնէ օրուան բարեջան առաջնորդ և ապա կաթողիկոս երջանկայիշատակ ՆՍՕՏՏ Խորէն Ա. Բարոյեանի օրհնութեամբ: Հաւատարիմ հայկական ճարտարապետական ոճին և կառուցողական աւանդութեանց՝ եկեղեցին կը դառնայ հայկական ճարտարապետական կոթող մը Հայաստանէն շատ հեռու՝ Այնճար հայկական աւանին մէջ: Հոկտեմբեր 1960-ին կը կատարուի եկեղեցւոյ օծումը՝ երջանկայիշատակ ՆՍՕՏՏ Զարեհ կաթողիկոս Փայլեանի ձեռամբ: Ս. Պօղոս Հայաստանեայց Առաքելական եկեղեցին՝ բազմած գիւղի գագաթին, կը դառնայ լուսաւորչակերտ հոյակապ կառոյց մը: Համայնքը այսօր կը հաշուէ 500 ընտանիք: Ունի նաև իր երկու ազգային երեսփոխանները, որոնք կը մասնակցին ազգային գաւառական ժողովին:

Կառուցվում են առաջին տները

1969 թուականին հիմը կը դրուի երկրորդական վարժարանին, որ կը կոչուի Ազգային «Գալուստ Կիւլպէնկեան» գոլէճ՝ ի յարգանս համանուն հաստատութեան, որ մեծագոյն նուիրատուն հանդիսացած էր վարժարանի կառուցման օրերուն:

Այնճարի հայ կաթողիկէ համայնքը

Հայ կաթողիկէ համայնքը անբաժան մասնիկն է Մուսա լեռան երեք համայնքներուն: Մուսալեռցի գաղթականներուն հետ մուսալեռցի կաթողիկէները Այնճար ժամանեցին և առաջին տարին ապրեցան դժուար պայմաններու տակ: Կարտինալ Աղաճանեան պատրիարքին նախաձեռնութեամբ և նիւթական օժանդակութեամբ 1940-ին հիմը կը դրուի Այնճարի «Անարատ յղութեան քոյրերու» շէնքին և վարժարանին: Այնճարի հիմնադրութենէն ի վեր Այնճարի հայ կաթողիկէ համայնքը մնայուն կերպով կ'ունենայ իր ժողովրդապետ վարդապետը: 1952-ին համայնքը կը կառուցէ իր այժմու եկեղեցին, որ ժամանակին հետ կը բարեզարդուի աւելիով՝ հայկական գմբէթով, գաւիթով և սրբանկարներով: 1954-ի Հոկտեմբեր 11-ին տեղի կ'ունենայ եկեղեցւոյ պաշտօնական օծումը՝ ձեռամբ կարտինալ Գրիգոր Պետրոս Աղաճանեան պատրիարքին: 13 Հոկտեմբեր 1973-ին համայնքը կը կատարէ «Աղաճանեան» սանուց տան բացումը: Հայ կաթողիկէ համայնքին մէջ կը գործեն տիկնանց և հայ կաթողիկէ երիտասարդաց միու-

թիւնները: Համայնքն այժմ ունի 130 ընտանիք:

Այնճարի հայ աւետարանական համայքը

Մուսա լեռան հայ աւետարանական համայնքը, թէև համեմատաբար աւելի փոքրաթիւ, սկսած է վերակազմակերպուիլ Այնճար ժամանումէն անմիջապէս ետք: 1940-ին հիմը կը դրուի Հայ Աւետարանական վարժարանին, իսկ 1941-ին կը կառուցուի Հայ Աւետարանական եկեղեցին: 1955-էն ետք վարժարանը կ'ընդարձակուի ու կ'ունենայ իր մանկապարտէզի, նախակրթարանի, միջնակարգի և երկրորդականի բաժինները՝ լուսաւոր դասարաններով, տարրալուծարանով և հանդիսասրահով: Վարժարանը քայլ առ քայլ կը վերածուի արդիական կրթական կառոյցի մը: 1953-ին է, որ վարժարանը կ'ունենայ իր երկրորդական բաժինը՝ «Հիլֆսպունտ» զուիցերիական և գերմանական բարեսիրական կազմակերպութեան օժանդակութեամբ: Տնօրէնն էր օտարազգի, բայց հայախօս քոյր Հեռուիկը: Վարժարանը կ'ունենայ նաև իր գիշերօթիկի բաժինները, որ կարելիութիւնը կը ստեղծէ հայ պատանիներուն՝ Լիբանանի, Սուրիոյ և Մերձաւոր Արևելքի զանազան շրջաններէն՝ ուսում և կրթութիւն ստանալու: «Հիլֆսպունտ» միսիոնարութիւնը Այնճարի մէջ կը տանի երախտաշատ և բազմաճիւղ գործունէութիւն: 1941-ին համայնքը կը հիմնէ իր «ՋԱՆԻՑ» երիտասարդաց և պատանեաց միութիւնները, որոնք կը տանին այլազան տեսակի գործունէութիւն՝ կրօնական, ազգային և հոգևոր դաստիարակչական բնոյթի: Նոյն տարիներուն կը կազմակերպուին նաև կիրակնօրեայ դպրոցն ու տիկնանց միութիւնը: Համայնքը այժմ ունի 150 ընտանիք:

Այնճարի կարևոր արտադրութիւնները և զբաղումները

Դարերու ընթացքին մուսալեռցիք զբաղած էին հողամշակութեամբ, սակայն Այնճարի մէջ առաջին տարիներուն անոնք զբաղեցան սանտրագործութեամբ, որ Մուսա լեռան ամենանշանաւոր արհեստներէն մէկն էր: Դանդաղօրէն սկսաւ հողամշակութիւնը, որ աւելի թափ առաւ ներգաղթէն ետք, երբ խնձորի պարտէզներուն ծառատնկումը սկսաւ:

Եւ ահա պատահեցաւ հրաշքը. մուսալեռցիին քրտինքով կիսանապատային Այնճարը վերածուեցաւ կանաչապատ և պտղաբեր դալարագեղ պարտէզներու: Այսօր դժուար է պատկերացնել, որ 84 տարուան մէջ այսքան փոփոխութիւն կրնար ստեղծուիլ:

Մուսալեռցիք Այնճարի մէջ հողատնտեսութեան կողքին զբաղեցան նաև անասնապահութեամբ: Խնձորի պարտէզներուն կողքին կան նաև տանձի, սալորի, ոսկեխնձորի, դեղձի և խաղողի այգիներ, զուգահեռ այնճարցիք կը մշակեն այլազան բանջարեղէնի տեսակներ: Այնճար շուտով կը դառնայ խնձորի արտադրութեան կարևոր կեդրոնը ոչ միայն Պեքաայի, այլև ամբողջ Լիբանանի: Այնճար այսօր կ'արտադրէ շուրջ 12 հազար թոն խնձոր: 1970-ական թուականներուն Այնճարի մէջ զարգացաւ նաև ձկնաբուծութիւնը: Գիւղատնտեսութեան կողքին Այնճարի մէջ զարգացան կարգ մը արհեստներ, ինչպէս՝ ատաղձագործութիւն, երկաթագործութիւն, ինքնաշարժի նորոգութիւն, ոսկերչութիւն և այլն: Գիւղին ընդհանուր զարգացման ընթացքին այնճարցիք բացին Լիբանանի յաջողագոյն ճաշարանները Այնճարի մէջ, բացին սրճարաններ և խաղավայրեր «ծառերուն տակը»՝ Ակին մօտիկ:

Ս. Պօղոս Հայաւանեայց Առաքելական եկեղեցին

Մշակութային կեանք

Մուսալեռցիք արուեստասէր և ուսումնասէր ժողովուրդ են: Այդ մասին ամենախօսուն երևոյթը կրթական հաստատութիւններու երևոյթն է նոյնիսկ վրաններու տակ: Առաջին քանի մը տարիներու կազմակերպչական շրջանէ մը ետք գիւղին մէջ կը սկսի մշակութային կեանքը, որ կը յատկանշուի այլազան բնոյթի ձեռնարկներու կազմակերպումով թէ՛ կրթական հաստատութիւններուն և թէ՛ գիւղին մէջ գործող միութիւններուն կողմէ: Դասախօսութիւններ, ցուցահանդէսներ և թատերական ներկայացումներ առանցքը կը կազմեն Այնճար հայաւանի մշակութային կեանքին:

Արուեստի մարզին մէջ մուսալեռցի-այնճարցին հարուստ է իր ինքնատիպ ճարտարապետներով, քանդակագործներով, նկարիչներով, երաժիշտներով, գրողներով և նախանձախնդիր է սերունդէսերունդ պահպանելու ստեղծագործ ոգին ու արուեստով բարձրանալու հմտութիւնը:

Գիւղին մէջ տիրապետող կը դառնայ գրական մթնոլորտը: Կը ստեղծագործեն մուսալեռցի և այնճարցի գրագէտներ ու մտաւորականներ, ինչպէս՝ Եդուարդ Պոյաճեան, Թովմաս Հապէշեան, վեր. Մովսէս Ճանպազեան, Պօղոս Մնապեան, Մովսէս Տէր Գալուստեան, Բարգէն Ջանայեան, Ջուլալ Գազանճեան, Սարգիս Ջէյթլեան և նոր սերունդէն՝ Սոնիա Թաշճեան, Պետիկ Հերկելեան, Վահան Ջանոյեան, Մովսէս Հերկելեան, Վահրամ Շէմմէսեան և ուրիշներ:

Անմասն չէ նաև կերպարուեստի բնագաւառը: Մու-

Այնճարի քաղաքապետարանը

սալեցիք կ'ունենան նաև իրենց արուեստագէտները: Մշակութային կեանքը կը ծաղկէր վարժարաններէն ներս, սակայն 1973-ին Համազգայինի «Պարոյր Սևակ» մասնաճիւղին հիմնումով մշակութային կեանքը կ'ապրի մեծ վերելք: Այս մասին կ'անդրադառնանք առանձին:

Այնճարի ՀՅԴ «Կարմիր Լեռ» կոմիտէին և քաղաքապետութեան երկար տարիներու թանգարան մը ունենալու երազը կ'իրականանայ 2019 թուականին. կը հիմնուի Մուսալեռ-Այնճար ազգագրական թանգարանը, և անոր բացումը կը կատարուի մեծ շուքով:

Գործող միութիւններ

Այնճարի Համազգային Հայ Կրթական և Մշակութային Միութիւն

Ինչպէս նշեցինք, Համազգայինի «Պարոյր Սևակ» մասնաճիւղը կը հիմնուի 1973-ին՝ դառնալով 95-ամեայ կազմակերպութեան Լիբանանի 6 մասնաճիւղերէն մէկը: Այս ձևով ծնունդ կ'առնէ մշակութային կազմակերպուած գործունէութիւնը Այնճարի մէջ, և մասնաճիւղը կը դառնայ Այնճարի մշակութային կեանքին միջնաբերդը: Մասնաճիւղին գլխաւոր աշխատանքները կը կեդրոնանան երաժշտական, պարարուեստի, թատերական, նկարչական, գրական բնագաւառներու շուրջ: Կը գործէ «Կոմիտաս» պարախումբը, որ ելոյթներ կ'ունենայ տարբեր քաղաքներու մէջ՝ մեծ տպաւորութիւն թողելով հայ և օտար հանդիսատեսներու վրայ: Մասնաճիւղը նաև կազմակերպած է կերպարուեստի ցուցահանդէսներ: Վերջին տարիներուն հիմնուած է «Ռուբէն Նագեան» գեղարուեստի դպրոցը, ուր սկսնակներու համար կը մատուցուին նկարչական դասընթացներ: Համազգայինի «Թորոս Ռոսլին» ակադեմիան մասնաճիւղ մը կը բանայ Այնճարի մէջ՝ գործակցելով Համազգայինի «Պարոյր Սևակ» մասնաճիւղին հետ, ուր կը կազակերպուին կերպարուեստի ցուցահանդէսներ:

2019 թուականին կը հիմնուի «Ainjar Art Gallery»-ին, ուր կը ցուցադրուին մուսալեռցի-այնճարցի արուեստագէտներու կերպարուեստի լաւագոյն գործերը:

Մասնաճիւղը ունի նաև գրական աշխուժ գործունէութիւն: Բազմաթիւ դասախօսական և այլ ձեռնարկներու կազմակերպումով հանրութիւնը ծանօթացած է լիբանանահայ և սփիւռքահայ գրագէտներու, անոնց գործերուն և ստեղծագործութիւններուն: Քաջալերուած են նաև երիտասարդ գրողները՝ անոնց համար կազմակերպելով յատուկ ձեռնարկներ: Մասնաճիւղը հրատարակած է նաև հատորներ և կառուցած է գրադարան մը ընթերցասէր հասարակութեան համար: 2019-ին կեանքի կը կոչուի գրագէտ Պօղոս Մնապեանի անուան տունթանգարանը՝ մեծ հետաքրքրութիւն ստեղծելով գրասէր հասարակութեան մօտ:

Թատերական կեանքին մէջ ևս «Լուսարձակ 40» թատերախումբի աշխատանքներուն ճամբով մասնաճիւղը կրցած է բեմականացնել հայ և օտար գրողներու բազմաթիւ գործեր՝ քաջալերելով երիտասարդ դերասանները:

Այնճարի Հայ Օգնութեան Միութիւն

Այնճարի մէջ գործունեայ ներկայութիւն է Լիբանանահայ օգնութեան խաչի «Աղթամար» մասնաճիւղը: 1942-ին 7 հիմնադիր ընկերուհիներով հիմը կը դրուի ԼՕԽ-ի «Աղթամար» մասնաճիւղին, որ կարևոր դեր կը վերցնէ Այնճարի զարգացման գործընթացին մէջ: 1946-ին մասնաճիւղը կը ստեղծէ արծուիկներու փաղանգ մը՝ աւելի քան 100 անդամներով, որ մեծ խանդավառութիւն կը ստեղծէ գիւղին մէջ: 1960-ական թուականներուն սկիզբը մասնաճիւղը կը բանայ իր դարմանատունը: 1970-ական տարիներուն գիւղին մէջ կը գործեն շտապ օգնութեան երեք կեդրոններ: «Աղթամար» մասնաճիւղին ամենամեծ իրագործումներէն մէկը կ'ըլլայ Լիբանանի քաղաքացիական պատերազմի տարիներուն ընթացքին 24 ժամ բաց դարմանատունը, որ անչափելի ծառայութիւններ մատուցեց ոչ միայն գիւղացիներուն, այլև գիւղ ժամանող հազարաւոր գաղթականներուն՝ յատկապէս եկած Պէյրութի հայահոծ շրջաններէն: Միութեան անդամներուն թիւը կը հասնի աւելի քան 250-ի: Միութիւնը ձեռք կ'երկարէ որբին, անկարին, հիւանդին և ծերին, ինչպէս նաև կ'օժանդակէ գիւղի վար-

Այնճարի գլխաւոր փողոցը

ժարաններուն՝ յատուկ հոգատարութիւն ցուցաբերելով պատանիներու ուսման: Ներկայիս մասնաճիւղը աշխուժօրէն կը շարունակէ իր առաքելութիւնը՝ ծառայելով հայրենիքին, Արցախ հայաշխարհին, հայ ժողովուրդին և Այնճար հայաւանին:

ՀՄԸՄ Այնճար

Մուսա լեռան տեղահան եղած ժողովուրդը իր առօրեայ ծանրաբեռնուած պայմաններուն մէջ իսկ կ'որոշէ հայաւանին մէջ հիմը դնել հայկական մարմնակրթական ընկերութեան մը, և 1945 թուականին կը հիմնուի ՀՄԸՄ Այնճարի մասնաճիւղը, և 1967-ին ան կը ստանայ պետական ճանաչում:

Որպէս ֆիզիքական և ազգային դաստիարակութեան իրայատուկ դպրոց՝ Այնճարի ՀՄԸՄ-ի մասնաճիւղը գիւղի երկսեռ երիտասարդութեան համար կը դառնայ հոգեկան և ֆիզիքական կրթութեան օճախ, որ իր դերը ունեցաւ առողջ սերունդներ պատրաստելու առաքելութեան մէջ: Անմիջապէս կը կազմուի սկաուտական առաջին խումբը: Այնճարի ՀՄԸՄ-ը այսօր՝ իր մարզական բազմաթիւ խումբերով, իր սկաուտական կազմերով, իր գեղեցիկ ու արդիական ակումբով ու մարզադաշտով ոչ միայն Այնճարի, այլև ամբողջ լիբանանահայութեան հպարտութիւնը կը դառնայ:

Այնճարի ՀՄԸՄ-ի մարզական խումբերը արձանագրած են փայլուն յաղթանակներ և նուաճումներ՝ պատիւ բերելով ՀՄԸՄ-ի մեծ ընտանիքին:

Լիբանանի Երիտասարդական Միութեան Այնճարի «Շավարշ Միսաքեան» մասնաճիւղ և «Յառաջ» Պատանեկան Միութիւն

Իր հիմնադրութենէն՝ 1973-էն անմիջապէս ետք, ԼԵՄ-ի «Շաւարշ Միսաքեան» մասնաճիւղը լծուեցաւ զանազան ձևի աշխատանքներու՝ միաժամանակ դաստիարակելով երիտասարդները յեղափոխական նկարագրով, առօրեայ ապահովական աշխատանքներով և հայանպաստ քարոզչութեամբ: Մասնաճիւղը կը կառուցէ իր կեդրոնը: Կը կազմակերպէ դասախօսութիւններ, բանակումներ, արշաւներ և դպրոցներու աշակերտութեան համար ձեռնարկներ: Քայլ պահելով հայ ազգային իրականութեան հետ՝ մասնաճիւղը կը դառնայ Այնճարի երիտասարդութեան տրոփող սիրտը, որ կ'արձագանգէ հայ ժողովուրդի բոլոր պատմական վերիվայրումներուն:

Այնճար հաստատուելէն ետք մուսալեռցի ժողովուրդը իր հանապազօրեայ հացին հետ միասին մտահոգ էր նաև իր զաւակներուն կրթութեամբ: Ազգային «Յառաջ» վարժարանի հիմնումէն անմիջապէս ետք՝ 1943 թուականին, հիմը դրուեցաւ նաև ՀՅԴ «Յառաջ» պատանեկան միութեան՝ որպէս բնական յաջորդը Մուսա լեռան պատանեկան միութիւններուն: ՀՅԴ պատանեկան միութիւնը դաստիարակեց հազարաւոր պատանիներ, որոնք մեծցան մեր պատմութեան և հերոսներուն աւանդներով ու ոգիով: Անոնք դարձան ապագայ հայ կեանքի գործիչները ոչ միայն Այնճարի, այլև հայաշխարհի չորս ծագերուն:

Այս բոլոր աշխատանքներուն ոգին ու մղիչ ուժը հանդիսացաւ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Այնճարի «Կարմիր լեռ» կոմիտէն, որ իր շրջահայեաց քաղաքականութեամբ, իր յանձառութեամբ ու հետևողական աշխատանքով ղեկավարեց գիւղին կեանքը լաւ ու փոթորկոտ օրերուն և դարձաւ ամբողջականօրէն հայ քաղաքապետարանին և միութիւններուն գլխաւոր մղիչ ուժն ու հովանաւորը: Եթէ այսօր Այնճարը պահած է իր հայկական դիմագիծը, եթէ ան ունի միակ հայ քաղաքապետարանը Սփիւռքի մէջ, ապա այս յաջողութիւնը կը պարտինք այնճարցիի անխորտակ կամքին ու գաղափարի նուիրուածութեան:

Սակայն Այնճարի 84-ամեայ պատմութեան մէջ տիրապետող մնաց Մուսա լեռան բարբառը: Ժողովուրդը միշտ պատմեց իր պապենական գիւղերուն մասին մուսալեռեան հնադարեան բարբառով: Ապրեցաւ անցեալը և զայն անբաժան մէկ մասնիկը դարձուց ներկային: Մուսա լեռէն երբ հեռացաւ մուսալեռցին, չմոռցաւ իր 18 հերոս նահատակներու աճիւններէն ու հողէն բուռ մը իր հետ տանիլ՝ որպէս յաւերժական մասունք:

Այնճարցիներ մեծ խանդավառութեամբ ամէն տարուան Սեպտեմբերի երկրորդ շաբաթավերջին տօնեցին հերոսամարտի յաղթանակի օրը: Դուրս գալով Այնճարի նեղ սահմաններէն՝ յաղթանակի նախաձեռնութիւնը վերածեցին ազգային տօնախմբութեան, որուն մասնակցեցան հեռու և մօտիկ բոլոր հայորդիները:

Մուսա լեռան հերոսածին զաւակներն ու թոռները հայրենիքի և Սփիւռքի հեռաւոր գաղութներուն մէջ նաև կը տօնախմբեն Մուսա լեռան հերոսամարտի տարեդարձները և անոնց ընդմէջէն կը խոնարհին բոլոր այն ազատամարտիկներու յիշատակին առջև, որոնք իրենց արիւնով գծեցին և պաշտպանեցին Մուսա լեռան, Հայաստանի և Արցախի սահմանները:

Փառք ու պարծանք Մուսա լեռան առիւծասիրտ զաւակներուն ու պատիւ մոխիրներէն յարութիւն առած հայ ժողովուրդին: ■

Ղեկավարը երկինքէն չ'իջներ

ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ
Ճարտարապետ, գրող, հրապարակագիր, «Հորիզոն»ի ու «Հորիզոն գրական»-ի աւագ խմբագիր

Միշտ այժմէական է ղեկավարութեան հարցը, մանաւանդ անոր նորոգման՝ փոխարինման հարցը, որ պարբերաբար կ'արծարծուի, ապա մոռացութեան կը տրուի:

Արդարացի է, որ ան տևաբար մնայ մեր կազմակերպութիւններու օրակարգին վրայ ու արժանանայ պատշաճ քննարկման:

Խնդիրը այն չէ, որ այս կամ այն ղեկավար, նոյնիսկ չակերտուած «ղեկավար» անձէն գոհ ենք կամ դժգոհ, զինք կը սիրենք կամ չենք սիրեր, իր պաշտօնին բարձրութեան վրա՞յ է, թէ՞ վրայ չէ:

Խնդիրը նորոգման ու փոխարինման գործընթացն է, որ լուրջ քննարկման կը կարօտի: Գիտենք, որ կեանքի օրէնքն է. մարդիկ տարիքի բերմամբ կամ առողջական պատճառներով, նոյնիսկ շատ անձնական անսպասելի իրավիճակներու հետևանքով ստիպուած են հեռանալ իրենց պաշտօններէն: Ինչպէս ընել, որ այդ պահուն հաւաքականութիւնները չտուժեն, իրար չանցնին զանոնք փոխարինելու համար, մէջտեղը չմնան թեկնածուներու բացակայութեան պատճառաւ:

Հաւաքականութիւնները իրաւամբ կ'ակնկալեն, որ ամենէն ատակ անձերը ըլլան իրենց ղեկավարները՝ իրենց կազմակերպութիւններու գլուխները՝ ուսեալ, փորձառու, իրենց պաշտօնին պահանջած յատկութիւններով օժտեալ: Սակայն ինչպէ՞ս: Ակնկալելը մէկ բան է, ակնկալութիւնը իրականութեան վերածելը՝ ուրիշ:

Այո՛, ղեկավարը երկինքէն չ'իջներ, ոչ ալ սառցարանէն կը հանես, կը հալեցնես ու գործի կը լծես,— տանք ողորմի Մուշեղ Իշխանին:

Ղեկավար պատրաստելը,— և խօսքս բոլոր մակարդակներու մասին է՝ պատանեկան խումբի մը վարիչէն մինչև երկրի մը առաջնորդը,— ծրագրուած, հետևողական աշխատանքով կ'ըլլայ: Ահա այս աշխատանքին է, որ կ'ուզեմ այստեղ անդրադառնալ:

Ղեկավարութեան, ինչպէս որևէ այլ ոլորտի կարողութիւն ունեցող անձերու որոնումը դպրոցէն կը սկսի, նոյնիսկ մանկապարտէզէն, երբ հետզհետէ աչքի կը զարնեն երեխաներու ձիրքերը: Ուսուցիչ-տնօրէն-հոգաբարձու տրամադրուած պիտի ըլլան նկատել այդ ձիրքերը, ծնողներուն ալ ուշադրութեան յանձնել, քաջալերել ու ամեն ինչ ընել զանոնք զարգացնելու համար: Այդպէս և այդպէս միայն կը բացայայտուին Կոմիտասները, Սարեանները և այլ տաղանդաւոր արուեստագէտները: Նոյնը՝ ապագայ ղեկավարները դաստիարակելու պարագային:

Արդարև, այդ մանուկ տարիքէն պիտի երևի, թէ մէկը կրնա՞յ խումբի մը հետ համերաշխ աշխատիլ, կրնա՞յ խումբի առաջնորդը դառնալ՝ առանց ինքզինք պարտադրելու, իր խմբակիցներուն յատկութիւնները զանազանել, գործեր բաշխել և այլն, և այլն:

Ժամանակի ընթացքին պէտք է մշակուին այդ կարողութիւնները և ո՞ւր, եթէ ոչ մեր այն կազմակերպութիւններուն մէջ, որոնց ճամբով պատանիներ ու երիտասարդներ կրնան իրենց կառավարման յատկութիւնները մշակել: Այդ կազմակերպութիւնները մեր պատանեկան ու երիտասարդական միութիւններն են, մարզական ու սկաուտական միութիւնները, այլև պարախումբերն ու

երգչախումբերը և մասամբ նորին:

Չի բաւեր սակայն նկատել, տեսնել, «ապրի՛ս» ըսել ու անցնիլ: Եթէ մեր կազմակերպութիւնները լուրջի պիտի առնեն իրենց շարքերը զօրացնելու ու անոնց ճամբով ալ ապագայ առաջնորդները ապահովելու գործը, ապա ունենալու են յառաջագունէ ճշտուած ծրագիր ու զայն իրագործելու նիւթական կռուաններ, որպէսզի այդպէս ալ ընտրուին, քաջալերուին, ուսանին ու պաշտօնի կոչուին ուսուցիչներ, խմբավարներ, վարչականներ կրթական, մշակութային ու քաղաքական ասպարէզներուն մէջ:

Բոլոր պարագաներուն փորձառութիւնը կարևոր գործօն մըն է: Այսօր համալսարանական, թէ գործի ասպարէզի մէջ հաւաքական կեանքի մէջ մասնակցութիւն ունեցած ու փորձառութիւն ձեռք ձգած թեկնածուները ուրիշներէ առաջ ընդունելի կը դառնան:

Մեր կազմակերպութիւնները կարելիութիւնը ունին այդ պատեհութիւնը ընծայելու մեր երիտասարդութեան:

Այդ ամենէն ետք ալ, սակայն, հաւաքականութիւնը պիտի գիտնայ տեղ տալ այդ երիտասարդներուն, ճամբայ բանալ՝ պատասխանատու պաշտօններ ստանձնելու, որպէսզի անոնք մարզուին համապատասխան ոլորտներուն մէջ և ի պահանջելն հարկին լեցնեն ստեղծուող բացերը: Այս առիթը չենք ստեղծեր, երբ մեր սիրուած, աշխատունակ ու կարող անձերը անընդհատ նոյն պաշտօններուն վրայ կը պահենք՝ փոխանակ զանոնք այլ պաշտօններու մղելու, թէկուզ ժամանակաւորապէս և անոնց տեղը նորեր չենք բերեր նոյն փորձառութիւնը ձեռք ձգելու և գործի շարունակականութիւնը ապահովելու համար:

Պաշտօնավարութեան սերնդափոխութիւնը միշտ նմանցուցած եմ դրօշարշաւի մարզախաղին, ուր մասնակիցները իրարմէ նախաճշտուած հեռաւորութիւններու վրայ կանգնած կ'ըլլան, և երբ մէկը կը վազէ, դրօշը յաջորդին յանձնելու պահուն յաջորդն ալ արդէն վազել սկսած կ'ըլլայ, պահ մը միասին կը վազեն, մինչև որ դրօշը ձեռք փոխէ և այդպէս շարունակաբար մինչև վազքուղիին աւարտը:

Այո՛, ինչպէս հողին մէջ տնկուած ծիլը ջրուելով ու խնամուելով կը վերածուի մեծ ու հովասուն ծառի, այնպէս ալ հողէ՛ն՝ վարէն, կը սկսի ղեկավարի պատրաստութիւնը:

Երկինքէն չ'իջնար ան: ■

ՀՌՉԱԿԱԳԻՐ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՌՉԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Ժողովրդական պատգամավորների Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների՝ բոլոր մակարդակների խորհուրդների պատգամավորների մասնակցությամբ համատեղ նստաշրջանն արտահայտելով ժողովրդի կամքը, որն ամրագրված է փաստացի անցկացված հանրաքվեում և ԼՂԻՄ ու Շահումյանի շրջանային իշխանության մարմինների 1988-1991 թթ. որոշումներում, ազատության, անկախության, իրավահավասարության և բարիդրացիության նրա ձգտումը, արձանագրելով Ադրբեջանի Հանրապետության կողմից «1918-1920 թթ. պետական անկախության վերականգնման» հռչակման փաստը, հաշվի առնելով, որ Ադրբեջանում տարվող ապարտեիդի և խտրականության քաղաքականությունը հանրապետությունում ստեղծել է հայ ժողովրդի նկատմամբ ատելության և անհանդուրժողականության մթնոլորտ, ինչը հանգեցրել է զինված բախումների, մարդկային զոհերի, խաղաղ հայկական գյուղերի բնակիչների զանգվածային բռնատեղահանման, հիմնվելով ԽՍՀ Միության գործող Սահմանադրության և օրենքների վրա, որոնք ինքնավար կազմավորումներին և հավաքական բնակվող ազգային խմբերին իրավունք են տալիս ԽՍՀՄ-ից միութենական հանրապետության դուրս գալու դեպքում ինքնուրույն որոշելու իրենց պետական-իրավական կարգավիճակի հարցը՝ նշելով, որ Շահումյանի շրջանի տարածքը բռնի կերպով անջատվել է Լեռնային Ղարաբաղից և հայ ժողովրդի վերամիավորման ձգտումը համարելով բնականոն ու օրինական, միջազգային իրավունքի նորմերին համապատասխան,
ձգտելով հայ և ադրբեջանական ժողովուրդների միջև բարիդրացիական հարաբերությունների վերականգնմանը՝ միմյանց իրավունքների փոխադարձ հարգանքի հիման վրա, ուշադրության առնելով երկրում տիրող իրավիճակի բարդությունն ու հակասականությունը, ապագա միության, իշխանության և կառավարման միութենական կառույցների ճակատագրի անորոշությունը, հարգելով ու հետևելով մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի և տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքների մասին միջազգային համաձայնագրի, քաղաքացիական, քաղաքական և մշակութային իրավունքների մասին միջազգային համաձայնագրի սկզբունքներին և ակնկալելով միջազգային հանրության ըմբռնումն ու աջակցությունը՝

ՀՌՉԱԿՈՒՄ Է

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԿԱՅԻՍ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐԶԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՇՐՋԱՆԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ: ՀԱԿԻՐՃ՝ ԼՂՀ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունն օգտվում է այն լիազորություններից, որոնք հանրապետություններին տրամադրվում են ԽՍՀՄ Սահմանադրությամբ ու օրենսդրությամբ և իրեն իրավունք է վերապահում ինքնուրույն որոշելու իր պետական-իրավական կարգավիճակը՝ երկրի և հանրապետությունների ղեկավարության հետ քաղաքական խորհրդատվությունների և բանակցությունների հիման վրա:
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում մինչև ԼՂՀ Սահմանադրության և օրենքների ընդունումը գործում են ԽՍՀՄ Սահմանադրությունը և օրենսդրությունը, ինչպես նաև ներկայում գործող այլ օրենքներ, որոնք չեն հակասում սույն հռչակագրի նպատակներին ու սկզբունքներին և հանրապետության առանձնահատկություններին:
Ժողովրդական պատգամավորների Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների՝ բոլոր մակարդակների խորհուրդների պատգամավորների մասնակցությամբ համատեղ նստաշրջան

2-ը սեպտեմբերի, 1991 թ.
ք. Ստեփանակերտ

ԴՐՕՇԱԿ